



«ՀԿ ԿԵՆՏՐՈՆ» ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ  
ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ ՀԿ

# ՔՀԿ-ՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՖԻՆԱՆՍԱԿՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ. ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

Երևան, 2019թ.





*Սույն զեկույցը մշակվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության ղեկավարությամբ կոնսորցիումով գործարկվող «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրով տրամադրված ենթադրամաշնորհի շրջանակներում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Թափանցիկ և հասանելի հանրային միջոցներ» ծրագրի շրջանակներում:*

*Բովանդակության համար պատասխանատվություն է կրում «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի Եվրոպական միության տեսակետները:*



Ուսումնասիրությունն իրականացրել է՝

«ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ

Հասցե՝ Հայաստան, Վանաձոր, Խորենացի 6/1

Հեռախոս՝ 0322 43315, 091743315

Էլ. փոստ՝ [info@ngoc.am](mailto:info@ngoc.am), [ngoc.csd.ngo@gmail.com](mailto:ngoc.csd.ngo@gmail.com)

Ծրագրի ղեկավար՝

Արփինե Հակոբյան

Հիմնական հետազոտող՝

Անահիտ Ղարիբյան

Շահերի պաշտպանության մասնագետ՝

Սյուզան Հովսեփյան

### *Երախտիքի խոսք*

*«Թափանցիկ և հասանելի հանրային միջոցներ» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացրել է «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ն՝ ԵՄ ֆինանսական աջակցությամբ, Իրավաբանների հայկական ասոցիացիայի «Կառուցողական երկխոսության հանձնառություն» ծրագրի շրջանակներում:*

*Ծրագրի շրջանակներում կատարվել է մշատադիտարկում նախարարությունների կողմից 2017 թվականին (2016 թվականի դիտարկմամբ) ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տրամադրման ընթացակարգերի թափանցիկությունն ու հաշվետվողականությունը բացահայտելու նպատակով՝ ներկայացնելով ոլորտի զարգացմանն ուղղված առաջարկությունները:*

*Շնորհակալություն ենք հայտնում հետազոտության բոլոր մասնակիցներին՝ առանցքային տեղեկատուներին, նախարարության ներկայացուցիչներին, ՔՀԿ ներկայացուցիչներին և փորձագետներին, որոնց անտրտունջ մասնակցությունն ապահովեց թեմայի համակողմանի վերլուծությունը:*

*Շնորհակալություն ենք հայտնում նաև հետազոտության մեջ ներգրավված բոլոր այն անձանց, ովքեր նպաստել են դաշտային աշխատանքների իրականացմանն ու տվյալների հավաքագրմանը:*

## Բովանդակություն

Հապավումների ցանկ.....	4
Համառոտագիր .....	5
Հետազոտության ծրագիրը .....	6
Պետական բյուջեից ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման առանձնահատկությունները.....	14
ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման արդի հիմնախնդիրներն ու իրավական կարգավորումները:.....	14
ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրներն ու ցուցանիշները .....	19
Մշտադիտարկման ընթացիկ արդյունքները .....	32
Նախարարություններից ստացված պատասխաններն ու հարցումների արդյունքները.....	32
Հետազոտության արդյունքների վերլուծություն .....	36
ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգերը.....	36
Հանրային իրազեկման և ՔՀԿ-ների հետ արդյունավետ հաղորդակցության մեխանիզմները .....	43
Սոցիալական գործընկերության հեռանկարները. ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի միջև համագործակցության հնարավորություններն ու առկա դժվարությունները.....	46
Տարբեր գերատեսչություններում առկա իրավիճակի նկարագրություն .....	50
Կրթության և գիտության նախարարություն.....	50
Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն.....	54
Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն .....	57
Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն .....	67
Ֆինանսների նախարարություն.....	69
Սփյուռքի նախարարություն.....	69
ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն .....	71
Գյուղատնտեսության նախարարություն .....	71
Պաշտպանության նախարարություն.....	74
Մշակույթի նախարարություն .....	74
Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն.....	77
Առցանց հարցման տվյալների վերլուծություն .....	83
Առցանց հարցում նախարարություններից 2016-2017թթ. ֆինանսական աջակցություն ստացած կառույցների շրջանում (n=76).....	83
Առցանց հարցում այլ ՔՀԿ ներկայացուցիչների (n=84) շրջանում .....	87
Եզրափակիչ դրույթներ և առաջարկներ նախարարությունների կողմից ՔՀԿ-ներին հատկացվող ֆինանսական միջոցների արդյունավետ բաշխման նպատակով.....	92
ՀԱՎԵԼՎԱԾ.....	97

## Հապավումների ցանկ

ԱԱՀ	ավելացված արժեքի հարկ
ԱԳՆ	Արտաքին գործերի նախարարություն
ԱԻՆ	Արտակարգ իրավիճակների նախարարություն
ԱրՆ	Արդարադատության նախարարություն
ԱռՆ	Առողջապահության նախարարություն
ԱՍՀՆ	Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն
ԲԿԳ	Բաց կառավարման գործընկերություն
ԲՀ	բարեգործական հիմնադրամ
ԲՀԿ	բարեգործական հասարակական կազմակերպություն
ԲՆ	Բնապահպանության նախարարություն
ԲՈՒՀ	բարձրագույն ուսումնական հաստատություն
ԳԱՄԿ	գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոն
ԳՆ	Գյուղատնտեսության նախարարություն
ԵՀԿ	Երիտասարդական հասարակական կազմակերպություն
ԶԼՄ	զանգվածային լրատվության միջոց
ԶՈՒ	զինված ուժեր
ԷԵԲՊՆ	Էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն
ԻԱՄ	իրավաբանական անձանց միություն
ԾԻԳ	ծրագրերի իրականացման գրասենյակ
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
հզր	Հազար
ՀԿ	հասարակական կազմակերպություն
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՄԴ	Հիմնադրամ
վրդ	Միլիարդ
ՄՆ	Մշակույթի նախարարություն
ՄՀԿ	մարզական հասարակական կազմակերպություն
ՇՊ	շահերի պաշտպանություն
ՊԵԿ	Պետական եկամուտների կոմիտե
ՊՆ	Պաշտպանության նախարարություն
ՊՈԱԿ	պետական ոչ առևտրային կազմակերպություն
ՍԵՀՆ	Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն
ՄՆ	Սփյուռքի նախարարություն
ՄՊԸ	սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
ՏԶՆ	Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն
ՏԻՄ	տեղական ինքնակառավարման մարմին
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԿՏՏՆ	Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն
ՏՏ	տեղեկատվական տեխնոլոգիաներ
ՓԲԸ	փակ բաժնետիրական ընկերություն
ՔՀԿ	քաղաքացիական հասարակության կազմակերպություն/կառույց
ՖԽՔ	ֆոկլուս խմբային քննարկում
ՖՆ	Ֆինանսների նախարարություն

## Համառոտագիր

Այսօր մեր երկրում ՔՀԿ-ների ֆինանսավորման աղբյուրների ուսումնասիրությունն ու հիմնախնդիրների վերհանումը նոր ուղի են հարթում ոլորտի հետագա զարգացման, ՔՀԿ-ների կայունության ապահովման և հանրային միջոցների հասանելիության ապահովման հարցում: Պետության կողմից իրականացվող ծրագրերի արդյունավետության և հանրային քաղաքականության մշակման հարցում ՔՀԿ-ներն իրենց անմիջական ավանդն ունեն ոչ միայն տարաբնույթ ծրագրերի միջոցով պետության բեռի թեթևացման, այլև այդ ծրագրերը հասարակության բոլոր խմբերին առավել նպատակային ու հասանելի դարձնելու գործում:

Սույն հետազոտությունը նպատակ ունի ցույց տալու այն առանցքային խնդիրները, որոնք առկա են հանրային միջոցների բաշխման թափանցիկության, հասանելիության և հաշվետվողականության ապահովման ընթացքում: Մշտադիտարկմամբ կարևորել ենք նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական հատկացումների իրավական հիմքերի, դրանցում առկա բացերի ու պետական միջոցների բաշխման առանձնահատկությունների ուսումնասիրությունը: Մասնավորեցնելով խնդիրը՝ մշտադիտարկման առարկա են դարձել դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների, նվիրաբերությունների տրամադրման ընթացակարգերն ու դրանց թափանցիկությունը հետազոտվող ժամանակահատվածում (2017 թ.):

Հետազոտությամբ պարզվեց, որ մեզ հետաքրքրող ժամանակահատվածում նախարարությունները վերոգրյալ ֆինանսական հատկացումները մեծամասամբ տրամադրել են առանց մրցույթի: Բացի այդ, «Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին» և «Նվիրատվություն ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածներով հատկացվող գումարներն առավելապես տրամադրվել են պետական ՀՄԴ-ներին, ՄՀԿ-ներին, տարբեր միություններին և ծառայություններ մատուցող մի շարք այլ իրավաբանական անձանց, օրինակ՝ ԻԱՄ-ներին, ՍՊԸ-ներին, ՓԲԸ-ներին և այլն:

Իրապես հասարակական գործունեություն ծավալող կազմակերպություններին հատկացվող գումարներն ընդհանուրի համեմատ չնչին են եղել, իսկ դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերը, որոնք սահմանվել են նախարարությունների կողմից ոչ միայն չեն ապահովել մրցակցություն, այլև ՔՀԿ ներկայացուցիչների համար շատ դեպքերում մատչելի և հասանելի չեն եղել:

Ստեղծված իրավիճակի վերաբերյալ հավաքագրված փորձագիտական կարծիքները և հիմնավորումները զեկույցում ներկայացվել են յուրաքանչյուր նախարարության համար առանձին բաժիններում և եզրափակիչ առաջարկություններում:

## **Հետազոտության ծրագիրը**

### Հիմնախնդրի արդիականությունը

Սույն հիմնախնդրի ուսումնասիրության անհրաժեշտությունը պայմանավորված է նախորդ տարիներին նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տրամադրման ընթացակարգերի անհստակությամբ ու իրականացված ծրագրերի ցածր հաշվետվողականությամբ: Ընդ որում, հաշվետու ժամանակահատվածում (2017 թ.-ին, 2016 թ.-ի հետահայացով) ոլորտի կարգավորման իրավական մեխանիզմներն ու դրանց գործարկման կարգի վերաբերյալ դրույթները չեն ապահովել նախարարությունների կողմից հատկացված ֆինանսական միջոցների թափանցիկությունն ու հասանելիությունը ՔՀԿ ներկայացուցիչների համար: Հատկացվող ֆինանսական միջոցների տրամադրման ընթացակարգերն ու վարվող քաղաքականությունը չեն ապահովել հստակ, պարզ և մատչելի տեղեկատվությամբ ոլորտի այլ շահագիրգիր կողմերին ևս:

### Մշտադիտարկման նպատակը

Մշտադիտարկումը նպատակադրվել է նկարագրել նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության ձևերի տրամադրման ընթացակարգերն ու մեխանիզմները, ուսումնասիրել դրանց մատչելիությունն ու թափանցիկությունը հատկապես ՔՀԿ-ների համար:

### Մշտադիտարկման օբյեկտը

2016-2017թթ.-ին ՀՀ նախարարությունների կողմից դրամաշնորհային, սուբսիդիայի, նվիրատվության, նվիրաբերության կամ պատվիրակված ծառայությունների մատուցման պայմանագրերով ֆինանսական աջակցություն ստացած ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունները:

### Մշտադիտարկման առարկան

ՔՀԿ-ներին ՀՀ նախարարությունների կողմից ֆինանսական աջակցության ձևերի տրամադրման ընթացակարգերն ու մեխանիզմները:

Մշտադիտարկման մեթոդաբանությունն ու փուլերը

*Ժամանակացույցը*

<i>Փաստաթղթերի վերլուծություն</i>	մարտ-ապրիլ, 2019 թ.
<i>Գրավոր հարցումների փաստաթղթավորում</i>	մարտ, 2019 թ.
<i>Մշտադիտարկման մեթոդաբանության մշակում</i>	մարտ, 2019 թ.
<i>Ձեռք բերված տվյալների և առկա փաստաթղթերի ուսումնասիրություն</i>	մարտ-ապրիլ, 2019 թ.
<i>Տվյալների հավաքագրում տեղեկատվության տեղեկատվության աղբյուրներից (առցանց հարցումներ, խորացված փորձագետների և առանցքային տեղեկատուների շրջանում, ֆոկլուս խմբային քննարկումներ)</i>	ապրիլ, 2019 թ.
<i>Տվյալների մշակում և մուտքագրում</i>	ապրիլ 15-31, 2019 թ.
<i>Մշտադիտարկման գեկույցի կազմում</i>	ապրիլ 20-31, 2019 թ.
<i>Մշտադիտարկման արդյունքների հանրային քննարկում</i>	մայիս, 2019 թ.

**Տեղեկատվության հավաքագրման մեթոդներն ու աղբյուրները**

Մշտադիտարկման նպատակով և խնդիրներով սահմանված հարցերի շուրջ համակողմանի հետազոտություն անցկացնելու նպատակով ուսումնասիրվել են ինչպես որոշումներ կայացնողների, այնպես էլ առանցքային տեղեկատուների և դրամաշնորհ ստացած կազմակերպությունների ներկայացուցիչների կարծիքները: Ընտրված մեթոդների բազմազանությունն ապահովել է նախարարությունների կողմից ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգերի և գործող մեխանիզմների վերաբերյալ բովանդակալից տեղեկատվության ստացումը՝ հաշվետու ժամանակահատվածում առկա իրավիճակի նկարագրման և ոլորտի քաղաքականությանն առնչվող առաջարկությունների ներկայացման համար:

Մշտադիտարկման նպատակով և առարկայով պայմանավորված ընտրվել են քանակական և որակական հետազոտության ստորն ներկայացված մեթոդները:

**ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

*Մեթոդի նկարագրություն:* Ցանկացած հետազոտություն սկսվում է փաստաթղթերի վերլուծությունից: Այն թույլ է տալիս ծանոթանալ հետազոտության օբյեկտին, միևնույն ժամանակ մշակել հետազոտության նպատակներն ու խնդիրները: Փաստաթղթեր կարող են համարվել հիմնախնդրի վերաբերյալ արված հետազոտությունները և դրանց հիման վրա իրականացված վերլուծությունները, ոլորտի իրավական կարգավորումները, վիճակագրական նյութերը, հաշվետվությունները, ՁԼՄ-ների տեղեկատվական հաղորդումները, տեսահոլովակները և այլն:

Ուսումնասիրված փաստաթղթերն ընդգրկել են 2017 թ. (նաև 2016 թ.) նախարարությունների կողմից ոչ պետական ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու նվիրաբերությունների տրամադրման մասին արված հարցումների պաշտոնական պատասխանները, նախարարությունների կողմից դրանց տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ հետազոտությունները, կառավարության որոշումները, պաշտոնական հրամանները, իրավական և



օրենսդրական փաստաթղթերը, մամուլի հրապարակումներն ու առնչվող այլ նյութեր:

Զեկույցի պատրաստման ընթացքում հիմնախնդրին առնչվող անհրաժեշտ տեղեկատվությունը լրամշակվել և համալրվել է հետևյալ սկզբնաղբյուրներով՝

1. «Ոչ կառավարական կազմակերպություններին պետության կողմից սոցիալական ծառայությունների պատվիրակման ինստիտուտը Հայաստանում»: Զեկույց հայերենով. «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ, 2006 թ.:
2. «Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում»: Զեկույց հայերենով. «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ, 2012 թ.:
3. [Անկախ հաշվետվական մեխանիզմ \(ԱՀՄ\). Հայաստանի միջանկյալ զեկույց 2016-2018. Տաթևիկ Մարգարյան:](#)
4. [Անկախ հաշվետվական մեխանիզմ \(ԱՀՄ\). Հայաստանի ամփոփիչ զեկույց 2016-2018. Տաթևիկ Մարգարյան:](#)
5. [ՀՀ Երիտասարդական պետական քաղաքականության 2013-2017 ռազմավարության մոնիթորինգ և գնահատման հաշվետվություն, Երիտասարդական ուսումնասիրությունների ինստիտուտ, Եր., 2016 թ.](#)
6. ՀՀ ֆինանսների նախարարության [«Ինտերակտիվ բյուջե»](#) (2017 թ.)
7. ՀՀ կառավարության որոշումներ, իրավական և օրենսդրական կարգավորումներ, ՀՀ օրենսդրական փոփոխություններ և գործող օրենքներ:
8. [Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքս: Զեկույց հայերենով: Քաղաքացիական զարգացման և համագործակցության հիմնադրամ:](#) (2017 թ.)
9. Նախարարություններին ուղարկված հարցումների պատասխանները, դրանց ուղեկցող նյութերն ու փաստաթղթերը, իրավական կարգավորումներն ու հիմնախնդրի ուսումնասիրության նպատակով արված այլ հետազոտություններ:

Կառավարության/նախարարությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու ծառայությունների պատվիրակման կարգի և իրավական հիմքերի ուսումնասիրության համար որպես հիմնական մեթոդ ընտրվել է փաստաթղթերի վերլուծության մեթոդը, որն ուղեկցվել է տվյալների հավաքագրման որակական ու քանակական մեթոդների համադրմամբ (ուսումնասիրվել են ինչպես այդ ոլորտին առնչվող համացանցային տվյալները, այնպես էլ օրենսդրական ակտերի, հրամանագրերի և որոշումների փաստաթղթերը, դրանց կանոնակարգերն ու հաշվետվությունները):

Բոլոր նախարարությունների կողմից 2016-2017թթ. դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների, նվիրաբերությունների և ծառայությունների պատվիրակման համար գոյություն ունեցող իրավական հիմքերը ստորև նշված փաստաթղթերն են՝

1. «ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 24.12.2003 թ.-ի N 1937-Ն որոշում:
2. «Պետական դրամաշնորհների հաշվառման և հաշվետվությունների կազմման ու հրապարակման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 16.01.2003 թ.-ի N 32-Ն որոշում:
3. «ՀՀ պետական բյուջեից հատկացված միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր (ճանաչվել է ուժը կորցրած 05.04.2018):

Փաստաթղթերը ենթարկվել են բովանդակային (որակական) և ձևայնացված (քանակական) վերլուծության: Զեկույցում վերջիններիս վերաբերյալ տեղեկատվությունը կներկայացվի տողատակերում՝ համապատասխան հղումներով:

## **ՈՐԱԿԱԿԱՆ ԽՈՐԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՆԵՐ**

***Մեթոդի նկարագրություն:** Որակական հարցազրույցների միջոցով հնարավոր է հետազոտել սոցիալ-տնտեսական, քաղաքական, մշակութային, միջավայրային փոփոխություններն ու երևույթների որակական տեղաշարժերը, ինչպես նաև գնահատել իրականացված սոցիալական ծրագրերի արդյունավետությունը: Այս մեթոդի միջոցով հնարավոր է հասկանալ մարդկանց սոցիալական փորձը և վերակառուցել իրադարձությունները, որոնց հետազոտողներն անմիջական մասնակցություն չեն ունեցել: Որակական հարցազրույցների տեսակներից՝ խորին հարցազրույցները թույլ են տալիս ստանալ անձանց փորձառության խորը և բովանդակալից տեղեկատվություն: Հարցազրույցի այս տեսակը ճկուն է և դինամիկ, հնարավորություն է տալիս հետաքրքրող հարցերի շրջանակը ընդլայնել և խորացնել հարցազրույցի ընթացքում՝ շեղվելով հարցերի մշակված հաջորդականությունից:*

Մշտադիտարկման ընթացքում որակական հարցազրույցներ են անցկացվել ոլորտի փորձագետների և առանցքային տեղեկատուների հետ: Թե՛ փորձագետները, թե՛ առանցքային տեղեկատուներն ընտրվել են ձևակույտի մեթոդով: Որակական մեթոդների կիրառման նպատակն է եղել հասկանալ, թե նախարարություններից ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման գործընթացում ինչ սկզբունքներ, ոչ ֆորմալ կանոնակարգեր և գործոններ են ազդել:

Ընդհանուր առմամբ անցկացվել է 19 հարցազրույց:

## **ՖՈՎՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ**

***Մեթոդի նկարագրություն:** ՖԽՔ մեթոդը կարելի է օգտագործել ցանկացած տեսակի հետազոտություններում, սակայն այն ավելի նպատակահարմար է կիրառել հատկապես նկարագրողական և հետախուզական հետազոտություններում, երբ հետազոտվող խնդրի վերաբերյալ տեղեկատվությունը սուղ է: Այս մեթոդը*

կիրառելի է նաև քաղաքականության հետազոտություններում, որտեղ մասնակիցները խմբային քննարկման ընթացքում գնահատում են այս կամ քաղաքականության ազդեցությունն ու արդյունավետությունը:

Մշտադիտարկման ընթացքում անցկացվել է 2 ՖԽՔ ոչ պետական, ոչ առևտրային (քաղաքացիական հասարակության) կազմակերպությունների ներկայացուցիչների շրջանում:

## ԱՌՑԱՆՑ ՀԱՐՑՈՒՄՆԵՐ

**Մեթոդի նկարագրություն:** Առցանց հարցումներն իրականացվում են, երբ հետազոտության համար թիրախային խմբերն անհասանելի են ինչ-ինչ պատճառներով: Այսինքն՝ հնարավոր չէ նրանց հետ անցկացնել դեմ առ դեմ հարցազրույցներ, օրինակ, ֆինանսական միջոցների կամ ժամանակի սղության պատճառով:

Որակական բնութագրիչների քանակական միտումները պարզելու նպատակով մենք տեղին ենք համարել անցկացնել առցանց հարցումներ ՔՀԿ ներկայացուցիչների շրջանում, ակնկալելով հասկանալ փորձագետների և առանցքային տեղեկատուների ներկայացրած խնդիրների տարածականությունը: Ընդհանուր առմամբ լրացվել է 159 առցանց հարցաթերթիկ, որոնցից մի մասը՝ հեռախոսային հարցման միջոցով:

Մշակվել է առցանց հարցման 2 հարցաթերթ: 2016-2017 թթ. նախարարությունների կողմից ֆինանսական աջակցություն ստացած ՔՀԿ-ների շրջանում հավանականային ընտրանքով լրացվել է 76 հարցաթերթ, իսկ տարերային ընտրանքով այլ ՔՀԿ-ների շրջանում լրացվել է 84 հարցաթերթ:

### Հետազոտության ընտրանք



160 շահառուների շրջանում (76-ը լրացվել է 2016-2017 թթ. նախարարություններից ֆինանսական աջակցություն ստացած ՔՀԿ-ների շրջանում, 84-ը՝ այլ ՔՀԿ ներկայացուցիչների)

Առցանց հարցումներ



Հարցազրույցներ առանցքային տեղեկատուների (թվով 9) և փորձագետների (թվով 10) շրջանում մինչև տեղեկատվության հագեցման աստիճանը:

Որակական խորին հարցազրույցներ



2 Ֆոկուս խմբային քննարկում շահառուների շրջանում:

Ֆոկուս խմբային քննարկումներ

Տեղեկատվության հավաքագրման համար մշակվել է 4 հետազոտական գործիք՝ ֆոկուս խմբային քննարկման ուղեցույց, առանցքային տեղեկատուների և փորձագիտական հարցազրույցների հարցաշար և առցանց հարցման 2 կիսաձևայնացված հարցաթերթ:

Առաջադրված խնդիրները

- ❖ Ուսումնասիրել 2017 թ.-ին (2016 թ.-ի դիտարկմամբ) նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տրամադրման ընթացակարգերն ու քաղաքականությունը:
- ❖ Ուսումնասիրել հիմնախնդրին առնչվող մասնագիտական, օրենսդրական, իրավական փաստաթղթերն ու տեղեկատվական դաշտը:
- ❖ Պարզել ոլորտը կարգավորող իրավական, օրենսդրական ակտերի կենսունակությունը:
- ❖ Պարզել նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տրամադրման վերաբերյալ շահառուների իրազեկվածությունը, տեղեկատվության ստացման/տարածման հիմնական աղբյուրները, հետադարձ կապի ապահովման մեխանիզմները:
- ❖ Պարզել ըստ ոլորտների և մարզերի ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների տեսքով բյուջետային հատկացումների արդյունավետությունն ու առանձնահատկությունները:
- ❖ Պարզել ոլորտի զարգացման առանցքային դերակատարներին, քաղաքականություն մշակողներին, շահագրգիռ կողմերին, ինչպես նաև նրանց միջև ձևավորված համագործակցային դաշտի առանձնահատկությունները:
- ❖ Ուսումնասիրել շահագրգիռ կողմերի միջև ստեղծված հաղորդակցության հարթակները և դրանց կենսունակությունը:
- ❖ Բացահայտել շահագրգիռ կողմերի համագործակցության եզրերը, համագործակցության ընթացքում հնարավոր դժվարությունները, խոչընդոտները, ինչպես նաև ծագած դժվարությունների հաղթահարման ուղիները:
- ❖ Դուրս բերել դրամաշնորհների տրամադրման կարգի ինստիտուցիոնալ խնդիրներն ու դրանց հաղթահարման մեխանիզմները:
- ❖ Ուսումնասիրել միջազգային (հաջողված) փորձը և ներկայացնել առաջարկություններ գոյություն ունեցող քաղաքականության բացերի վերացման նպատակով:

Հիպոթեզ 1

Կառավարությունը չունի հասարակական սեկտորին (ՔՀԿ-ներին) ֆինանսական աջակցության տրամադրման համար հետևողական քաղաքականություն, հստակ և թափանցիկ ընթացակարգեր, որով կորոշվեն, թե ինչպիսի ծրագրեր են ֆինանսավորվելու, ինչ մեխանիզմով և ինչքան գումար է հատկացվելու ՀԿ-ներին և/կամ ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին:

## Հիպոթեզ 2

Պետական բյուջեից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական հատկացումների մասին տեղեկատվությունը հասանելի և հստակ չէ շահառու խմբերից մեծամասնության համար, որի արդյունքում չի ապահովվում մրցակցային դաշտ և նվազում է դրամաշնորհների տրամադրման արդյունավետությունը՝ տեղ թողնելով կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների համար:

## Հիմնական հասկացությունների սահմանում

**Սուբսիդիա<sup>1</sup>** - պետության հանձնարարությամբ և որոշված գնով կազմակերպության կողմից որպես նվազագույն շահավետ գնից ցածր գնով ապրանքների արտադրության, արտահանման, ներմուծման, աշխատանքների կատարման և ծառայությունների մատուցման արդյունքում այդ կազմակերպության կրած վնասի կամ դրա մի մասի փոխհատուցումն է: Ընդ որում, սուբսիդիան ուղղված չէ կազմակերպության համար կապիտալ ակտիվների ձեռքբերմանն ու հիմնական ֆոնդերի կամ դրամագլխի ավելացմանը և կազմակերպության ընթացիկ գործունեության արդյունքում գոյացող եկամուտների հավելում է:

**Դրամաշնորհ<sup>2</sup>** - տնտեսության որևէ ճյուղի կամ գործունեության որևէ տեսակի խթանման նպատակով բյուջեից կազմակերպությանն իր կանոնադրական խնդիրների իրականացման նպատակով անհատույց և անվերադարձ տրամադրվող դրամական հատկացում: Ելնելով տրամադրման ձևից և պայմաններից, դրամաշնորհները կարող են լինել ապրանքային, ոչ ապրանքային, պայմանական և ոչ պայմանական.

ա) ապրանքային դրամաշնորհ է համարվում ոչ դրամային (նյութական կամ ոչ նյութական ակտիվներ) ձևով տրամադրված դրամաշնորհը,

բ) ոչ ապրանքային դրամաշնորհ է համարվում դրամային ձևով տրամադրված դրամաշնորհը,

<sup>1</sup>«ՀՀ պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հաստատման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 24.12.2003 թ.-ի N 1937-Ն որոշում:

<sup>2</sup> Նույն տեղում:

զ) պայմանական դրամաշնորհ է համարվում այն դրամաշնորհը, որի տրամադրման և հետագա օգտագործման համար պայմանագրերով սահմանվում են որոշակի պայմաններ,

դ) առանց պայմանի դրամաշնորհ է համարվում այն դրամաշնորհը, որի տրամադրման և օգտագործման համար պայմանագրով չեն սահմանվում որոշակի նախապայմաններ:

**Նվիրատվություն<sup>3</sup>** - Նվիրատվության պայմանագրով մի կողմը (նվիրատուն) մյուս կողմի (նվիրառուի) սեփականությանն անհատույց հանձնում է կամ պարտավորվում է հանձնել գույք կա՛մ իրեն, կա՛մ երրորդ անձին ուղղված գույքային իրավունք (պահանջ), կամ ազատում է, կամ պարտավորվում է նրան ազատել իր կամ երրորդ անձի հանդեպ ունեցած գույքային պարտավորությունից<sup>4</sup>:

**Նվիրաբերություն<sup>5</sup>** է ճանաչվում գույքի կամ իրավունքի նվիրատվությունը հանրօգուտ նպատակներով: Նվիրաբերություններ կարող են արվել քաղաքացիներին, բուժական, դաստիարակչական հիմնարկներին, սոցիալական պաշտպանության ու նույնանման այլ հաստատություններին, բարեգործական, գիտական և ուսումնական հաստատություններին, հիմնադրամներին, թանգարաններին ու մշակույթի այլ հաստատություններին, հասարակական և կրոնական կազմակերպություններին, ինչպես նաև պետությանն ու համայնքներին: Ընդ որում, նվիրաբերությունն ընդունելու համար որևէ մեկի թույլտվություն կամ համաձայնություն չի պահանջվում: Նվիրաբերողի կողմից գույքի նվիրաբերությունը քաղաքացուն պետք է պայմանավորված լինի, իսկ իրավաբանական անձանց՝ կարող է պայմանավորված լինել այն որոշակի նշանակությամբ օգտագործելով: Այդպիսի պայմանի բացակայության դեպքում քաղաքացուն կատարված նվիրաբերությունը համարվում է սովորական նվիրատվություն: Մնացած դեպքերում նվիրաբերված գույքը նվիրառուն պետք է օգտագործի դրա նշանակությամբ համապատասխան:

**Քաղաքացիական հասարակության կազմակերպություն (ՔՀԿ)** - Համաշխարհային Բանկի կողմից ՔՀԿ-ների առավել կիրառական սահմանման համաձայն ՔՀԿ-ն ասպարեզ է, որը գտնվում է ընտանիքից, պետությունից և շուկայից դուրս և ստեղծվում է անհատական և հավաքական գործողությունների, կազմակերպությունների և հաստատությունների կողմից՝ ընդհանուր շահերի առաջխաղացման նպատակով: ՔՀԿ-ների տակ հասկացվում են ոչ կառավարական, շահույթ չհետապնդող ՀԿ-ները, ՀՄԴ-ները, ԻԱՄ-ները,

<sup>3</sup> [ՀՀ քաղաքացիական օրենսգիրք. գլուխ 34](#)

<sup>4</sup> \*\*Հասարակական կազմակերպության պարագայում ավելի ճիշտ կլինի խոսել ոչ թե «նվիրատվություն», այլ «նվիրաբերություն» հասկացության մասին.

<sup>5</sup> Նույն տեղում:

ստեղծագործական միավորումները, բարեգործական կազմակերպությունները, քաղաքացիական շարժումներն ու ակտիվության ձևերը:

**Հասարակական կազմակերպություն (ՀԿ)**<sup>6</sup> - շահույթ ստանալու նպատակ չհետապնդող և ստացված շահույթը մասնակիցների միջև չբաշխող (ոչ առևտրային) կազմակերպության՝ հասարակական միավորման, տեսակ, որում իրենց շահերի ընդհանրության հիման վրա, օրենքով սահմանված կարգով, միավորվել են ֆիզիկական անձինք՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, օտարերկրյա քաղաքացիները, քաղաքացիություն չունեցող անձինք՝ իրենց ոչ կրոնական հոգևոր կամ ոչ նյութական այլ պահանջմունքները բավարարելու, իրենց և այլոց իրավունքներն ու շահերը պաշտպանելու, հասարակությանը, նրա առանձին խմբերին նյութական և ոչ նյութական աջակցություն ապահովելու, հանրօգուտ այլ գործունեություն իրականացնելու նպատակներով:

**Հիմնադրամ**<sup>7</sup> - քաղաքացիների և (կամ) իրավաբանական անձանց կամավոր գույքային վճարների հիման վրա ստեղծված և անդամություն չունեցող ոչ առևտրային կազմակերպություն, որը հետապնդում է սոցիալական, բարեգործական, մշակութային, կրթական, գիտական, առողջապահական, բնապահպանական և (կամ) այլ հանրօգուտ նպատակներ:

**ԻԱՄ**<sup>8</sup> – իրավաբանական անձանց միություններ:

### **Պետական բյուջեից ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման առանձնահատկությունները<sup>9</sup>**

**ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման արդի հիմնախնդիրներն ու իրավական կարգավորումները:**

Մինչ օրս ՔՀԿ-ների գոյատևման և գործունեության ֆինանսավորման հիմնական աղբյուրը Հայաստանում շարունակում են մնալ դրամաշնորհները: ՔՀԿ-ների ծրագրերի մեծամասնությունն իրականացվում է միջազգային դոնոր կազմակերպությունների կողմից տրամադրվող դրամաշնորհների օգնությամբ: Տեղական աղբյուրներից, մասնավորապես պետական բյուջեի միջոցներից, ՔՀԿ-ներին տրվում են թե՛ դրամաշնորհներ, թե՛ սուբսիդիաներ: Սակայն այդ գործընթացն աչքի է ընկնում համակարգված քաղաքականության, հստակ և

<sup>6</sup> ՀՀ օրենքը հասարակական կազմակերպությունների մասին ընդունված 2001թ. դեկտեմբերի 4-ին:

<sup>7</sup> ՀՀ օրենքը հիմնադրամների մասին:

<sup>8</sup> Քաղաքացիական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքում՝ ընդունված 2016թ. դեկտեմբերի 16-ին, նշվում է, որ ԻԱՄ-ները պարտավոր են վերակազմավորվել հասարակական կազմակերպության օրենքի ուժի մեջ մտնելու պահից երկու տարվա ընթացքում:

<sup>9</sup> \*Չեկոյցի սույն բաժնի իրավական կարգավորումներին վերաբերող տեղեկատվությունը մշակվել է «ՀԿ կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ նախագահ Արփինե Հակոբյանի կողմից:

թափանցիկ ընթացակարգերի բացակայությամբ, իրականացվող ծրագրերի վերաբերյալ տեղեկատվության անմատչելիությամբ:

ՀՀ-ում ՔՀԿ-ների զարգացման ներկա փուլի հիմնական խնդիրներից են ֆինանսական վիճակի անկայունությունը, կախվածությունն արտասահմանյան դոնոր կազմակերպություններից և տեղական աղբյուրներից միջոցների հայթհայթման մեխանիզմների սղությունն ու անհասանելիությունը:

Ձոնս Հոփքինսի համալսարանի մասնագետների կողմից աշխարհի 36 երկրներում անցկացված ուսումնասիրության տվյալներով ՔՀԿ-ների գործունեության ֆինանսավորման երեք հիմնական աղբյուրներ գոյություն ունեն. ծառայությունների դիմաց (այդ թվում ձեռնարկատիրական ակտիվությունից) ստացվող վճարները՝ 53%, պետական ֆինանսավորումը՝ 34% և նվիրատվությունները՝ 12%:

ՀՀ-ում ՀԿ-ների ֆինանսական կենսունակության խնդիրների լուծման գործում կարևոր է միջազգային առաջավոր փորձի և ազգային առանձնահատկությունների հիման վրա հեռանկարային քայլերի մշակումը:

ՀԿ ոլորտի արդյունավետ զարգացման առաջնահերթ քայլերն են՝ Ա) կառավարության կողմից ՀԿ-ներին հատկացվող դրամաշնորհների ու ֆինանսական աջակցության գործընթացների համակարգում-կանոնակարգումը, այդ նպատակով համապատասխան քաղաքականության և կառուցակարգերի ձևավորումը:

Բ) Հասարակական կարևորություն ունեցող որոշ ծրագրեր (սոցիալական աջակցության, կրթական, հետազոտական, իրականացվող քաղաքականության կամ ծրագրերի վերահսկողության, մշտադիտարկման և այլ ծրագրեր) ՏԻՄ և պետական մարմինների կողմից ՀԿ-ներին պատվիրակելու ավանդույթի ձևավորումը:

Գ) Ոչ կառավարական կազմակերպություններին տրամադրվող պետական դրամաշնորհների առցանց տվյալների բանկի ստեղծումը, ինչպես նաև մշտադիտարկման գործիքակազմի մշակումը պետական բյուջեից կատարվող ծախսերի հաշվետվողականության բարձրացման նպատակով:

Դ) Արևելաեվրոպական երկրների (Հունգարիա, Սլովակիա, Լիտվա, Լեհաստան, Ռումինիա) պրակտիկայում տեղ գտած «1%-ի մարդասիրական օրենքի» համանմանությամբ հարկատուների եկամտահարկից որոշակի մասհանմամբ ՀԿ-ներին ֆինանսական աջակցության կառուցակարգերի ձևավորման հարցի հետազոտումը:

Ե) ՀԿ-ներին անմիջական տնտեսական գործունեություն իրականացնելու, ներդրումներ կատարելու իրավունք տրամադրելու նպատակահարմարության հարցի ուսումնասիրությունը:



Թվարկված առաջնահերթությունները, մեր կարծիքով, այն անհրաժեշտ գործողություններն են, որոնք կարող են ստեղծված իրավիճակում ապահովել ոլորտում առկա բացերի ու հիմնախնդիրների լուծումը: Մինևույն ժամանակ, զեկույցի հաջորդ բաժիններում կարող եք գտնել առավել գործնական և առարկայական առաջարկներ, որոնք բարձրացվել են ՔՀԿ ներկայացուցիչների կողմից:

Ըստ էության, մեր կողմից ընտրված ժամանակահատվածը, այն է՝ 2017 թ. (2016 թ.-ի հետահայացով) պայմանավորված է նաև կառավարության կողմից Բաց կառավարման գործընկերության (ԲԿԳ) հանձնառությունների մշակման և դրանց գործարկման մեկնարկով: Այս առումով, հետաքրքիր է հասկանալ, թե որքանով են հանձնառություններում տեղ գտած դրույթները կյանքի կոչվում և ինչ բացթողումներ կան:

Հարկ է նշել, որ 2017 թ. ՔՀԿ ոլորտի իրավական կարգավորումները ևս մեծ ազդեցություն են ունեցել պետական բյուջեից ֆինանսական հատկացումների ընթացակարգերի սահմանման վրա: Մասնավորապես, 2016 թ. դեկտեմբերին ընդունվեցին ՔՀԿ-ների գործունեությունը կարգավորող «[Հասարակական կազմակերպությունների մասին](#)» և «[Հիմնադրամների մասին](#)» օրենքների փոփոխությունները, իսկ դրանց իրավական ակտերն ուժի մեջ մտան 2017 թ. փետրվարին: Նոր օրենսդրությամբ ՔՀԿ-ների վերահսկումը տեղի է ունենում ՀՀ ՊԵԿ-ի կողմից: Մինչ այդ ՀՀ ԱրՆ-ն էր զբաղվում ՔՀԿ-ների գործունեության իրավական համապատասխանությամբ, իսկ ՊԵԿ-ը պատասխանատու էր միայն հարկային հարցերի համար: Նոր օրենսդրության իրավական ակտերով ՀԿ-ները պարտավոր են ներկայացնել հաշվետվություններ յուրաքանչյուր տարվա կտրվածքով: 2017 թ. օգոստոսին Պետական Ռեգիստրն իր կայքում հրապարակել էր այն կազմակերպությունների ցանկը, որոնք վերջին չորս տարիների ընթացքում հաշվետվություն չեն ներկայացրել և հայտնվել են լուծարման վտանգի առաջ: «Հասարակական կազմակերպությունների մասին» օրենքի համաձայն՝ պետական բյուջեից ֆինանսավորվող ՀԿ-ները պետք է 2017 թ. տարեկան հաշվետվությունները հրապարակեին մինչև 2018թ. մայիս ամիսը, իսկ ՀՄԴ-ները նոր օրենքի համաձայն՝ պարտավոր են ներկայացնել տարեկան ֆինանսական հաշվետվություններ: Ըստ օրենքի՝ ՔՀԿ-ները ազատվում են նաև դրամաշնորհների և նվիրատվությունների հարկերից, սակայն ստացված եկամուտներից նրանք պետք է վճարեն շահութահարկ, ինչպես նաև 20% ԱԱՀ, եթե ընդհանուր տարեկան շրջանառությունը (սահմանված բոլոր տեսակի գործունեության տեսակների եկամուտը) գերազանցի 58.35 մլն դրամը<sup>10</sup>:

Կառավարության որոշումներով բոլոր նախարարությունները 2016 թ. հիմնել են հասարակական խորհուրդներ, որոնք ներառում են նաև ՔՀԿ-ներին:

10

Հասարակական խորհուրդները 2017 թ.-ին կարողացել են գործող ՔՀԿ-ների շրջանում հանրային իրազեկում իրականացնել և որոշակիորեն ներգրավել այդ գործընթացում՝ ներկայացնելով նաև հանրային քաղաքականություն ձևավորելու հնարավորությունների մասին<sup>11</sup>:

Չնայած Հայաստանում գրանցված ՔՀԿ-ների մեծ մասն ուսումնասիրությունների համաձայն պասիվ են<sup>12</sup>, այդուհանդերձ տարեցտարի ավելանում է ՔՀԿ-ների թիվը: Ըստ ՀՀ ԱՆ տվյալների, 03.10.2017 թ. դրությամբ Հայաստանում գրանցված է եղել 4782 ՀԿ, 1119 ՀՄԴ և 317 ԻԱՄ<sup>13</sup>, իսկ 2016 թ. դեկտեմբերի դրությամբ գրանցված է եղել 4644 ՀԿ, 1073 ՀՄԴ և 219 ԻԱՄ<sup>14</sup>: Ընդ որում, կան շատ ՀԿ-ներ և ՀՄԴ-ներ, որոնք ստեղծվել են պետության, պետական պաշտոնյաների կամ հայտնի գործիչների կողմից, որոնց ծրագրերը պարբերաբար ֆինանսավորվել են: ՀԿ-ները թեև չեն կարող ստեղծվել պետության կողմից, մեր իրականությունում կան այնպիսիք, որոնք ստեղծվել են պետական այս կամ այն ծրագրի իրականացման համար<sup>15</sup>: ՀՄԴ-ներն այս առումով կարող են ստեղծվել թե՛ պետության, թե՛ անհատների կողմից: Տվյալ պարագայում, որպեսզի հնարավոր լինի տարանջատել պետական և ոչ պետական ՀՄԴ-ները միմյանցից, պետք է պարզել հիմնադիրներին: Այսպես, եթե ՀՄԴ-ն ստեղծվել է որևէ պետական կառույցի կամ պաշտոնյայի կողմից, ապա պետությունը պարտավորություններ ունի որոշակի ֆինանսական աջակցություն տրամադրել: Սակայն ներկայումս, պայմանավորված նախարարություններում դրամաշնորհների տրամադրման կարգի փոփոխությամբ, մրցույթների անցկացումը որոշակի ռիսկեր է ստեղծել պետական ՀՄԴ-ների համար, որոնք ևս պետք է մրցույթով ֆինանսավորվեն, ինչը մեծապես ձևական բնույթ է կրում, քանի որ հնարավոր չէ դադարեցնել պետական ծրագրեր իրականացնող ՀՄԴ-ների ֆինանսավորումը (չնայած շատ դեպքերում այն կարող է դադարեցվել մինչև մրցույթի արդյունքների հրապարակումը):

*«Նույն Լույս հիմնադրամը, որը կրթաթոշակներ էր տրամադրում, կրկին պետության միջոցով էր աշխատում, այսինքն՝ արտուրդ է, որ այստեղ մրցույթ հայտարարվի, քանի որ հիմնադրամը հատուկ հենց այդ նպատակով է ստեղծվել»:* (փորձագետ)

<sup>11</sup> [Հայաստանի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների կայունության ինդեքսը 2017 թ. համար:](#)

<sup>12</sup> Մեր ուսումնասիրության արդյունքում փորձել ենք կապ հաստատել 2017 թ. պետական բյուջեից ֆինանսական աջակցություն ստացած բոլոր ՔՀԿ ներկայացուցիչների հետ, սակայն դրանց միայն կեսն է հասանելի կամ շարունակում իր գործունեությունը:

<sup>13</sup> [ՀՀ ԱՆ Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալությունում գրանցված կազմակերպությունների վիճակագրությունը՝ 03.10.2017թ. դրությամբ:](#)

<sup>14</sup> [Նույն տեղում:](#)

<sup>15</sup> \*Օրինակ՝ զեկույցում ավելի ուշ հանդիպող՝ «Հայաստանի երիտասարդական» ՀՄԴ-ն, «Պաշտպանամարզատեխնիկական /ՊՄՏ/ օդանավորողների և տիեզերագնացների դպրոց ՀԿ-ն, որը համագործակցում է ՀՀ ՊՆ-ի հետ:

Իրավական կարգավորումներում ևս պարզ չէ, թե ինչպես է որոշվում ՔՀԿ-ների հետ կնքվող պայմանագրի տեսակը, այսինքն՝ պայմանագրով սահմանվում է դրամաշնորհ, նվիրատվություն, նվիրաբերություն, սուբսիդիա, թե ծառայությունների պատվիրակում: Այս ամենը ևս տեղի է ունենում առանց կանոնակարգման և հստակեցման: Գոյություն չունի հստակ մեխանիզմ, որով պարզ կլինի, թե որ դեպքերում ՔՀԿ-ների հետ կնքվող պայմանագիրը ինչ սկզբունքով պետք է տրվի:

ՔՀԿ-ների գործունեության թափանցիկությունը ևս խնդրահարույց է, քանի որ գրանցված ՔՀԿ-ները սովորաբար հետևում են դոնորների կողմից ներկայացված հաշվետվության պահանջներին և, որպես կանոն, անհրաժեշտ չեն համարում տեղական կամ միջազգային դոնորներից ստացված միջոցների օգտագործման մասին հաշվետվություններ հրապարակել: Բացի այդ, ՔՀԿ-ների տեղական ֆինանսավորման աղբյուրները սահմանափակ են, որի պատճառով առավել խոշոր ՔՀԿ-ները օգտվում են օտարերկրյա նվիրատուների դրամաշնորհներից, ինչպես նաև հանրային դրամահավաքի հնարավորությունից: Իսկ այն ՔՀԿ-ները, որոնք պետական սուբսիդիաներ են ցանկանում ստանալ, նախապես գրանցվում են պետական բյուջեում: Դրամաշնորհային մրցույթներին դիմելիս ՀՄԴ-ների և ՀԿ-ների կանոնադրական նպատակները անպայմանորեն պետք է համապատասխանեն ծրագրերի բովանդակային բաղադրիչներին:

Սույն հետազոտությանը մասնակցած փորձագետների և առանցքային տեղեկատուների մեծ մասի համոզմամբ կառավարությունը դեռևս չունի հասարակական սեկտորին ֆինանսական աջակցության տրամադրման համար հետևողական քաղաքականություն, հստակ և թափանցիկ ընթացակարգեր, որով կորոշվի, թե ինչպիսի ծրագրեր են ֆինանսավորվելու, ինչ մեխանիզմով և ինչքան գումար է հատկացվելու ՔՀԿ-ներին: Բացի այդ, կատարվող գործընթացների իրականացման մասին տեղեկատվությունը հասանելի չէ հանրությանը, ինչը հնարավորություն չի տալիս եզրակացություններ անել դրամաշնորհների տրամադրման արդյունավետության վերաբերյալ՝ տեղ թողնելով կոռուպցիոն ռիսկերի և չարաշահումների համար: Մինևույն ժամանակ պարզ չէ, թե ինչպես են որոշվում ՔՀԿ-ների հետ սուբսիդիայի, նվիրատվության, նվիրաբերության կամ դրամաշնորհների պայմանագրերի կնքման նպատակարհարմարությունն ու կարգը:

Այսպիսով, ըստ փորձագետների, նախարարությունների բյուջեում պետք է լինի հստակ տող ՔՀԿ-ներին դրամաշնորհ տրամադրելու մասին՝ *«աջակցություն քաղհասարակության կառույցներին»* անվանմամբ, որպեզի հաջորդող տարվա համար, երբ նախարարությունը բյուջետային հայտ է ներկայացնում ֆինանսների նախարարությանը գումար ստանալու նպատակով, նա իր բյուջետային հայտի մեջ

համապատասխան տողով ֆինանսական հատկացում ստանա և արդյունքում պարզ լինի, թե այդ գումարը ինչ նպատակով է ծախսվել:

**ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման աղբյուրներն ու ցուցանիշները**

Ընդհանուր առմամբ վերլուծելով ՀՀ բյուջեի մասին օրենքում պլանավորված ֆինանսական միջոցների հատկացումները «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» տողով, ֆինանսական ցուցանիշների նկատելի փոփոխություններ կտեսնենք (տես աղյուսակ 1): Ընդ որում, այս տողով հատկացող գումարների մեջ ծախսերի հիմնական մասը ուղղվում է «Աջակցություն կուսակցությունների դաշինքներին» ծրագրով նախատեսված միջոցառումների վրա. մասնավորապես 2019 թ. այդ ծրագրով պլանավորված հատկացումը կազմել է 103,538.7 հզր դրամ:

**Աղյուսակ 1. ՀՀ բյուջեի մասին օրենքներում պլանավորված ֆինանսական միջոցների հատկացումները «Քաղաքական կուսակցություններ, հասարակական կազմակերպություններ, արհմիություններ» տողով**

Տարին	Գումարը (հազար դրամ)
2016	295,693.10
2017	295,693.10
2018	310,388.50
2019	310,388.50

Ֆինանսական ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ 2017 թ. շահույթ չհետապնդող կառույցներին դրամաշնորհների և սուբսիդավորումների համար բյուջետային (պլանավորված) գումարը կազմել է շուրջ 6.8 մլրդ. դրամ, իսկ 2016 թ.-ին՝ 7.7 մլրդ դրամ:

2016-2017թթ. պետական բյուջեից «Սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով փաստացի տրամադրվել է համապատասխանաբար 4,5 և 2,9 մլրդ ՀՀ դրամ, իսկ «Նվիրատվություն ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով 8,4 և 4,7 մլրդ դրամ: Բացի այդ կառավարությունը ՔՀԿ-ներին ֆինանսավորում է տրամադրել նաև բյուջեի այլ տողերի շրջանակներում, որոնց տրամադրման ընթացակարգերը ոչ միշտ են թափանցիկ եղել հանրության համար:


Ընդհանուր առմամբ, ՀՀ պետական բյուջեից ՔՀԿ-ներն աջակցություն ստանում են «Նվիրատվություններ ոչ կառավարական (հասարակական) կազմակերպություններին», «Սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական

կազմակերպություններին», «Այլ ծախսեր» և «Հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդեր» հոդվածներով (տնտեսագիտական դասակարգում)<sup>16</sup>:

Միևնույն ժամանակ, հասարակական հատվածի զարգացման նպատակով ՀՀ կառավարությունն ամեն տարի ֆինանսական աջակցություն է տրամադրում ՀԿ-ներին: 2010 թ.-ից ի վեր դիտարկելով պետական բյուջեի «նվիրատվություն ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին» և «սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածներով ՔՀԿ-ների ֆինանսական հատկացումները՝ կարող ենք տեսնել նկատելի դրական շարժընթաց:

Ինչպես երևում է Գծապատկեր 1-ում բերված տվյալներից, բյուջեում պլանավորված հատկացումները ևս վերջին տարիներին նկատելիորեն աճել են:

Գծապատկեր 1. ՔՀԿ-ների տրամադրվող ֆինանսական միջոցներն ըստ տարիների. պլանավորված (հզր դրամ)



Հաշվետու ժամանակահատվածում (2017 թ.) սոցիալական ոլորտի ծրագրերի համար պետությունը կնքել է հիմնականում սուբսիդիայի պայմանագրեր սոցիալական ծառայություններ մատուցող ՔՀԿ-ների հետ: 2010 թ.-ից ի վեր սուբսիդիայի և նվիրատվությունների պայմանագրերով իրականացված հատկացումների շարժընթացը դիտարկելով՝ կնկատենք, որ սուբսիդավորվող ծրագրերի թիվը բյուջեի պլանավորման մեջ էականորեն աճել է<sup>17</sup>:


Մյուս կողմից էլ 2019 թ. ունենք վերոնշյալ ցուցանիշների համեմատ էական բացասական միտում: Պայմանավորված պետական հիմնադրամների և մի շարք ԾԻԳ-երի լուծարմամբ ՔՀԿ-ներին ուղղված ֆինանսական միջոցները նվազել են և ընթացիկ տարում «Աջակցություն քաղաքական կուսակցություններին»՝

<sup>16</sup> Տե՛ս «Քաղաքացիական հասարակության կառույցների պետական ֆինանսավորման մեխանիզմները ՀՀ-ում»: Զեկույց հայերեն լեզվով. «Պրոֆեսիոնալները հանուն քաղաքացիական հասարակության» ՀԿ, 2012թ.:

<sup>17</sup> [ՀՀ 2010-2018 թթ. պետական բյուջեի մասին օրենքներ:](#)

հասարակական կազմակերպություններին և արհմիություններին» ծրագրային տողով բյուջեն կազմել է 310,388.5 հզր դրամ<sup>18</sup>:

Գծապատկեր 2. ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական միջոցներն ըստ տարիների (տնտեսագիտական դասակարգմամբ), պլանավորված (հզր դրամ)



Չնայած ֆինանսական հատկացումների զգալի մասը թվում է, թե այս երկու տնտեսագիտական հոդվածներով ուղղվում է ՔՀԿ-ներին, այդուհանդերձ պետական բյուջեից ՔՀԿ-ներին ֆինանսական հատկացումներ տրամադրելու գործընթացը հստակեցված չէ օրենքով և իրականացվում է բազմաթիվ անորոշ ընթացակարգերով, որի արդյունքում հատկացումներն ուղղվում են ոչ այնքան «ոչ կառավարչական», (այն է՝ հասարակական) և «ոչ պետական» կազմակերպություններին, այլ պետական հիմքով ստեղծված մի շարք ՀՄԴ-ների, ՄՀԿ-ների (մարզական ֆեդերացիաներ), մշակութային միությունների, հրատարակչությունների, ճամբարների և այլն: Այդ գործընթացը կարգավորող իրավական ակտերը<sup>19</sup><sup>20</sup><sup>22</sup> տարբերություններ չեն սահմանում առևտրային, շահույթ հետապնդող և այդպիսի նպատակներ չունեցող ՔՀԿ-ների միջև, ինչը խիստ դժվարացնում է վերջիններիս մասնակցությունը հետազոտական,

<sup>18</sup> Տե՛ս նաև «Քաղաքացիական Հասարակության գաղափարն ու մոդելները. զարգացման միտումները. թեր եվ դեմ փաստարկներ»: Հովհաննես Հովհաննիսյան, 2017 թ.

<sup>19</sup> Պետական բյուջեի մասին ՀՀ օրենք:


<sup>20</sup> ՀՀ օրենքը գնումների մասին:

<sup>21</sup> ՀՀ Պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգ: (ՀՀ կառավարության 2003 թ. դեկտեմբերի 24 N 1937-Ն որոշում):

<sup>22</sup> ՀՀ պետական բյուջեից ՀՀ Նախագահի աշխատակազմին հատկացված միջոցները հասարակական կազմակերպություններին որպես դրամաշնորհներ հատկացնելու կարգ: (ՆՀ-118-Ն, 19-ը մայիսի, 2008 թ.):

սոցիալական, կրթական, մշտադիտարկման, խորհրդատվական և նմանատիպ այլ ծրագրերին: Պատկերը նույնն է նաև միջազգային կազմակերպությունների կողմից պետական կառավարման օղակների (նախարարություններ, ԾԻԳ-եր) միջոցով ՔՀԿ-ներին հասցեագրված միջոցների տրամադրման կապակցությամբ:

Գծապատկեր 3. Նախարարությունների կողմից ֆինանսական հատկացումների տոկոսային հարաբերակցությունը՝ ըստ ՀՀ ՖՆ տվյալների (փաստացի):



Ինչպես տեսնում ենք Գծապատկեր 3-ից, 2016-2017թթ.-ին ամենամեծ հատկացումները կատարել է նախագահի աշխատակազմը: Ընդ որում, 2016 թ. «Հայաստանի երիտասարդական հիմնադրամը» (ՀԵՀ) ճանաչվել է գործընկեր կազմակերպություն, որին վերապահվել է ՔՀԿ-ների միջև դրամաշնորհային մրցույթների կազմակերպման իրավասությունը: Այս իրավասությունները ՀԵՀ-ը ստանձնել է դեռևս 2013 թ. երկրորդ կիսամյակից<sup>23</sup> ընդհուպ մինչև 2017 թ.<sup>24</sup>: 2018թ. թավշյա հեղափոխությունից հետո հիմնադրամի գործունեության վերաբերյալ խոշոր կոռուպցիոն բացահայտումներ արվեցին և մամուլում հրապարակվեցին կատարված ապօրինությունները ներկայացնող հոդվածներ<sup>25</sup>:

Գծապատկեր 3-ից երևում է նաև, որ նախարարություններից ոչ կառավարչական կազմակերպություններին հատկացվող նվիրատվությունների և սուբսիդիաների ամենախոշոր շահառուն 2016 թ. եղել է ՀՀ ԳՆ-ն, որը միջոցների զգալի մասը տրամադրել է իր կողմից ստեղծված հիմնադրամներում իրականացվող ծրագրերին (տե՛ս աղյուսակ 2): Մինչդեռ 2017 թ.-ին ԳՆ-ն, մնալով առաջատար ՔՀԿ-ներին նվիրատվությունների տրամադրման գումարի չափով,

<sup>23</sup> Տե՛ս [Գործընկեր կազմակերպություն ճանաչելու և Հայաստանի Հանրապետության Նախագահի 2013 թվականի հունվարի 9-ի ՆԿ-2-Ա կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին. 13.04.2013:](#)

<sup>24</sup> [ՀՀ նախագահի կարգադրությունը գործընկեր կազմակերպություն ճանաչելու մասին: 27.01.2017 թ. ՆԿ-11-Ա:](#)

<sup>25</sup> Տե՛ս [«Հայաստանի երիտասարդական հիմնադրամ»-ի գործադիր տնօրենին մեղադրանք է առաջադրվել՝ փողերի վճարման և յուրացման համար»:](#) (Կայքը դիտվել է 25.04.2019 թ.)

զիջում է ԿԳՆ-ին սուբսիդիայի պայմանագրերով հատկացվող գումարի չափով (տե՛ս աղյուսակ 3):

Աղյուսակ 2. 2016 թ. ՔՀԿ-ներին տրամադրված գումարը ըստ զերատեսչությունների (փաստացի); ՀՀ ՖՆ տվյալների համաձայն

Գերատեսչություն	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	Սուբսիդիաներ	Ընդամենը
Նախագահի աշխատակազմ	144824793	0	144824793
Վարչապետի աշխատակազմ	20000000	11000400	31000400
ՀՀ ՏԿԶՆ	62617000	34633800	97250800
ՀՀ ԱՆ	59999995.5	0	59999995.5
ՀՀ ԱԳՆ	46033200	0	46033200
ՀՀ ԲՆ	7124900	0	7124900
ՀՀ ԳՆ	3255898030	1904271200	5160169230
ՀՀ ԿԳՆ	56658190	531687600	588345790
ՀՀ ՄՆ	151760200	98917500	250677700
ՀՀ ԱՍՀՆ	66048400	452850100	518898500
ՀՀ ՏԿՏՏՆ	2200000000	0	2200000000
ՀՀ ՍԵՀՆ	2061004929	0	2061004929
ՀՀ ՄՆ	34000000	0	34000000
ԸՆԴԱՄԵՆԸ	8165969637.5	3033360600	11199330237.5

Աղյուսակ 3. 2017 թ. ՔՀԿ-ներին տրամադրված գումարը ըստ զերատեսչությունների (փաստացի)

Գերատեսչություն	Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին	Սուբսիդիաներ	Ընդամենը
Նախագահի աշխատակազմ	157889436	0	157889436
Գառավարության/վարչապետի աշխատակազմ	20000000	8292960	28292960
ՀՀ ՏԿԶՆ	30270554	31251700	36267700
ՀՀ ԱԳՆ	85736619	0	85736619
ՀՀ ԲՆ	7070400	0	7070400
ՀՀ ԳՆ	2105917600	498330660.9	2604248260.9
ՀՀ ԿԳՆ	40512000	532736300	573248300
ՀՀ ՄՆ	51000000	55137100	106137100
ՀՀ ԱՍՀՆ	60411900	487592756	548004656
ՀՀ ՍԵՀՆ	1773343722	0	1773343722
ՀՀ ՄՆ	34000000	0	34000000
ՀՀ ՏԶՆՆ	5016000	0	5016000
ԸՆԴԱՄԵՆԸ	4371168231	1613341476.9	5984509707.9

Ինչպես նշվեց, վերոհիշյալ հոդվածներից ֆինանսավորում է հատկացվում նաև պետության կողմից հիմնադրված և/կամ կառավարվող տարբեր ՀՄԴ-ներին (տե՛ս Աղյուսակ 4): Ըստ ՖՆ տվյալների՝ ՔՀԿ-ներին սուբսիդիաների և նվիրատվությունների տեսքով հատկացումների համար 2016 թ.-ին՝ 15, իսկ 2017 թ.-ին՝ 12 պայմանագիր է կնքվել ՀՄԴ-ների հետ: Ուսումնասիրելով այդ ՀՄԴ-ների ստեղծման հիմքը՝ պարզեցինք, որ դրանցից շատերը ստեղծվել են պետության



կողմից: Նախարարությունների կողմից 2016-2017թթ. ֆինանսական աջակցություն ստացած ՀՄԴ-ների ցանկը ներկայացված է աղյուսակ 4-ում: Այս պարագայում հարց է առաջանում, թե «նվիրատվություններ ոչ կառավարչական (հասարակական) կազմակերպություններին» և «սուբսիդիաներ ոչ պետական կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածներում որքանով են իրականում պահպանվում «հասարակական» և «ոչ պետական» եզրույթները, երբ ֆինանսական միջոցների գերակշիռ մասն ուղղվում է պետական ՀՄԴ-ներին և ամենամյա պարտադիր պետական ֆինանսավորում ունեցող պետական հիմքով ստեղծված այլ կազմակերպությունների: Բնականաբար, վերջիններս ազատ են ընտրելու ցանկացած կազմակերպատիրավական ձև և որևէ կերպ չեն խախտում օրենքը, սակայն, մեր կարծիքով այստեղ գոյություն ունեցող անորոշությունը հիմնականում ռիսկեր է ստեղծում հենց ՔՀԿ-ների համար, որոնց ուղղված պետական հատկացումները փաստացիորեն շատ ցածր են, սակայն թվերի տեսքով ունենք ուռճացված պատկեր:


Աղյուսակ 4. 2016-2017թթ. հիմնադրամներին տրամադրված ֆինանսական հատկացումները

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄ	2016 թ.	2017 թ.	Ստեղծման հիմքը
Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման ՀՄԴ	3000000000	2000000000	պետական
Հայաստան համահայկական ՀՄԴ	2246033200	42738756	պետական
Հայաստանի խաղողագործության և գինեգործության ՀՄԴ	211750000	94031100	պետական
Հայաստան Արցախի ՀՄԴ	59999995.5	0	ոչ պետական
Երևան ՀՄԴ	59617000	20000000	պետական
ՀՀ անտառների վերականգնման և զարգացման ՀՄԴ	44148030	11886500	պետական
Վանաձորի տարեցների տուն ՀՄԴ	23571600	24000200	ոչ պետական
Կովկասի տարածաշրջանային բնապահպանական կենտրոն ՀՄԴ-ի հայաստանյան մասնաճյուղ	7124900	7070400	ոչ պետական
Հայաստանի տուրիզմի զարգացման ՀՄԴ-ի Նաիրի մասնաճյուղ	6311200	5055400	պետական
Հայաստանի շախմատի ակադեմիա ՀՄԴ	4800000	0	պետական
Աուտիզմի Ազգային ՀՄԴ ԲՀԿ	-	26666900	ոչ պետական
Սշակույթ համահայկական ՀՄԴ	1000000	700000	պետական
Սշակույթի զարգացման բարեգործական ՀՄԴ	-	300000	ոչ պետական
Հանս Քրիստիան Կոֆոեդ բարեգործական ՀՄԴ	-	56076700	ոչ պետական
Ընդամենը	5664355925.5	2288525956	6 (ոչ պետական), 8 (պետական)

Ինչպես երևում է աղյուսակից, 2016 թ. ընդամենը 3 ոչ պետական ՀՄԴ-ներ են ֆինանսական աջակցություն ստացել պետությունից: Իսկ 2017 թ.-ին, չնայած ՀՄԴ-ներին հատկացվող գումարն էականորեն նվազել է, սակայն ավելի շատ են ոչ պետական ՀՄԴ-ները, որոնք ստացել են նվիրատվություններ և սուբսիդիաներ նախարարություններից: Գծապատկեր 4-ում ներկայացնում ենք պետական և ոչ

պետական հիմնադրամներին հատկացված գումարների տոկոսային հարաբերակցությունը:


Գծապատկեր 4. Պետական և ոչ պետական հիմնադրամներին հատկացվող ֆինանսական միջոցների տոկոսային հարաբերակցությունը 2016-2017թթ. (փաստացի)՝ ըստ ՀՀ ՖՆ տվյալների



Այդուհանդերձ, թե՛ պետության կողմից հիմնադրված և/կամ կառավարվող ՀՄԴ-ները, թե՛ մարզական ֆեդերացիաները, մշակութային միությունները, հրատարակչություններն ու ճամբարները դժվար է ՔՀԿ համարելը, քանզի դրանցում գերակայող է պետության մասնակցությունը: Ի դեպ, նշված կազմակերպությունները պետական բյուջեից միջոցներ են ստանում նաև «ընթացիկ դրամաշնորհներ պետական հատվածի այլ մակարդակներին» տողով: Այսինքն, կառավարությունը մի դեպքում այս կառույցներին ֆինանսավորում է որպես ոչ պետական, ոչ կառավարչական կազմակերպություն, մեկ այլ դեպքում՝ որպես պետական կառույց: Ֆինանսավորված կառույցների կազմակերպատիրավական ձևերը ներկայացված են գծապատկեր 5-ում:


2016-2017թթ. ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տնտեսագիտական հոդվածներով պայմանագրեր կնքվել են ստորև ներկայացվող կազմակերպատիրավական կարգավիճակ ունեցող կառույցների հետ:

Գծապատկեր 5. Պետական ֆինանսավորման կառուցվածքն ըստ կազմակերպատիպական ձևի, 2016-2017թթ.-ին կնքված պայմանագրերի թիվը, ՀՀ ՖՆ տվյալներով



Ըստ պայմանագրերի գումարների ունենք հետևյալ պատկերը.


Գծապատկեր 6. Պետական ֆինանսավորման կառուցվածքն ըստ կազմակերպատիպական ձևի, 2016-2017թթ.-ին կնքված պայմանագրերի գումարը (տոկոս ամբողջի մեջ) ՀՀ ՖՆ տվյալներով



Հետաքրքիր է, որ 2016 թ. Ֆինանսավորված 120 ՀԿ-ներից 33-ը ՄՀԿ-ներ են, իսկ 9-ը՝ սպորտային կոմիտեներ: 2017 թ. Ֆինանսավորված 140 ՀԿ-ներից՝ 35-ը կրկին մարզական և սպորտային ֆեդերացիաներ են, իսկ 5-ը՝ սպորտային կոմիտեներ: Ֆինանսական հատկացումների բաշխվածությունը ներկայացված է Գծապատկեր 7-ում: Ակնհայտ է, որ բոլոր նախարարություններից սպորտային ֆեդերացիաներին և կոմիտեներին հատկացված գումարները այլ ՀԿ-ներին

տրամադրված գումարների մոտ կեսն են կազմում. 2016 թ. ՄՀԿ-ների բաժինը եղել է 49%, իսկ 2017թ.՝ 43%:

Գծապատկեր 7. ՄՀԿ-ներին և այլ ՀԿ-ներին փաստացի տրամադրված ֆինանսական հասկացումների տոկոսային հարաբերակցությունը 2016-2017թթ., ՀՀ ՖՆ տվյալներով




Հետաքրքրական է, որ նախարարությունները 2016-2017թթ. ՄՊԸ և ՓԲԸ կազմակերպատիրավական կարգավիճակ ունեցող կազմակերպությունների հետ կնքել են միայն սուբսիդիայի պայմանագրեր: Այս առումով միայն չորս նախարարություններ, մասնավորապես՝ ՀՀ ԳՆ, ՀՀ ՄՆ, ՀՀ ՏԿԶՆ և ՀՀ ԿԳՆ-ն, են սուբսիդավորել ՄՊԸ-ների և ՓԲԸ-ների ծառայությունները: 2016 թ. և 2017 թ. նախարարությունների կողմից վճարված գումարներն ըստ նշված կարգավիճակի կազմակերպությունների ունեն հետևյալ տեսքը:

Աղյուսակ 5. Նախարարությունների կողմից ՄՊԸ և ՓԲԸ կազմակերպատիրավական ձև ունեցող կառույցների հետ կնքված պայմանագրերի թիվն ու գումարային արտահայտությունը ՀՀ ՖՆ տվյալներով (սուբսիդիաներ ոչ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին տևտ. հոդվածներով)

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	2016 թ.		2017 թ.	
	Պայմանագրերի թիվը	Վճարված գումարը	Պայմանագրերի թիվը	Վճարված գումարը
ՀՀ ԳՆ	2	1904271200	2	264420868.9
ՀՀ ԿԳՆ	14	531687600	14	532736300
ՀՀ ՄՆ	69	81965500	52	40015100
ՀՀ ՏԿԶՆ	1	896100	1	745000
Ընդամենը	86	2518820400	69	837917268.9

Գծապատկեր 8. Ըստ նախարարությունների ՄՊԸ և ՓԲԸ կազմակերպչափրավական ձև ունեցող կառույցների հետ կնքված պայմանագրերի ֆինանսական հատկացումները տոկոսային արտահայտությամբ 2016-2017թթ. ՀՀ ՖՆ տվյալներով (սուբսիդիաներ ոչ պետական ոչ առևտրային կազմակերպություններին և նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին տնտ. հոդվածներով)



Հետագոտությամբ մասնակցած նախարարությունների ներկայացուցիչներն իրենց հարցազրույցներում 2016-2017թթ. ՔՀԿ-ներին տրամադրված ֆինանսական հատկացումների վերաբերյալ պարզաբանումներ անելիս հղվում էին ՀՀ բյուջեի մասին օրենքում դրամաշնորհների տեսքով առանց մրցույթի իրականացվող ծրագրերի ցանկին՝ նկատելով, որ այդ ժամանակահատվածում մրցութային կարգով ֆինանսական հատկացումներ չեն եղել (տե՛ս Աղյուսակ 6):

Աղյուսակ 6. «ՀՀ 2017 թ.-ի պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսված այն ծրագրերի ցանկը, որոնց գծով հատկացումների գումարները տնտեսվարող սուբյեկտներին տրամադրվել են դրամաշնորհների տեսքով՝ առանց մրցույթի (դիտարկվել են միայն ՔՀԿ-ները)

Գերատեսչություն	Ծրագրի անվանում	Տրամադրված դրամաշնորհի գումարը (հզր դրամ)	Դրամաշնորհի ստացած տնտեսվարող սուբյեկտի անվանումը
ՀՀ կառավարության աշխատակազմ	Շախմատիստների պատրաստման ծառայություններ	127,910.5	«Հայաստանի շախմատի ակադեմիա» ՀՄԴ
	Մասնագիտական կրթության որակի ապահովման ծառայություններ	68,021.9	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» ՀՄԴ
	Աջակցություն արտասահմանում ուսանողներին	100,000.0	«Լույս» մշակութային, գիտական, կրթական ՀՄԴ
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>295,932.4</b>	
ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն	Աջակցություն սուբյեկտներին ՓՄՁ	152,600.0	«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» ՀՄԴ
	Պետական «Հայաստանի ՀՄԴի աջակցություն զարգացման կանոնադրական	399,903.7	ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն «Հայաստանի զարգացման ՀՄԴ»

	ինդիքների իրականացմանը»		
	ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումների իրականացման պետական աջակցության ծրագիր	475,000.0	
	Հայաստանի ներդրումային միջավայրի բարեփոխումների ծրագիր	21,032.4	
	Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի խթանման ծառայություններ	91,460.0	«Ձեռնարկությունների ինկուբատոր ՀՄԴ» «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկությունների միություն»
	Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնների գործունեության իրականացում	149,595.4	«Ձեռնարկությունների ինկուբատոր ՀՄԴ»
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>1,289,591.5</b>	
<b>ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն</b>	Մարզային, համահայկական և միջազգային նշանակության երիտասարդական միջոցառումների կազմակերպում	87,711.5	Հայաստանի երիտասարդական ՀՄԴ
	ՀՀ-ում թրաֆիքինգի դեմ պայքարին ուղղված լրագրողական մրցույթ	2,338.0	«Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>90,049.5</b>	
<b>ՀՀ մշակույթի նախարարություն**</b>	Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ	4,533.6	«Կալենց» մշակութային ՀՄԴ
	Հանրապետական մրցույթներ, փառատոներ, ստուգատեսներ	8,700.0	«Հայաստանի երաժշտական ընկերություն» ՀԿ, «Մշակութային կրթության աջակցության» ՀՄԴ
	Աջակցություն ազգային փոքրամասնությունների մշակույթի տարածմանը	3,000.0	«Հարմոնիա» ռուսական մշակույթի միջազգային կենտրոն» ՀԿ, «Հայաստանի հրեական համայնք» ՀԿ, «Եզդիների ազգային միություն» ՀԿ, «Հունական հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ
	Աջակցություն հայկական պատմամշակութային հուշարձանների վավերագրմանը	53,000.0	«Հայկական ճարտարապետությունն ուսումնասիրող» ՀՄԴ
	Երաժշտական և արվեստի դպրոցներում ուսումնամեթոդական աշխատանքներ	77,604.7	«Մշակութային կրթության աջակցության» ՀՄԴ
	Աջակցություն շնորհալի պատանի երաժիշտ կատարողների մասնագիտական կարողությունների զարգացմանը և կատարելագործմանը	15,926.6	«Հարմոնիում» երաժշտական զարգացման կենտրոն» հասարակական կազմակերպություն

ԸՆԴԱՄԵՆԸ	162,764.9		
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	Աջակցություն արտադպրոցական դաստիարակությանը	10,000.0	«Աշխատանքային ռեզերվներ» մարզական ՀԿ
	Ռազմահայրենասիրական դաստիարակության ռազմավարության իրականացում	69,796.0	ՀՀ երկրապահ կամավորականների միություն
	Դպրոցականների հանրապետական սպարտակիադայի անցկացում	35,000.0	«Դպրոցականների հանրապետական մարզական ֆեդերացիա» ՀԿ
	Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ծառայություններ	42,259.5	«Ակադեմիական փոխճանաչման և շարժունության ազգային տեղեկատվական կենտրոն» ՀՄԴ
	«Հայրենյաց ասպետներ» հայրենասիրական կրթադաստիարակչական ծրագիր	69,359.3	«Հայ ասպետ» կրթադաստիարակչական բարեգործական ՀՄԴ
	Բուխարեստի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում	3,600.0	«Երևանի պետական համալսարան» ՀՄԴ
	Միյուռքագիտության ոլորտում գիտական կադրերի պատրաստման գծով նպաստների տրամադրում (Զայցբուրգ)	3,600.0	
	Աուտիզմ և զարգացման այլ խանգարումներ ունեցող երեխաների բուժման, վերականգնման, կրթության և զբաղվածության ապահովում	81,796.0	«Աուտիզմ ազգային ՀՄԴ»
	Պրահայի Կարլովի համալսարանում հայոց լեզվի դասավանդման կազմակերպում	5,704.3	«Երևանի պետական համալսարան» ՀՄԴ
	Կրթության գերազանցության ազգային ծրագրի իրականացում	666,337.1	«ԱՅԲ» կրթական ՀՄԴ
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>987,452.2</b>		

\*\* ՀՀ ՄՆ-ում ծրագրեր են իրականացվում համատեղ ՀԿ-ների և ՊՈԱԿ-ների միջև: Նման համատեղ ծրագրերում ընդգրկված ՀԿ-ների մասին տեղեկատվությունը ներկայացված չէ:

Մեր կողմից դիտարկվել է նաև 2016 թ.-ի բյուջեի մասին օրենքում նախատեսված ծրագրերի ցանկը. 2017 թ.-ին դրանց գերակշիռ մասը կրկնվում է թե՛ հատկացված գումարների չափերով, թե՛ կազմակերպություններով: 2017 թ. ծրագրում ավելացել են միայն «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ-ն, «Հունական հասարակական կազմակերպությունների միություն» ՀԿ-ն և «Այբ» հիմնադրամը:

Բացի այդ, վերլուծելով 2016-2017թթ. ՀՀ ՖՆ բյուջետային ծախսերի վերաբերյալ ներկայացրած հաշվետվությունը, տեսնում ենք, որ 2017 թ. 16 կազմակերպություններ նախարարություններից ֆինանսական հատկացումներ ստացել են 2 և ավելի անգամ: Աղյուսակում 6-ում ներկայացված են այդ

կազմակերպությունները՝ ըստ հատկացումների հաճախականության և գումարների:

Աղյուսակ 6. 2016-2017թթ. կրկնվող կազմակերպությունների անունները, դրանց պայմանագրերի թիվն ու գումարները

N	Կազմակերպություն	2017 թ. հատկացումների թիվը	Ընդհանուր գումարի չափը	2016 թ. հատկացումների թիվը	Ընդհանուր գումարի չափը
1	Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե ԻԱՄ	2	75975700	4	299029700
2	Հայաստանի կույրերի միավորում ՀԿ	2	52632600	2	59108400
3	Խուլերի հայկական սպորտային կոմիտե ՀԿ	2	18342000	3	26156200
4	Հայ կանանց միջազգային միավորում ՀԿ	2	14000000	2	14000000
5	Հարմոնիա ռուսական մշակույթի միջազգային կենտրոն ՀԿ	3	11820000	3	11820000
6	Ուկրաինա Հայաստանի ուկրաինացիների ֆեդերացիա ՀԿ	2	3466000	2	3466000
7	Գրական թերթ խմբագրություն ՍՊԸ	2	2050000	2	2050000
8	Գոլոս ՍՊԸ	2	2000000	2	2000000
9	Հայաստանի քրդական ազգային խորհուրդ ՀԿ	2	1718000	2	1718000
10	Գրական էտալոն ՍՊԸ	2	1650000	2	2995000
11	Սատիրիկոն ՍՊԸ	2	1560000	1	550000
12	Գրանիշ գրական համայնք ՀԿ	2	1400000	1	500000
13	Իվերիա վրացական բարեգործական համայնք ՀԿ	2	1318000	2	1318000
14	Հայաստանի «Երևան» բելառուսական համայնք Բելառուս ՀԿ	2	1318000	2	1318000
15	Եզդիների ազգային կոմիտե ՀԿ	2	1309000	2	1309000
16	Եզդիների ազգային միություն ՀԿ	2	1309000	2	1309000

Բացի վերոնշյալ կազմակերպություններից, կան նաև 6 այլ կազմակերպություններ, որոնք 2016 թ. բազմակի հատկացումներ են ունեցել, սակայն ամենամեծ ֆինանսական հատկացումները բաժին են հասել «Հայաստան համահայկական հիմնադրամ»-ին՝ 2,2 մլրդ դրամ (2 հատկացման ընդհանուր գումարը) և «Հայաստանի խաղողագործության և զինեգործության հիմնադրամը»՝ 211,7 միլիոն դրամ (2 հատկացման ընդհանուր գումարը):

Զեկույցի հավելվածում կցված է 2016-2017թթ. ըստ ՀՀ ՖՆ տվյալների այն կազմակերպությունների ցանկը (աղյուսակ 13), որոնք համընկնում են, այսինքն՝ ֆինանսական հատկացումներ են ունեցել և՛ 2016 թ.-ին, և՛ 2017 թ.-ին: Ընդ որում, կրկնվում են ոչ միայն կազմակերպությունները, այլ նաև հատկացվող գումարները:

Այսպիսով, ընդհանրացնելով վերոգրյալ փաստերը՝ առաջիկա տարիներին, օրենսդրական բարեփոխումների համատեքստում անհրաժեշտ է հստակեցնել ՀՀ պետական բյուջեից ՔՀԿ-ներին տրվող ֆինանսական աջակցության ռազմավարությունն ու ընթացակարգերը՝ տարբերակելով վերջիններս շահույթ



հետապնդող կազմակերպությունների համար սահմանված ընթացակարգերից և մատչելի դարձնելով դրանք ոչ կառավարական կազմակերպությունների՝ ՔՀԿ-ների համար: Ցանկալի է, որ պետական բյուջեից ՔՀԿ-ներին միջոցների հատկացումը իրականացվի առանձին տողով, որպեսզի ապահովվի դրանց հասցեականությունը և վերահսկման արդյունավետությունը: Պետական բյուջեում ՔՀԿ-ներին հատկացումների չափը պետք է որոշվի ելնելով իրականացվող քաղաքականության առաջնահերթություններից: Ընդ որում, ՔՀԿ-ներին կատարվելիք հատկացումների տողի ձևավորումը պետք է կապակցված լինի յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեի ծրագրավորման գործընթացի հետ<sup>26</sup>:

### Մշտադիտարկման ընթացիկ արդյունքները

#### Նախարարություններից ստացված պատասխաններն ու հարցումների արդյունքները.

Աղյուսակ 7. 2019 թ. մարտ ամսին «ՀԿ Կենտրոն» քաղաքացիական հասարակության զարգացման ՀԿ-ի կողմից բոլոր նախարարություններին ուղարկված հարցումների պատասխանները

Գերատեսչություն	Պատասխանի արդյունքը	Հարցման ամսաթիվ	Պատասխանի ամսաթիվ	2017 թ. (նաև 2016 թ.) ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրած դրամաշնորհ, սուբսիդիա, նվիրատվություն ու պատվիրակված ծառայություններ
1. ԱԻՆ	Ժամանակին՝ լիարժեք	19.02.2019թ.	19.03.2019թ.	Չեն տրամադրվել
2. ՀՀ ԱրՆ <sub>1</sub>	Ժամանակին՝ լիարժեք	18.02.2019թ.	27.02.2019թ.	Չեն տրամադրվել
3. ՀՀ ԱռՆ <sub>2</sub>	Ժամանակին՝ լիարժեք	18.02.2019թ.	27.02.2019թ.	Չեն տրամադրվել
4. ՀՀ ԱԳՆ	Ժամանակին՝ սխալ Տե՛ս Հավելված Աղյուսակ 2	18.02.2019թ.	22.02.2019թ.	Պատասխանել են, որ չեն տրամադրել, սակայն բյուջեի կատարման հաշվետվության մեջ երևում են հատկացումներ:
5. ՀՀ ԲՆ	Ժամանակին՝ սխալ Տե՛ս աղյուսակ 2	18.02.2019թ.	26.02.2019թ.	Պատասխանել են, որ չեն տրամադրել, սակայն բյուջեի կատարման հաշվետվության մեջ երևում են հատկացումներ:
6. ՀՀ ԳՆ	Ժամանակին՝ թերի (Հաշվետվություններ չեն ներկայացվել)	18.02.2019թ.	20.03.2019թ.	Տրամադրվել են
7. ՀՀ ԷԵԲՊՆ	Ժամանակին՝ լիարժեք:	20.02.2019թ.	25.02.2019թ.	Չեն տրամադրվել
8. ՀՀ ԿԳՆ	Ժամանակին՝ թերի (Հաշվետվություններ չեն ներկայացվել)	18.02.2019թ.	22.02.2019թ.	Տրամադրվել են

<sup>26</sup> Տե՛ս [Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների զարգացման ռազմավարության հայեցակարգ \(նախագիծ\)](#):

		ներկայացվել)			
9.	ՀՀ ՄՆ	Ժամանակին թերի (Հաշվետվություններ ներկայացվել) չեն	18.02.2019թ.	25.02.2019թ.	Տրամադրվել են
10.	ՀՀ ԱՍՀՆ	Ուշացած թերի	18.02.2019թ.	06.03.2019թ.	Տրամադրվել են
11.	ՀՀ ՍԵՀՆ	Ժամանակին թերի (Հաշվետվություններ ներկայացվել) չեն	18.02.2019թ.	22.02.2019թ.	Տրամադրվել են
12.	ՀՀ ՄՆ	Ժամանակին թերի (Հաշվետվություններ ներկայացվել) չեն	18.02.2019թ.	25.02.2019թ.	Տրամադրվել են
13.	ՀՀ ՏԿԶՆ	Ժամանակին թերի (Հաշվետվություններ ներկայացվել) չեն	18.02.2019թ.	26.02.2019թ.	Տրամադրվել են
14.	ՀՀ ՏԶՆՆ	Ժամանակին լիարժեք	18.02.2019թ.	26.02.2019թ.	Տրամադրվել են
15.	ՀՀ ՏԿՏՏՆ	Ժամանակին լիարժեք	18.02.2019թ.	22.02.2019թ.	Տրամադրվել են
16.	ՀՀ ՖՆ	Ժամանակին թերի	18.02.2019թ.	26.02.2019թ.	Չեն տրամադրվել
17.	ՀՀ ՊՆ	Ոչ մի պատասխան			Չեն արձագանքել հարցմանը, սակայն բյուջեի կատարման հաշվետվության մեջ երևում են հատկացումներ:

**Պարզաբանում:** Հարցումներն ուղարկվել են ՀՀ բոլոր նախարարություններին: Հարցման մեջ մասնավորապես խնդրել ենք տրամադրել տեղեկատվություն հետևյալ հարցերի վերաբերյալ՝

- 2016-2017թթ. ընթացքում պետական միջոցներից ՀԿ-ներին, հիմնադրամներին և ԻԱՄ-ներին (այսուհետ՝ կառույցներ) տրամադրած դրամաշնորհների, սուբսիդիաների և/կամ նվիրաբերությունների, ինչպես նաև պատվիրակված ծառայությունների համար հատկացված գումարները, վերջիններիս տրաման ընթացակարգերը, գումարներ ստացած կառույցների ամբողջական ցանկը:
- 2016-2017թթ. ընթացքում ֆինանսավորման հայտ ներկայացրած, սակայն մերժում ստացած կառույցների ցանկը<sup>27</sup>:
- 2016-2017թթ. ընթացքում ֆինանսավորում ստացած կառույցների կողմից ներկայացված հաշվետվությունները (կատարողական):
- Նախարարության կողմից վերոնշյալ կառույցներին ֆինանսական աջակցության տրամադրման առաջնահերթություն ներկայացնող ոլորտներն ու հիմնական ծրագրային ուղղվածությունները:

Վերոնշյալ հարցերի վերաբերյալ ամբողջական և լիարժեք պատասխանել են միայն ՀՀ ՏԿՏՏՆ-ն և ՏԶՆՆ-ն. ներկայացվել են առանձին 2016-2017թթ. ֆինանսավորում ստացած կառույցների ամբողջական ցանկը, կառույցների

<sup>27</sup> Միայն ՀՀ ՄՆ-ն է մերժում ստացած կառույցների ցանկ ունեցել և ներկայացրել հարցման պատասխանում, մյուսները նշել են, որ նման տեղեկատվություն չունեն կամ չեն ունեցել մերժում ստացած ծրագրեր:

մերժման վերաբերյալ պարզաբանումը, ֆինանսավորում ստացած կառույցների բոլոր կատարողական հաշվետվությունները, ծրագրային առաջնահերթությունները:

Մյուս նախարարությունները ներկայացված հարցերի վերաբերյալ տրամադրել են ոչ լիարժեք տեղեկատվություն: Մասնավորապես, ՊՆ-ն որևէ կերպ չի արձագանքել հարցմանը, սակայն 2016-2017թթ. բյուջեի կատարման հաշվետվության մեջ երևում են ֆինանսական հատկացումներ ունեցած կառույցները: ՀՀ ԲՆ-ն պատասխանել է, որ նշված ժամանակահատվածում չի հատկացրել ֆինանսական աջակցություն նշված կառույցներին, սակայն ՀՀ ՖՆ տրամադրած տվյալներում առկա է հակառակը ապացուցող տեղեկատվություն:

ՀՀ ԱԳՆ-ն ևս պատասխանել է, որ չի ունեցել ֆինանսական հատկացումներ նշված կառույցներին, սակայն բյուջեի կատարման հաշվետվության մեջ կան տվյալներ, ըստ որոնց նախարարությունը հաշվետու ժամանակահատվածում իրականացրել է ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների ֆինանսավորում: Խնդրի շուրջ նախարարությունից ստացվել է պարզաբանող տեղեկատվություն, որ ««Տպագրության մարզարիտ» կոնֆերանս և ցուցահանդես՝ նվիրված Ոսկան Երևանցու տպագրությամբ հայերեն առաջին Աստվածաշնչի (1666թ.) 350-ամյակին» և «Մերձավոր Արևելքի աստղադիտական ժառանգությունը թեմայով միջազգային խորհրդաժողով» ծրագրերին ՀՀ ԱԳՆ-ի կողմից ֆինանսավորումը կատարվել է 2016-2017թթ. մասնակցության ծրագրի շրջանակներում փոխանցված միջոցներից, այլ ոչ թե պետական միջոցներից (<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=37236>): ՅՈՒՆԵՍԿՕ-ն իր կողմից ընտրված ծրագրերի գումարը փոխանցում է ՀՀ ԱԳՆ արտաբյուջետային հաշվին, որից հետո ՀՀ կառավարության համապատասխան որոշման հիման վրա այն փոխանցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից ընտրված ծրագիրն իրականացնող կազմակերպությանը, իսկ ՅՈՒՆԵՍԿՕ-ի գործերով Հայաստանի ազգային հանձնաժողովի քարտուղարությունն իրականացնում է գործընթացի համակարգումը:

Ընդհանուր առմամբ, հարցումների և փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզ դարձավ, որ միայն 6 նախարարություններ 2016-2017թթ. առհասարակ չեն տրամադրել դրամաշնորհներ, սուբսիդիաներ, նվիրատվություններ և նվիրաբերություններ ոչ պետական ոչ առևտրային կազմակերպությունների, իսկ 11-ը՝ տրամադրել են, որից 9-ը հարցման արդյունքում տրամադրել է որոշակի տեղեկատվություն, իսկ 2-ը՝ կա՛մ չեն արձագանքել, կա՛մ տվել են բացասական պատասխան: Ընդ որում, վերջիններիս աշխատակիցների հետ հարցազրույցների անցկացման նպատակով՝ հնարավոր չեղավ կապվել համապատասխան մասնագետի հետ: Թեև բոլորին խնդրել էինք փոխանցել նաև իրավասու կոնտակտային անձանց տվյալներ, սակայն նրանց

մեծամասնությունը չէր տիրապետում անհրաժեշտ տեղեկատվությանը և չէր կարողանում պարզաբանումներ տալ դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի վերաբերյալ: Մասնավորապես, միայն ՀՀ ՏԿԶՆ-ում հնարավոր եղավ ինչ-որ տեղեկատվություն ստանալ հենց այն մասնագետից, ում կոնտակտային տվյալները ներկայացվել էին: Մյուս բոլոր նախարարություններում անհրաժեշտ տեղեկատվությունը ստացվել է մեծ դժվարությամբ՝ բազմաթիվ զանգերի և այցելությունների արդյունքում:

**Աղյուսակ 8. Նախարարության աշխատակիցների հետ իրականացված հարցազրույցների վերաբերյալ տեղեկատվություն**

Նախարարություն	Հարցազրույց	Պաշտոն/բաժին
1. ՀՀ ԳՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Ֆինանսական վարչության պետ՝ Էդուարդ Կարապետյան
2. ՀՀ ԿԳՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Ֆինանսական վարչության պետ՝ Վահրամ Գասպարյան
3. ՀՀ ՄՆ	Այցելություններ և հեռախոսային հարցումներ	Տարբեր բաժինների, վարչությունների աշխատակիցներ, ովքեր չհամաձայնեցին դեմ առ դեմ հարցազրույցի, սակայն կցկտուր տեղեկատվություն տվեցին նախարարության կողմից տրամադրվող դրամաշնորհների վերաբերյալ:
4. ՀՀ ԱՍՀՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	ՀՀ ԱՍՀՆ-ի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության գլխավոր մասնագետ Կարինե Սուջյան:
5. ՀՀ ՄՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Ֆինանսատնտեսական վարչության պետի տեղակալ, գլխավոր հաշվապահ՝ Գասպարյան Քրիստինե:
6. ՀՀ ՍԵՀՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Երիտասարդական քաղաքականության վարչության պետ՝ Թամարա Թորոսյան:
7. ՀՀ ՏԿԶՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Ֆինանսատնտեսագիտական, հաշվապահական հաշվառման բաժնի գլխավոր մասնագետ Գայանե Բաղայան
8. ՀՀ ՏԿՏՏՆ	Հեռախոսային հարցազրույց	Տեղեկատվական, բարձր տեխնոլոգիաների և թվայնացման վարչության պետ՝ Արման Գալստյան
9. ՀՀ ՏԶՆՆ	Դեմ առ դեմ հարցազրույց	Ֆինանսական և հաշվապահական հաշվառման բաժնի պետ Ռաֆիկ Բաղդասարյան

**Աղյուսակ 9. Նախարարությունների պաշտոնական կայքէջերի ուսումնասիրություն**

ԳԵՐԱՏԵՍՉ ՈՒԹՅՈՒՆ	ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԿԱՅԷՋ	ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՈՉ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՏՐԱՍՊՐԿՈՂ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐԻ, ՍՈՒԲՍԻԴԻԱՆԵՐԻ, ՆԿԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ	
1.	ԱԻՆ	<a href="http://www.mes.am">http://www.mes.am</a>	Առկա չէ
2.	ՀՀ ԱՆ <sub>1</sub>	<a href="http://www.moh.am">http://www.moh.am</a>	1. 2017-2019թթ. ընթացքում իրավաբանական անձանց տրամադրված սուբսիդիաների և դրամաշնորհների մասին տեղեկատվություն: 2. Տեղեկատվություն ՀՀ առողջապահության նախարարության կողմից կնքված դրամաշնորհների պայմանագրերի մասին:
3.	ՀՀ ԱՆ <sub>2</sub>	<a href="http://moj.am/">http://moj.am/</a>	Առկա չէ:
4.	ՀՀ ԱԳՆ	<a href="https://www.mfa.am">https://www.mfa.am</a>	Առկա չէ:
5.	ՀՀ ԲՆ	<a href="http://www.mnp.am">http://www.mnp.am</a>	Դոնոր կազմակերպությունների կողմից իրականացվող ծրագրերի վերաբերյալ դրամաշնորհային մրցույթների հայտարարություն:
6.	ՀՀ ԳՆ	<a href="http://minagro.am/">http://minagro.am/</a>	Նախարարության կողմից պետական բյուջեի միջոցներով իրականացվող ծրագրերի հայտերի և հաշվետվությունների փաթեթն ամբողջությամբ տեղադրված է կայքի ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ Բաժնում:
7.	ՀՀ ԷԵԲՊՆ	<a href="http://www.minenergy.am">http://www.minenergy.am</a>	Առկա չէ:
8.	ՀՀ ԿԳՆ	<a href="http://edu.am/">http://edu.am/</a>	Ներկայացված են հայտարարությունները դրամաշնորհի հատկացման մրցույթների մասին, որոշ տարիների ծրագրային եռամսյակային

			հաշվետվությունները, այդ թվում տարեկան ամփոփ հաշվետվությունները, որոնք չեն պարունակում տեղեկատվություն ՔՀԿ-ներին տրամադրած դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատությունների և նվիրաբերությունների մասին:
9.	ՀՀ ՄՆ	<a href="http://mincult.am">http://mincult.am</a>	Ներկայացված են դրամաշնորհային մրցույթի հրավերներն ու հայտադիմումի փաթեթները «դրամաշնորհային ծրագրեր» բաժնում: Առկա են միջոցառումների ընթացիկ հաշվետվությունները:
10.	ՀՀ ԱՍՀՆ	<a href="http://www.mlisa.am">http://www.mlisa.am</a>	Կայքում տեղադրված են առաջնահերթություն ունեցող ծրագրերի իրականացման նպատակով դրամաշնորհների տրամադրման համար հայտարարված մրցույթի հրավերի փաթեթները: Ներդրումային ծրագրերի հաշվետվություններ: Նախարարի հրամաններ:
11.	ՀՀ ՄԵՀՆ	<a href="http://msy.am">http://msy.am</a>	Կայքում տեղադրված են ՀՀ-ում գործող ԵՀԿ-ներին դրամաշնորհների տրամադրման համար հայտարարված մրցույթի հրավերի փաթեթը եռամսյակային կտրվածքով:
12.	ՀՀ ՄՆ	<a href="http://www.mindiaspora.am">http://www.mindiaspora.am</a>	Առկա չէ:
13.	ՀՀ ՏԿԶՆ	<a href="http://www.mtad.am">http://www.mtad.am</a>	Առկա չէ:
14.	ՀՀ ՏԶՆՆ	<a href="http://www.mineconomy.am">http://www.mineconomy.am</a>	Առկա չէ:
15.	ՀՀ ՏԿՏՏՆ	<a href="http://mtcit.am/">http://mtcit.am/</a>	Հայտարարություններ բաժնում առկա են <u>Մրցույթների հրավերները</u> : Ներկայացված են տարեկան և եռամսյակային հաշվետվություններ:
16.	ՀՀ ՖՆ	<a href="http://www.minfin.am/">http://www.minfin.am/</a>	Առկա են <u>ինտերակտիվ բյուջեյի</u> համապատասխան տնտեսագիտական հոդվածներով տրամադրվող աջակցության ֆինանսական բաղադրիչները, սակայն ծրագրերի պայմանագրերը հասանելի չեն կայքի ծրագրային ապահովման սխալի պատճառով:
17.	ՀՀ ՊՆ	<a href="http://www.mil.am">http://www.mil.am</a>	Առկա չէ:

## Հետազոտության արդյունքների վերլուծություն

### ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգերը

Իրավիճակի նկարագրություն: Նախարարությունների կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին ֆինանսական աջակցության տրամադրման մրցույթները հայտարարվում և տեղադրվում են Գնումների միասնական հարթակում՝ [ազդարարում](#): Ըստ նախարարության ներկայացուցիչների՝ կայքի հայտարարության համաձայն, ով դիմում և համապատասխանում է պահանջներին և միևնույն ժամանակ առաջարկում է ցածր գին, ինքն էլ ճանաչվում է մրցույթի հաղթող:

Հետազոտության մասնակիցների կարծիքով՝ ՔՀԿ-ներին պետական միջոցներից հատկացումներ տրամադրելու ընթացակարգերը, որոնք կարգավորվում են կառավարության 1937-Ն որոշմամբ, մի շարք սահմանափակումներ ունեն: Դրանք չեն ապահովում դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների, նվիրաբերությունների տրամադրման թափանցկությունն ու հաշվետվողականությունը: Պարզ չէ նաև, թե ինչպես է որոշվում պայմանագրերի ձևերից յուրաքանչյուրը:

Նախարարությունների կողմից ֆինանսավորվող ծրագրերի մշտադիտարկման համար ներկայումս չկա մշակված գործիքակազմ, որով

կհակվեն դրանց իրականացման արդյունավետությունն ու ազդեցությունը, այսինքն՝ հասկանալի չէ, թե այդ բյուջետային ծախսերը տեղին են կատարվում, թե՛ ոչ: Իրավական առումով ներկա փուլում անհրաժեշտություն է առաջացել հստակեցնելու դրամաշնորհների տրամադրման ընդհանուր կարգը. բոլոր գերատեսչությունների համար պետք է սահմանել մրցույթների կազմակերպման միօրինակ հայտադիմում և հաշվետվությունների ներկայացման ձև, որոնք կգործեն համընդհանուր ընթացակարգի առկայության պայմաններում: Օրենսդրական փոփոխությունների կամ իրավական կարգավորումների միջոցով պետք է ամրագրել նաև իրականացվելիք քայլերի հաշորդականությունը, որը տարընթերցումների տեղիք չի տա, այսինքն՝ հայտաձևերի մշակման, դիմումների ընդունման, հայտերի գնահատման, ծրագրերի մշտադիտարկման և արդյունքում հաշվետվությունների ձևով դրանց ամփոփման փուլերի համար մեկ համընդհանուր սկզբունք պետք է գործի:

Այսպես, պետք է հստակեցվի ոչ միայն այն, թե ինչ կարգով են տրամադրվում պետական դրամաշնորհները, սուբսիդիաները, նվիրատվությունները, նվիրաբերությունները և պատվիրակվող ծառայությունները (ինչ գումարի շրջանակներում), այլ նաև այն, թե ինչ գնահատման և վերահսկման մեխանիզմներով պետք է դրանք ստուգվեն: Բացի այդ, հաշվետվողականության ապահովման համար յուրաքանչյուր նախարարություն իր պաշտոնական կայքում պետք է հրապարակի այն կազմակերպությունների ցանկը, ըստ պայմանագրի տեսակների, որոնց հատկացումներ են արվել տվյալ տարվա ընթացքում: Այստեղ պետք է նշվեն նաև այն կազմակերպությունների ծրագրերը, որոնք առանց մրցույթի, սեփական ծրագիրն են ներկայացրել և հավանության արժանանալով՝ ֆինանսավորվել են. նման ծրագրերի վերաբերյալ պետք է լինեն հաշվետու ամփոփագրեր:

Մրցութային կարգով դրամաշնորհների տրամադրման գործընթացը ևս պետք է սահուն իրականացնել, որպեսզի ռիսկեր չստեղծվեն ո՛չ պետության, ո՛չ հասարակության, ո՛չ էլ ՔՀԿ-ների համար:

*«Մրցութային կարգով աշխատելը մի քիչ դժվար կլինի, քանի որ մենք պետք է հասկանանք, թե ինչու ենք ուզում մրցակցություն լինի, ինչպես ենք ուզում դա անել, որպեսզի դրանով գործին նաև չվնասենք: Որովհետև պատկերացրեք «Առաքելություն Հայաստան» ենթադրենք ինչ-որ ենթակառուցվածք է ստեղծել, մարդկանց է ընդունել աշխատանքի, որոնք փորձառություն ունեն ու սկսել է ծառայություն մատուցել: Հիմա մրցույթ հայտարարի պետությունը, և մեկ ուրիշը գա շահի: Ես դեմ չեմ, եթե դա ավելի էժան է, բայց մենք պետք է հասկանանք արդյո՞ք այդ նոր ընտրված կազմակերպությունը ի վիճակի է նույն որակի ու քանակի ծառայություն մատուցել: Հիմա փաստորեն մրցութային է դարձել ու ռիսկի գործոն է ավելացել: Պատկերացրեք գալիս է մի կազմակերպություն ու*

ավելի էժան գին է առաջարկում, հետո էլ խնամքը ստացողները դժգոհ են մնում այդ ծառայություններից ու բողոքում են Սոցապ նախարարությանը: Ի՞նչ պետք է անի այդ դեպքում նախարարությունը... Հավանաբար կարելի է կանոնակարգել նպատակային ցուցանիշներ սահմանելով և ավելի երկարժամկետ պայմանագիր կնքելով: Այսինքն ոչ թե մի տարվա համար, այլ ասենք 3 տարի լինի, եթե կառույցը պայմանները բավարարի, ու ծառայություններից դժգոհություններ չլինեն, այդ ընթացքում ծառայությունները նրանց պատվիրակվեն: Հետո նորից մրցույթ հայտարարեն: Բայց ամեն տարի մրցույթ անելը նույն ՀԿ-ի համար ռիսկային կարող է լինել: Ինձ թվում է սա նուրբ հարց է հատկապես սոցիալական ոլորտի համար ու պետք է ռիսկերը հաշվարկել: Այսինքն՝ արդյո՞ք մենք խնայողություն անելով մրցույթի արդյունքում ռիսկի տակ չենք դնում ծառայության որակը: Պետք է այդ հարցերը բոլորը գնահատել»: (Փորձագետ)

ՔՀԿ-ները դրամաշնորհներ են ստանում նաև «այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «այլ ծախսեր» տնտեսագիտական հոդվածներով, ինչը կրկին բազմաթիվ տարբերությունների և կամայականությունների է հանգեցնում: Բացի այդ, այստեղ նաև կարող են ընտրողաբար որոշվել, թե ինչպիսի պայմանագրեր պետք է կնքվի համագործակցող կազմակերպությունների հետ: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է հստակեցնել կոնկրետ հոդվածները, թե բյուջեի որ տողով են ՔՀԿ-ները ստանալու ֆինանսական աջակցություն:

Ամենամեծ խնդիրը, որը նշել են բոլոր փորձագետները, ՔՀԿ-ներին ուղղվող պետական միջոցների նկատմամբ վերահսկողության բացակայությունն է: ՔՀԿ ներկայացուցիչների համար հասկանալի չէ, թե ինչպես են ընտրվում այն ՀԿ-ները, որոնց մեծ գումարներ են փոխանցվում այս կամ այն ծրագրի իրականացման համար: Սույն հիմնախնդիրն էլ, փորձագետների կարծիքով, դառնում է կոռուպցիոն սխեմաների առաջացման պատճառ:

Չնայած «ԲԿԳ» չորրորդ հանձնառությամբ նախատեսվել է, որ նախարարություններում պետք է մրցութային կարգ ներդրվի և մշակվեն համընդհանուր ձևաչափեր, սակայն ոչ բոլոր նախարարություններն են ներկայումս մրցութային կարգով առաջնորդվում և բացի այդ չկա որևէ համընդհանուր հայտաձև նախարարությունների կողմից տրամադրվող դրամաշնորհային մրցույթներին դիմելու համար:

Այդուհանդերձ, ԲԿԳ-ի առանձին հանձնառությունների կատարման համար հատուկ մշտադիտարկում չի արվում, սակայն կա պատասխանատու անձ, ով պարզապես զբաղվում է այդ աշխատանքների կազմակերպմամբ և հետևում է դրանց ընթացքին: Յուրաքանչյուր տարի, կապված ԲԿԳ-ում կատարվող աշխատանքների հետ, այդ հանձնառության իրականացումը ստանձնում է որևէ նախարարություն: Օրինակ, 2018 թ. իրավական կարգավորումների և փոփոխությունների մշակման անհրաժեշտությամբ պայմանավորված՝

հանձնառության իրականացման պարտավորությունը ստանձնել էր ՀՀ ԱրՆ-ը, որը սակայն, իրավասու չէր պահանջել և հետևել, որ մյուս նախարարությունները հաշվետվություններ ներկայացնեն ընթացիկ աշխատանքների վերաբերյալ: Այս առումով հանձնառությունների կատարման համար վերահսկողությունը վերապահված է միայն կառավարությանը: Այնուամենայնիվ, նախարարությունների վրա դրված չեն որոշակի պարտավորություններ, որպեսզի ԲԿԳ-ի հանձնառություններն իրականացնելու համար ձևավորեն մասնագիտական խմբեր<sup>28</sup>:

Ներկայումս ՀՀ ՄՆ-ն, ԱՍՀՆ-ն, ՍԵՀՆ-ն անցկացնում են դրամաշնորհային մրցույթներ, որոնք կազմակերպվում են առանձին նախարարների հրամաններով և չունեն միասնական ընթացակարգ: Մյուս նախարարությունները դեռևս շարունակում են համագործակցել միայն այն կառույցների հետ, որոնց նախկինում ֆինանսավորել են (տե՛ս [աղյուսակ 13](#)):

*«Այսինքն՝ «յուրիմշիկ» կազմակերպությունները, որոնք սերտորեն համագործակցում են նախարարությունների հետ, նրանք ամեն տարի, շատ թե քիչ, ստանում են ինչ-որ գումարներ»:* (Փորձագետ)

ՔՀԿ-ների ներկայացուցիչների կարծիքով, գնումների գործընթացն ու հայտարարվող մրցույթների ընթացակարգերը թափանցիկ և հասանելի չեն բոլորի համար, քանի որ պետական դրամաշնորհների տրամադրման գործընթացում նախկինում բացահայտվել են մի շարք կոռուպցիոն սխեմաներ, ինչի պատճառով մեծամասնությունը կորցրել է իր վստահությունը պետական դրամաշնորհների և նախարարությունների հանդեպ:

*«Թափանցիկությունը, ընթացակարգերի հստակությունը դեռևս խնդրահարույց են, ինչպես նաև հետկանչն ու մերժումները հիմնավորված չեն: Անգամ մերժման դեպքում պետք է նշվի, թե հայտը ինչու է մերժվել, և որևէ հիմնավորում չինի, որովհետև հետագայում դիմելու համար դա հնարավորություն է ստեղծում սխալների վրա սովորելու: Իսկ առանց հիմնավորման մերժումը, կարծում եմ ՀԿ-ի զարգացմանն ու աճին է խոչընդոտում հետագա ծրագրերին դիմելու համար»:*

(ՖԻՔ մասնակից)

Մեծաթիվ են նաև այն ՀԿ-ները (Տե՛ս [առցանց հարցման տվյալները](#)), որոնք ընդհանրապես չեն դիմում նախարարությունների կողմից հայտարարվող դրամաշնորհային մրցույթներին, քանի որ այն համոզմանն են, որ բյուրոկրատական քաշքշուքները շատ են, կամ ունեն ձևավորված բացասական կարծիք ՔՀԿ-ների պետական ֆինանսավորման մեխանիզմների մասին: Մյուս կողմից էլ, պետական դրամաշնորհների փոքր գումարները ևս հետաքրքրություն

<sup>28</sup> Տաթևիկ Մարգարյան՝ անկախ հետազոտող (Փորձագիտական հարցազրույց՝ Ա. Ղարիբյանի հետ. 28.03.2019 թ. Երևան):



չեն առաջացնում այն ՀԿ-ների մոտ, որոնք առավել մեծ գումարների աջակցություն են ստանում միջազգային և այլ դոնոր կազմակերպություններից:

Այսպիսով, ՔՀԿ-ների և նախարարությունների միջև առաջացել է փոխադարձ անվստահության մթնոլորտ, որը հաղթահարելու դեպքում է միայն հնարավոր ապահովել արդյունավետ հաղորդակցություն:

*«Հիմա մի ՀԿ կարող ա ապրանք է վաճառում, մեկ այլ ՀԿ ծառայություն է մատուցում: Եվ այս առուծախի գործընթացում մենք ոչ միայն վաճառում ենք այդ ապրանքը կամ ծառայությունը, մենք նաև վաճառում ենք կամ առաջարկում ենք վստահությունը: Ամենակարևոր խնդիրը երևի դա է: Ու չկա երևի այդպիսի երկիր կամ պետական համակարգ, որն ընտրություն կատարելիս չձգտի նրան, ում վստահում է»:*

(ՖԽՔ մասնակից)

Ոլորտում առաջացած վստահության ճգնաժամի բացատրության համար մեկ այլ պատճառ ձևակերպվել է հետևյալ կերպ.

*«Վստահությունը կոտրվում է կողքի այն ոչ առողջ փոխհարաբերությունների պատճառով, որոնք մինչ օրս ձևավորվել են: Շատ կազմակերպություններ իրենց խնդիրներով զբաղվելու փոխարեն (կարողությունները հզորացնելու փոխարեն), զբաղվում են մյուս կազմակերպություններին փնտրելով, ցեխ շարտելով: Պատճառներից մեկն էլ դա է, որ նման անարդարացի մրցակցություն կա կազմակերպությունների միջև»:*

(ՖԽՔ մասնակից)

Մյուս կողմից էլ, մրցութային կարգի անցնելով, ՔՀԿ-ները, որոնք տարիների փորձ ունեն և նախկինում համագործակցել են այս կամ այն նախարարության հետ, միանգամից կարող են զրկվել ֆինանսավորումից, ինչն ազդում է ոչ միայն տվյալ ծրագրի կամ ծառայության որակի վրա, այլև բազում ֆինանսական ռիսկեր է առաջացնում հենց այդ ՀԿ-ի հետագա գործունեության համար: Ուստի մրցութային կարգը ևս պետք է մտածված լինի և իրականացվի սահուն կերպով՝ խուսափելու համար նոր մարտահրավերներից: Ըստ փորձագետների, ՖԽՔ մասնակիցների և նախարարությունների ներկայացուցիչների՝ ներկայիս փուլում դրամաշնորհների տրամադրման մրցութային կարգի ընդունումն ու գործարկումը տեղի են ունենում շատ տարերայնորեն և այն ՀԿ-ները, որոնք մշտապես ֆինանսավորվել են կոնկրետ նախարարությունից, այս տարի մի քանի ամիս զրկվել են ֆինանսավորումից ու ստիպված են եղել իրականացնել ծրագրերը՝ այլ ֆինանսական միջոցներ ներգրավվելով:

*«Այս դեպքում ևս պետք է անցումը շատ սահուն անել, այսինքն ֆինանսավորումը տալ, այդ ընթացքում մրցութն անել, ու նոր հաջորդ տարում հնարավորություն տալ մրցութին մասնակցելու, որպեսզի ՀԿ-ների ֆինանսական կայունությունը չթուլանա: Բնականաբար ՀԿ-ների համար սա շատ ռիսկեր է պարունակում»:*

(Փորձագետ)

Այժմ կառավարության որոշման մեջ ասվում է, որ տրվում են սուբսիդիաներ, դրամաշնորհներ, նվիրատվություններ, նվիրաբերություններ և իրականացվում է ծառայությունների պատվիրակում ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին, սակայն կարգը, թե ինչպես պետք է այդ ամենը տրամադրվի, չի նշվում: Նշված չէ նաև, որ նախարարությունների կողմից ՔՀԿ-ներին մրցութային կարգով ֆինանսական միջոցների տրամադրման ընթացակարգերը պետք է լինեն հրապարակային, թափանցիկ, ձևավորվեն անկախ հանձնաժողովներ մրցույթների անցկացման համար, հայտադիմումների ձևաթղթեր մշակվեն և այլն:

Այսպես, 2016-2017թթ. ՔՀԿ ներկայացուցիչների հետ նախարարությունները սուբսիդիայի պայմանագրով էին աշխատում, ինչը որոշակի տարրնթերցումների առիթ է ստեղծում այն առումով, թե ինչու պետք է պետությունը սուբսիդավորի ոչ պետական կազմակերպություններին, տվյալ դեպքում նրանց նվազագույն աշխատավարձերի փոխհատուցմամբ:

*«Սուբսիդիան չի կարող մրցութային կարգով տրվի, որովհետև սուբսիդիան կոնկրետ ծախսի փոխհատուցում է: Այսինքն կազմակերպությունը ինչ-որ ծախս է արել ու պետությունը սուբսիդիայի տեսքով փոխհատուցում է: ԲԿԳ քննարկումների ընթացքում ՀՀ ՖՆ ներկայացուցիչը զարմացած էր և տեղյակ չէր, որ ՀԿ-ներին սուբսիդիայի անվան տակ գումար է տրվել: Ասում էր, ո՞նց կարող էր ՀԿ-ին սուբսիդիա տրվել, եթե այն պետական կառույց չէ: Իրենք այդ քննարկումներից հետո որոշեցին, որ ՀԿ-ներին չպետք է տրվի սուբսիդիա, այլ պետք է տրվի դրամաշնորհ, այսինքն՝ դա իրենց համար տարօրինակ էր: Օրինակ՝ «Առաքելություն Հայաստանը» աշխատավարձ է տալիս ու մի քիչ իսկապես արտուրդ էր, թե ինչու է պետությունը սուբսիդիա տրամադրում մարդկանց, որոնք պետական մարմնի ներկայացուցիչ չեն»:*

(Փորձագետ)

Այս առումով նաև պարզ չէ, թե օրինակ մարզական ֆեդերացիաների ֆինանսավորումը ինչպես պետք է տեղի ունենա, երբ ամբողջությամբ անցում կատարվի մրցութային կարգին, քանի որ նրանք ամեն տարի հստակ գումարի չափով ֆինանսական աջակցություն են ստանում ՀՀ ՄԵՀՆ-ից: Նույնը նաև վերաբերում է ազգային փոքրամասնություններին, որոնց ևս հաստատուն գումարի չափով ֆինանսական աջակցություն է տրամադրվում<sup>29</sup> (տե՛ս աղյուսակ 13.):

Մրցութային կարգին ամբողջությամբ անցնելու համար մեկ այլ խոչընդոտ է «Գնումների մասին ՀՀ օրենքի» անկատարությունն ու դրա կիրառման ընթացքում առաջացող բազմաթիվ սահմանափակումները, որոնք աշխատում են շրջանցել թե՛

<sup>29</sup> ՀՀ կառավարության շխատակազմի ղեկավար-նախարարի 2017 թ. հունվարի 31-ի N 41 –Ա հրաման

ՔՀԿ-ները, թե՛ նախարարությունները: Վերջիններիս պնդմամբ «Գնումների մասին ՀՀ օրենքը» կարիք ունի լրամշակման, որպեսզի նախարարությունները կարողանան ավելի որակյալ ու պատշաճ մակարդակի ծառայություններ ունենալ մրցույթների հայտարարման արդյունքում: Նմանատիպ մրցույթները չպետք է անցկացվեն այն ոլորտներում, որտեղ ծրագրերի արդյունավետությունը կախված է դրա շարունակականության հետ և բովանդակային կատարման համար անհրաժեշտ է պետական ֆինանսավորում, որը կհամապատասխանի բյուջեում նախանշված ոչ ֆինանսական ցուցանիշներին: Այս ամենը հաշվի առնելով՝ նախարարություններն աշխատում են խուսափել այդ ընթացակարգերից և ուղղակի պատվիրակել որոշ ծառայություններ իրենց հայտնի կազմակերպություններին:

*«Մրցույթի տարբերակը արդյունավետ չեմ համարում, քանի որ ամեն ինչ չի հնարավոր մրցույթով իրականացնել՝ անկախ նրանից, որ շուկայում կա այն մրցակցող կազմակերպությունը, որը կարող է տվյալ ծառայությունները մատուցել: Նախ, գնումների համակարգն այսօր շատ խրթին ու բարդեցված է: Խճճված ու ինքն իրենից շատ բարդություններ առաջացնող օրենք է, որի մեջ ես կանոնակարգում չեմ տեսնում: Մեկը բյուջեի տնօրինման պահով: Այս տարվա բյուջեով այնպիսի արտուրդ իրավիճակ են ստեղծվել գնումների մասով, որ ասում է, եթե դու այսօր այս տարվա ԵՄ կողում<sup>30</sup> ունես տնտեսում, դու իրավունք չունես այլ տեղ տեղափոխելու կամ օգտագործելու, դու պետք է վերադարձնես բյուջե: Այսօր շուկայում ոչ ոք չի կարող կանխատեսել որևէ ապրանքի կամ ծառայության գին, այդ պատճառով մրցույթ է անում ու պարզվում է, որ այն թանկ է կամ հակառակը: Եվ ես չգիտեմ, թե ինչ անեմ, երբ այդ ծառայության գինը բարձրացել է ու ես էլ չունեմ տնտեսումն օգտագործելու հնարավորություն ու մի քանի անգամ մրցույթ եմ հայտարարել իմ ուզած գնով ապրանք կամ ծառայություն գտնելու համար առաջարկ չի եղել: Ես չգիտեմ ինչ անեմ, բայց ունեմ մեկ այլ միջոցառում, որտեղ ունեմ տնտեսում, բայց չեմ կարողանում ձկուն ձևով իմ տնտեսումը բերել այստեղ՝ հիմնավորելով, որ այդ տնտեսման կարիքը ես ունեմ ու փաստացի ներկայացնում եմ, որ 2 անգամ մրցույթը չի իրականացել: Ես չեմ կարողանում ձկուն այդ գործընթացը կառավարել ու ստիպված որոշման նախագիծ եմ կազմում, մտնում եմ բյուջե, որպեսզի իմ տնտեսումները վերադարձնեմ պահուստային ֆոնդ, որ այնտեղից նորից բերեմ հատկացնեմ ինձ նույն միջոցառման կամ ծրագրի համար: Այդ անում եմ, որպեսզի ես կարողանամ իմ գումարը տնօրինեմ: Բայց դա նշանակում է, որ ես դեռ կարծիքներ պետք է հավաքեմ, նախագիծ ներկայացնեմ, որ ընդամենը իմ գումարը այստեղից այնտեղ դնեմ, ավելի կոնկրետ՝ ես «տուն-տունիկ» եմ խաղում: Նույնը ծրագրերի մասով է: Ես չգիտեմ, թե եթե մրցույթ հայտարարեմ, քանի ամիս հետո կկարողանամ ունենալ արդյունք այս ամենը*

<sup>30</sup> Տե՛ս [ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 11-ի N 1391 - Ն որոշումը](#)

*հաշվի առնելով: Ստացվում է, որ տարին անցավ, իմ ծրագիրը խափանվեց, չստացվեց: Դա մեկ: Հետո ամեն բան չի, որ պետք է մրցույթով իրականացնել: Շատ ծրագրեր դրված է, որ մենք պետք է մրցույթով անենք, մենք աշխատում ենք դա փոխել, որ դրամաշնորհով պատվիրակենք, որովհետև ծրագրերը մասնավոր գաղտնիքներ են պարունակում, որ չպետք է բոլորն իմանան: Մասնագիտական որոշ բաներ կան, որ քո երկրի համար ռազմավարական նշանակություն ունեն, օրինակ՝ դու չես հայտարարի, թե քո երկրում որքան է դաբադը, քանի որ դա գաղտնիության տարր ունի: Այսօր մենք չենք կարող այդքանը բացահայտել ու համոզել, որ սա չի կարելի մասնավորին տալ: Սա պետք է պատվիրակվի ու արվի այն լաբորատորայի կողմից, որոնք պետական են»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Թե՛ նախարարությունները, թե՛ ՔՀԿ ներկայացուցիչները ցանկանում են օրենսդրական այնպիսի կարգավորում կամ փոփոխություն իրականացվի, որով նրանք հնարավորություն կունենան օգտվելու իրենց տնտեսած գումարներից:

Այսպիսով նախարարությունների կողմից անցկացվող դրամաշնորհային մրցույթները հասանելի չեն բոլոր ՔՀԿ-ների համար, բացի այդ կան բազմաթիվ բյուրոկրատական քաշքշուքներ, որոնք արհեստականորեն պատնեշներ են ստեղծում դրամաշնորհային մրցույթների ընթացակարգերում: Նման արհեստական բարդությունների արդյունքում երբեմն նախարարությունների կողմից հայտարարված դրամաշնորհային և գնումների մասին մրցույթները չեն կայանում, որի արդյունքում էլ նախարարությունը (իմանալով նաև այդ մրցույթները նման կերպ չեղարկելու բոլոր մեխանիզմները) կրկին ընտրում է այն կազմակերպություններին, որոնց հետ ի սկզբանե ցանկանում էր համագործակցել:

### **Հանրային իրազեկման և ՔՀԿ-ների հետ արդյունավետ հաղորդակցության մեխանիզմները**

Չնայած ՔՀԿ ներկայացուցիչներից շատերը ունեն ժամանակակից տեղեկատվական տեխնոլոգիաներից օգտվելու հմտություններ և կարող են հեշտությամբ անհրաժեշտ տեղեկատվությունը գտնել համացանցում, այդուհանդերձ, ՖԻՔ և առցանց հարցմանը մասնակիցների կարծիքով նախարարությունները պետք է հանրային իրազեկման նպատակով հանդիպումներ, ֆոկուս խմբային քննարկումներ և հանրային լսումներ կազմակերպեն ընդլայնելու համար ՔՀԿ-ների հետ իրենց համագործակցության շրջանակը ([տե՛ս աղյուսակ 11](#)): Կայքէջերում պարզապես հայտարարություն տեղադրելով հնարավոր չէ ապահովել դիմումատուների լայն շրջանակ: Ուստի տեղեկատվությունը սպառվում է միայն նեղ շրջանակներում, որի պատճառով էլ նախարարությունների հետ համագործակցող ՔՀԿ-ների շրջանակը տարեցտարի չի թարմանում: Մյուս կողմից էլ տեղեկատվությունը կարող է որոշակի

ժամանակահատվածով անհասանելի դառնալ տվյալ կայքէջում տեխնիկական խնդիրների առաջացման պատճառով: Այս առումով անհրաժեշտ է ընտրել տեղեկատվության տարածման ավելի լայն շրջանակ՝ թիրախային ու մատչելի դարձնելով այն բոլոր շահագրգիռ կառույցների համար:

*«Շատ հաճախ մենք ականջալուր ենք լինում, որ նախարարությունը հանրային քննարկում կամ լսումներ է արել, որին մասնակցել են որոշ քանակությամբ ՀԿ-ներ: Այդ մասին լսում ու զարմանում ես, որովհետև դրա մասին նախապես տեղյակ չենք եղել՝ որպես շահագրգիռ կառույց: Այդ հանրային լսման հրավերն էլ նախարարությունը ընտրովի է ուղարկում իր սիրելի կամ ոչ սիրելի ՀԿ-ներին կամ ՔՀԿ կառույցներին: Այսինքն թափանցիկություն ասվածը պետք է հասանելի լինի բոլորին: Հիմա թափանցիկությունը կհսով չափ է ապահովվում»:*

(Փորձագետ)

Փորձագետների և ՔՀԿ ներկայացուցիչների մեծամասնության կարծիքով հանրային լայն իրազեկումն առաջին քայլն է, որով նախարարությունները կարող են փոխադարձ համագործակցության եզրեր գտնել ՔՀԿ-ների հետ: Ըստ ՔՀԿ ներկայացուցիչների՝ իրազեկվածության խնդրից բացի, նախարարությունների կողմից դրամաշնորհային մրցույթների կազմակերպվածության առումով ևս բազմաթիվ խնդիրներ կան՝ թերի է փաստաթղթային կազմն ու մրցույթների փաթեթները ոչ լիարժեք են ներկայացված, իսկ հետադարձ կապի ապահովման միջոցները զարգացած չեն: Նախարարությունները չունեն համապատասխան ենթակառուցվածքներ դրամաշնորհային մրցույթների անցկացման համար՝ չկան հատուկ մասնագիտացված ստորաբաժանումներ, աշխատակիցները տեղյակ չեն միմյանց աշխատանքներից և մրցույթների ընթացակարգերից, երբեմն առաջանում է մասնագետների առկայության խնդիր, քանի որ հեռախոսազանգերին հազվադեպ են պատասխանում և այլն: Մրցույթներին վերաբերող ցանկացած տեղեկատվություն ճշտելու դեպքում մեծ դժվարությամբ են գտնվում համապատասխան մասնագետները, ովքեր նախ հասանելի կլինեն, երկրորդ հերթին՝ կկարողանան ճիշտ արձագանքել և անհրաժեշտ տեղեկատվությունը մատուցել ընթացակարգերի վերաբերյալ. *«այսինքն, թե ինչպես դիմեն, ինչ ընթացակարգով, ինչ փաստաթղթային կազմով, ինչ ժամանակացույցերով և այլն»* (փորձագետ):

Ըստ ՖԽՔ մասնակիցների՝ նախարարությունները չունեն նաև համապատասխան հմտություններ ու փորձառություն ՔՀԿ-ների հետ աշխատելու համար:

*«Ինձ թվում է խնդիրը երկուստեք է: Եթե կառավարությունն իսկապես ցանկանում է իրական մրցույթ անցկացնել ու թափանցիկ, հասանելի դարձնել բոլոր ՔՀԿ-ների համար, ապա իրենք գոնե պետք է բազա ունենան, եթե ոչ 100 տոկոսանոց, գոնե 98*

*տոկոսանոց, որ կարողանան իրազեկել ՔՀԿ-ներին: Իմ կարծիքով իրենց մոտ այդ բազան առկա չէ, կամ էլ ՀԿ-ների մասին լիարժեք կերպով ինֆորմացված չեն»:*

(ՖԽՔ մասնակից)

Մյուս կողմից էլ ՖԽՔ մասնակիցներն այս խնդիրը կապում են նաև ՔՀԿ-ների պասիվության հետ՝ պատճառաբանելով, որ իրենք պետք է նախանձախնդիր լինեն դիմելու դրամաշնորհներին, քանի որ նախարարության կայքէջերում կան հղումներ, որոնք կարող են ուսումնասիրել ու գտնել անհրաժեշտ ողջ տեղեկատվությունը: Խնդիրը շատերը համարում են երկուստեք փոխապայմանավորված, այսինքն՝ ՀԿ-ների մոտ չկա մրցույթին դիմելու ու անհրաժեշտ տեղեկատվությունը գտնելու շարժառիթ, և՛ նախարարությունների մոտ՝ այդ տեղեկատվությունը հնարավորինս պարզ ու մատչելի դարձնելու համար:

Հանրային իրազեկումից բացի անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել քննարկումներ և աշխատաժողովներ ՔՀԿ-ների և նախարարությունների միջև, որպեսզի մշակվեն ու առաջարկվեն մրցույթների անցկացման համար հստակ չափորոշիչներն ու ընթացակարգերը: Նաև պարզաբանումներ տրվեն մրցույթային փաթեթների լրացման կարգի վերաբերյալ այնպես, ինչպես որ ՔՀԿ-ներն են դրամաշնորհային մրցույթները հայտարարելիս բաց միջոցառման կանչ հայտարարում ու մանրամասն բացատրում դրամաշնորհի տրամադրման կարգը: Այնուհետև պետք է ստեղծել փորձագիտական հանձնաժողովներ, որոնք կգնահատեն մրցույթի արդյունքում ստացված հայտադիմումները:

Վերոնշյալ բոլոր գործողությունները պետք է իրականացնել բաց և թափանցիկ ընթացակարգերով, որոնք կլինեն նպատակային և արդյունավետ:

*«Վերջերս ԲՆ-ի կողմից հայտարարված դրամաշնորհային մրցույթի հայտը, որ կարդում էի, այսինքն՝ մրցույթի ձևանմուշը, պարզորոշ երևում էր, որ այն հնարավորություն է տալիս անհավասար մրցակցության դաշտ ստեղծել հայտատուների միջև, որովհետև ես որպես ՀԿ, եթե լրացնում եմ այն ու այնտեղ հստակեցված չեն մրցույթի պահանջները, և մյուս ՀԿ-ն, որն իրենց պահանջներով է կոնկրետ առաջնորդվում, մեր մեջ ակնհայտորեն առաջանում է մրցակցության անդունդ»:*

(ՖԽՔ մասնակից)

Նախարարություններից մշտապես ֆինանսական աջակցություն ստացած ՔՀԿ ներկայացուցիչների հաղորդմամբ մրցույթային կարգն էականորեն ոչինչ չի փոխել նախարարությունների հետ իրենց ունեցած պայմանագրերի դրույթներում, քանի որ իրենք նախկինի պես ստանում են միևնույն գումարի չափով ֆինանսական աջակցություն՝ առաջարկելով միևնույն ծառայությունները, պարզապես փոխվել է պայմանագրի ձևը (սուբսիդիայի պայմանագրերը փոխվել են դրամաշնորհային պայմանագրով):

Փորձագետների կարծիքով այն, որ նախարարությունը տարիներ շարունակ որևէ ծրագրի կամ ծառայության մատուցման համար համագործակցել է որոշակի կառույցների հետ, և հաշվի առնելով նրանց փորձն ու արհեստավարժությունը, վստահություն չունի նորերի հանդեպ, հիմնավոր փաստարկ չէ մրցույթների միջոցով ստեղծարարությամբ, նորարարական գաղափարներով, տեխնոլոգիական նոր լուծումներով և փորձով օժտված կառույցների հետ չհամագործակցելու համար:

Չնայած միջազգային փորձի տեղայնացումը բավականին բարդ է հաշվի առնելով մեր իրականության յուրահատկությունները, բայցևայնպես փորձագետներից մի մասի կարծիքով հնարավոր է փոխառել և հաջողությամբ տեղայնացնել պետության և ՔՀԿ-ների միջև արդյունավետ հաղորդակցության որոշ մեխանիզմներ:

*«Օրինակ շատ երկրներում, որոնք որ մեզ պես զարգացող երկրներ են՝ Մլովակիա, Հունգարիա, կա մեկ տոկոս օրենքի գաղափար, որ յուրաքանչյուր գրանցված աշխատող իր եկամուտից կամ աշխատավարձից մեկ տոկոսն իր կամարտահայտությամբ ամեն ամսվա կամ տարվա վերջում փոխանցում է որևէ կազմակերպության, որը գործունեություն է ծավալում ինչ-որ սոցիալական խմբերի կամ խնդիրների լուծման ուղղությամբ, ծրագրերի իրականացման համար: Մենք Հայաստանում ունենք շուրջ 5000 գրանցված ՀԿ և շատ լավ կլինի, որ եթե մենք տեղյակ լինենք որևէ կազմակերպության գործունեությունից ու ծրագրերից, մենք մեր նախընտրությամբ գումար հատկացնենք տվյալ կառույցների: Եվ այդ դեպքում ՔՀԿ-ները կհիմանան իրենց ֆինանսական կայունության ապահովման հնարավորությունները և կախված չեն լինի նախարարություններից կամ դոնոր կազմակերպություններից, ինչը կայունություն կապահովեր իրենց գործունեության համար: Այսօր ոլորտի ամենամեծ բացը հենց այդ անկայունությունն է, քանի որ եթե կա դրամաշնորհ, ՔՀԿ-ն գոյատևում է, եթե չկա, ուրեմն չի աշխատում ու կանգնում է փաստի առաջ: Այս պահին մինչև չլուծվի մեր քաղհասարակության ֆինանսական կայունության հարցը, որևէ մոդելի տեղայնացում հնարավոր չէ պատկերացնել»:*

(Փորձագետ)

**Սոցիալական գործընկերության հեռանկարները. ՔՀԿ-ների և ՏԻՄ-երի միջև համագործակցության հնարավորություններն ու առկա դժվարությունները**

Իրավիճակի նկարագրություն: Հետազոտությանը մասնակցած փորձագետների և առանցքային տեղեկատուների համոզմամբ համայնքապետարաններն ու ՏԻՄ-երը սոցիալական գործընկերության առանցքային օղակներից են, որոնց հետ համագործակցության պայմաններում հնարավոր է ապահովել ՔՀԿ-ների

համաչափ զարգացումը երկրի ողջ տարածքում՝ հանրապետական ճյուղային մակարդակներում իրականացնելով ու մատուցելով ավելի որակյալ ծառայություններ ու ծրագրեր:

Ներկայումս երկրում կան համայնքապետարանների հետ ՔՀԿ-ների համագործակցության հաջողված փորձեր, երբ ՔՀԿ-ների՝ համայնքային խնդիրների լուծմանն ուղղված առաջարկությունները հաշվի են առնվել և քննարկվել են համայնքապետարանի աշխատակիցների կողմից<sup>31</sup>:

*«Մենք ունենք ծրագիր, որը կոչվում է սոցիալական համագործակցության համայնքային մոդել: Էությունը հենց կայանում է դրանում, որ մենք համայնքապետարանի հետ ուղղակիորեն ենք աշխատում. և՛ համայնքը, և՛ բիզնես սեկտորը, և՛ այլ կառույցները ՀԿ-ների հետ միասին սոցիալական գործընկերության մի մոդել են ներդնում, որի շրջանակներում նույն համայնքապետարանը մեզ տարածք տվեց, բարեկարգեց այն ու հիմա 2 հաստիք է իր բյուջեով պահելու և ծառայություն է պատվիրակելու այդ կենտրոնին: Ինքն իհարկե միջին մասնագիտական և կարիերայի կողմնորոշման կենտրոն է ու այդ ուղղությամբ է աշխատում, բայց կարծում եմ, որ այն իդեալական մոդելներից մեկն է լինելու, որը հետո հուսամ, որ կտարածվի Հայաստանում»:*

(ՖԽՔ մասնակից)

Ցանկացած ծրագիր, որն իրականացվում է համայնքում, պետք է համագործակցի համայնքապետարանի հետ: Ավելին՝ յուրաքանչյուր համայնքապետարան իր բյուջեում ունի սոցիալական կամ այլ ոլորտների ՀԿ-ների հետ աշխատելու համար բյուջետային հատկացումներ, որոնք, ըստ ՔՀԿ ներկայացուցիչների, անարդյունավետ են ծախսվում:

ՖԽՔ մասնակիցների կարծիքով համայնքների ու ՀԿ-ների միջև համագործակցության նոր ձևաչափ է անհրաժեշտ, որում համայնքների և ՔՀԿ-ների հարաբերությունները կլինեն գործընկերային, այլ ոչ թե պայմանավորված ֆինանսական շահերով:

*«Վերջերս մի տեղ հանդիպման էինք ու մի փոքր քննարկում արեցինք, թե ինչ կարող է համայնքը տալ ՀԿ-ներին ու հակառակը: Համայնքի ներկայացուցիչներից 90 և ավելի տոկոսի խոսքը սկսում էր փողից: Ասում էին դուք փող տվեք, մենք ամեն ինչ կանենք»:*

(ՖԽՔ մասնակից)

ՖԽՔ մասնակիցներն այն կարծիքին էին, որ ՀԿ-ները, լինելով ավելի ճկուն և ստեղծագործ, կարող են բարձրացնել համայնքապետարանների աշխատանքի արդյունավետությունն ու իրականացվող ծրագրերի ազդեցությունը համայնքում:

<sup>31</sup> Տե՛ս [«Սոցիալական գործընկերության համայնքային մոդելի արդյունավետության ապահովման ուղիները» կլոր սեղան քննարկում:](#)



*«Եթե համայնքը կարողանա մեզ կառավարման մաս դարձնել կամ համայնքի կառավարման գործընթացում մասնակցայնությունն ապահովի, թեկուզ և նույն սոցիալական գործընկերության մոդելը ներդնելով, արդեն մեր ելակետը կլինի շատ լավ: Ոչ թե ասի, թե դու ինչ ծրագիր կարաս բերես, որ մանկապարտեզ նորոգես: Բնականաբար որպես համայնքային ՀԿ՝ բոլորս ցանկանում ենք համայնքի համար որևէ ենթակառուցվածք զարգացնել: Բայց եթե համայնքն առաջարկի կառավարման մաս դառնալ ու փորձագիտական ներուժը բարձրացնել, քննարկումներն առավել արդյունավետ ընթացք կունենան»:*

(ՖԽՔ մասնակից)

Միևնույն ժամանակ ՔՀԿ ներկայացուցիչների (ՖԽՔ մասնակիցների) և փորձագետներից երկուսի կարծիքով համայնքապետարանն ու Երևանի քաղաքապետարանն ընտրողաբար են մոտենում գործընկեր կազմակերպություններ ունենալու հարցում և սովորաբար ֆինանսավորում են այն կառույցներին, որոնց հետ նախկինում համագործակցության փորձ են ունեցել: Այսինքն՝ չկան թափանցիկ և բաց ընթացակարգեր, որոնցով ՔՀԿ-ները կարող են առողջ մրցակցության արդյունքում ստանալ որևէ միջոցառման կամ ծառայությունների մատուցման համար ֆինանսական աջակցություն համայնքապետարաններից, մարզապետարաններից և քաղաքապետարաններից: Բացի այդ, չկան ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցություն տրամադրելու համար մշակված կանոնակարգեր, որոնց շուրջ հնարավոր կլինի հստակ պարզաբանումներ ստանալ:

*«Քաղաքապետարանի պաշտոնյան ուղիղ կերպով մեր աշխատակցին ասել էր, որ այս հայտարարությունը ձևական է և վաղուց որոշված է՝ ով է հաղթելու: Դա էս ասում եմ մինչև հեղափոխությունը: Այսինքն՝ մեզ ասացին՝ դուք մի՛ դիմեք՝ քիթներդ մի խոթեք, չնայած մենք մեր փորձով ու կարողություններով ամբողջությամբ համապատասխանում էինք պահանջներին: Մենք այդ մրցույթին պարզապես չդիմեցինք, քանի որ ընթացակարգը շատ բարդ էր ու մենք չէինք կարողանում պարզաբանումներ ստանալ: Ու երբ դու փորձում էիր հասկանալ, այն մարդիկ ովքեր քեզ պետք է ուղղորդեին տեղեկատվությամբ, ասում էին իզուր եք դիմում»:*

(Փորձագետ)

Ըստ ՖԽՔ մասնակիցների, շատ մարզերում ՀԿ-ների բաշխվածությունը անհամաչափ է, իսկ ակտիվ ՀԿ-ների թիվը՝ խիստ փոքրաթիվ, այդ իսկ պատճառով համայնքապետարաններն ունեն իրենց նախընտրած ՔՀԿ-ների շրջանակը, որոնց քիչ թե շատ ծանոթ են և տարիներով աշխատելով վստահում են մշակութային միջոցառումների անցկացումը, որոնց համար էլ համայնքապետարանի բյուջեից կրկին առանց որևէ հստակ ընթացակարգի, կամայականորեն կնքում են կամ դրամաշնորհային, կամ նվիրատվության, կամ

ծառայությունների մատուցման, կամ սուբսիդիայի պայմանագիր: Մեկ այլ տարբերակում ՀԿ ներկայացուցիչներից մեկը նշեց, որ ինքն իր նախաձեռնությամբ է դիմում համայնքապետարանին որևէ միջոցառում կամ ծառայություն մատուցելու համար՝ ֆինանսական աջակցություն հայցելով: Տվյալ դեպքում ֆինանսական հատկացումն արվում է կա՛մ ավագանու որոշմամբ, կա՛մ համայնքի ղեկավարի որոշմամբ:

Առաջարկներ և պարզաբանումներ:

- Ինստիտուցիոնալ առումով ՔՀԿ-ների և պետության միջև փոխհարաբերություններն այնպես կազմակերպել, որպեսզի ՏԻՄ մարմիններն ու ՔՀԿ ներկայացուցիչները միմյանց հետ փոխգործակցության դաշտ ստեղծեն, որի արդյունքում կմեծանա վստահությունը մի կողմից ՔՀԿ-ների, մյուս կողմից՝ ՏԻՄ-երի հանդեպ:

*«ՏԻՄ-երի հետ համագործակցության արդյունքում գուցե ՔՀԿ-ներին գրասենյակ ու համակարգիչ տրամադրվի, ինչը և՛ մարդկային ռեսուրս կլինայի, և՛ ֆինանսական միջոցներ, և որ կարևորն է՝ պետական ՏԻՄ մարմինների նկատմամբ հանրային վստահության էական աճ կլինի: Մենք կունենանք ոչ թե քաղհասարակության բախումնային մոդել, որտեղ ՀԿ-ներն ի դեմս պետության կտեսնեն միակ թշնամու կամ թիրախի, որ միայն պետք է քննադատել ու իշխանափոխությունը օր առաջ անել, և պետությունն էլ կհասկանա, որ քաղհասարակությունն էլ իր թշնամին չէ, այլ մի գործուն ուժ է, որի հետ կարելի է համագործակցել ու տեսնել օբյեկտիվ քննադատի: Հեռանկարը պետք է լինի գործակցային մոդելի զարգացումը»:* (Փորձագետ)

- Համայնքապետարանների և քաղաքապետարանների բյուջեում ավելացնել բյուջետային տող ՔՀԿ-ների հետ համատեղ ծրագրերի իրականացման համար: (Համայնքներին ևս տրվում են սուբվենցիաներ, որոնք կարելի է ուղղել համայնքում առկա նախաձեռնող խմբերի ակտիվացմանը՝ ստեղծելով այդ խմբերի ու ՔՀԿ-ների միջև համագործակցային դաշտ):

- Համայնքների ծրագրային բյուջեներում կան ֆինանսական հատկացումներ սոցիալական ծառայությունների մատուցման և ՔՀԿ-ների հետ համագործակցության համար, սակայն այդ գումարը մի կողմից շատ փոքր է, որպեսզի ՀԿ-ներին պատվիրակվեն որոշակի ծառայություններ, մյուս կողմից էլ ՏԻՄ-երը ՔՀԿ-ների հետ համագործակցության փորձառություն չունեն: Նման մշակույթ ձևավորելու և սոցիալական գործընկերությունը համայնքների մակարդակում խթանելու համար անհրաժեշտ են նախ քաղաքական

կամք, այնուհետև՝ օրենսդրական փոփոխություններ, որոնք կխթանեն այդ համագործակցությունը:

- Համայնքապետարանների ծրագրային բյուջեում պետք է նշել ու հստակեցնել որևէ տողով ՔՀԿ-ների հետ համագործակցության հնարավորությունները, որը ներկայումս բացակայում է:  
*«Համայնքները ևս ունեն ՔՀԿ-ներին տրամադրվող գումարների չափ, որը կրկին ավագանին է որոշում, թե ում տրամադրի: Կրկին մրցույթ չկա»:*  
(Փորձագետ)

### **Տարբեր գերատեսչություններում առկա իրավիճակի նկարագրություն**

Այս բաժնում կներկայացվեն յուրաքանչյուր նախարարությունում պետական դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերը, ֆինանսական աղբյուրներն ու դրամաշնորհների կամ ֆինանսական այլ միջոցների տրամադրման առանձնահատկությունները:

#### **Կրթության և գիտության նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: Նախարարությունը մեր ուղարկած հարցմանը պատասխանել է՝ տրամադրելով տեղեկատվություն միայն ֆինանսական հատկացում ստացած կազմակերպությունների անունների, տրամադրվող գումարի չափի ու պայմանագրի տեսակների մասին: Ֆինանսավորված կազմակերպությունների կատարած աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ չեն ներկայացվել: Մինևս ժամանակ, ինտերակտիվ բյուջեի «պայմանագրեր» բաժնում որևէ պայմանագիր բեռնված չէ: Հետևապես, մեր մշտադիտարկման չափորոշիչներով 2016-2017թթ. ՀՀ ԿԳՆ-ի կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին տրամադրվող ֆինանսական հատկացումների հաշվետվողականությունն ու թափանցիկությունը ցածր է: Հարցման պատասխանում նախարարության ներկայացրած տեղեկատվությունն էականորեն տարբերվում է ոչ միայն ՀՀ ՖՆ-ի 2017 թ. նախարարության փաստացի ծախսերի վերաբերյալ տվյալներից, այլ նաև 2017 թ. բյուջեի կատարման մասին հաշվետվության փաստաթղթից (տե՛ս աղյուսակ 12): Արդյունքում նկատելի են բավականին շատ տարբերություններ թե՛ ֆինանսական միջոցների, թե՛ ֆինանսական աջակցություն ստացած կազմակերպությունների վերաբերյալ տեղեկատվության միջև: Պետք է հավելել նաև, որ ԲՈՒՀ-երից շատերն իրենց կազմակերպաիրավական ձևը փոխելով ՊՈԱԿ-ից վերածվել են հիմնադրամների, հետևաբար բյուջեում «այլ ընթացիկ դրամաշնորհներ» տողով երևում են նաև հիմնադրամ դարձած ուսումնական հաստատություններին արված ֆինանսական

հատկացումները, օրինակ՝ ԵՊՀ-ին տրամադրած դրամաշնորհի մասին տեղեկատվությունը:

*«Հիմա շատ ԲՈԻՀ-եր ձգտում են դառնալ հիմնադրամ, որպեսզի իրենց կառավարման համակարգը հստակեցվի՝ կառավարման խորհուրդ ունեն, գիտական խորհուրդ ունեն, ռեկտոր ունեն և այլն, իսկ ՊՈԱԿ-ների օրենսդրությունը թույլ չի տալիս այդ ամենն ունենալ: Այդ առումով ՊՈԱԿ-ը ճկունությունը չունի, բայց կարծես թե հիմնադրամն ունի»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Ինչպես և մյուս նախարարություններում, այնպես էլ ՀՀ ԿԳՆ-ում հիմնադրամներից շատերը պետական աջակցությամբ գործող կառույցներ են: Մասնավորապես, ինտերակտիվ բյուջեում առկա է տեղեկատվություն, որ նախարարությունը 2017 թ.-ին, բացի մեզ ուղարկած կազմակերպությունների ցանկից, դրամաշնորհներ է տրամադրել «Երևանի պետական համալսարան» ՀՄԴ-ին 5 անգամ, ինչպես նաև «Հայաստանի երկրապահ կամավորական» միությանն ու մի շարք մարզական ֆեդերացիաների:

Նախարարության կողմից ՔՀԿ-ներին տրամադրվող բյուջետային գումարների մեծ մասը շարունակական ծրագրեր են, որոնք իրականացվում են նախորդ տարիներին կնքված պայմանագրերին համապատասխան, ընգրկված են բյուջեի մասին օրենքում՝ առանց մրցույթի տրամադրվող դրամաշնորհների ցանկում: Երբեմն հատկացվող գումարի չափը հաջորդ տարում կրկնվում է միննույն չափով (տե՛ս [Աղյուսակ 12](#)):

2016 թ. և 2017 թ. համեմատությամբ ավելացել են 3 ՀԿ-ներ, մասնավորապես՝ «Նոր սերնդի դպրոց» ՀԿ, «Հուլիսի կամուրջ» ՀԿ-ն և «Ազգային երգ ու պարի ակադեմիա» կրթամշակութային հիմնադրամը, որը ստեղծվել է Այբ հիմնադրամի նախաձեռնությամբ: ՔՀԿ-ներից շատերը պետական ՀՄԴ-ներ են կամ պետական ծրագրերի շրջանակներում ֆինանսավորվող կազմակերպություններ: Բացի այդ, նախարարությունը սուբսիդային պայմանագրերով համագործակցում է մի շարք հրատակչությունների հետ, մասնավորապես 2017 թ.-ին ՀՀ ԿԳՆ-ն սուբսիդավորել է 47117,30 հզր դրամ մանկական, մանկապատանեկան թերթերի ու ամսագրերի հրատարակման ծառայությունները: Յուրաքանչյուր տարի այդ գումարը որոշակի շեղումներով միննույն նպատակով հատկացվում է հրատարակչական կազմակերպությունների, որոնց կազմակերպատիրական ձևը կամ ՍՊԸ կամ ՓԲԸ է:

Նախարարության հետ համագործակցող պետական ՀՄԴ-ները ֆինանսավորվում են «նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող (հասարակական) կազմակերպություններին», «սուբսիդիաներ ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին», «այլ ընթացիկ դրամաշնորհներ»

տնտեսագիտական հոդվածներով, որոնց ուղղվում է ֆինասական աջակցության գերակշիռ մասն առանց մրցույթի:

*«ԵՊՀ-ն դարձել է հիմնադրամ, ու բոլորը բողոքում էին, քանի որ ուզում էին մրցույթով անցկացնելին գիտության ոլորտի ֆինանսավորումը որոշ ենթակառուցվածքների համար: Մա պարզապես արտուրդ էր: Այսինքն ուղղակի հիմնադրամ լինելու պատճառով մրցույթ էին հայտարարել ու խառնաշփոթ էր առաջացել: Այն դեպքում, երբ համալսարանն ունի լաբորատորիաներ, որոնք կոնկրետ գիտության ճյուղերն են զարգացնում ու հնարավոր չէ նրանց ծառայությունները մրցույթով պատվիրակել ուրիշների: Այդ լաբորատորայում նստած են գիտնականներ, որ աշխատում են այդ ոլորտում ու գիտությունն են զարգացնում շատ ցածր աշխատավարձերով: Այսինքն բոլորին միանգամից գործազուրկ են հայտարարում մրցութային կարգ սահմանելով: Եթե հիմնադրամները որոշված են, որ կոնկրետ պետական ծրագրով ու ծառայությունների մատուցմամբ պետք է զբաղվեն, իրենք բացվում են հենց այդ նպատակով՝ պետությանը ծառայություններ մատուցելու համար: Բսկ այն հիմնադրամները, որոնք պարզապես ստեղծվել են, կարող են մասնակցել մրցույթներին: Էստեղ ոչ մի խնդիր չկա: Օրինակ՝ գիտության մեջ կան տարբեր դրամաշնորհային ծրագրեր, որոնց բոլորն էլ կարող են մասնակցել՝ և ՓԲԸ-ները, և՛ ՄՊԸ-ները, և՛ ՀԿ-ները: Նույնիսկ անհատ ֆիզիկական անձինք, որոնք հիմա էլ չեն մասնակցում, բայց առաջ կային: Քանի որ շատ դեպքերում փոշիանում էին նման ճանապարհով գումարները, կարգում փոփոխություն արվեց, որ լինի երրորդ անձ, որը կներկայացնի որևէ գիտական կազմակերպություն, որպեսզի այդ գումարները անիմաստ չվատնվեն: Այսօր բոլոր համալսարանները դարձել են հիմնադրամներ, հիմա ի՞նչ, ասել, որ հիմնադրամ են մենք իրենց չպետք է պատվիրակենք ծառայություններ, պետք է մրցույթ անենք: Կարծում եմ, որ իրենք որպես հիմնադրամ ավելի ազատ ու ճկուն են, այդ պատճառով են անցել նման կերպի: Բացի այդ, իրենք ասում էին, որ միջազգային փորձն է դա թելադրում, որ աշխարհում բոլոր ԲՈՒՀ-երը հիմնադրամ են դառնում»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

ԿԳՆ ներկայացրած տվյալների հիման վրա իրենց հետ համագործակցող ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների բյուջետային ծախսերը 2017 թ.-ին (1437191.1 հզր դրամ) 2016 թ.-ի (1202234,9 հզր դրամ) համեմատ աճել են: Ուշագրավ է, որ 2016 թ. և 2017 թ. նախարարությունը դրամաշնորհ է հատկացրել «ԱՅԲ» կրթական հիմնադրամին «Կրթության գերազանցության ազգային ծրագրի» իրականացման համար (654883,0 հզր. դրամ և 666,337.10 հզր. դրամ, համապատասխանաբար)), ինչը նշանակում է, որ մյուս կազմակերպություններին տրամադրված ողջ գումարը միասին վերցված ավելի քիչ է, քան «Այբ» հիմնադրամին հատկացված դրամաշնորհը և կազմում է ընդհանուր գումարի մոտ 54%-ը: 2017 թ. տրամադրված գումարի չափով (274237.4 հզր. դրամ) երկրորդ տեղում է «Աշխատանքային ռեզերվներ» ՀԿ-ն, որին շարունակաբար ամեն տարի ֆինանսական հատկացումներ են արվել «Արտադարձակական դաստիարակության կազմակերպման համար»: 2017 թ. Բյուջեի կատարման մասին հաշվետվության մեջ կա նաև նախարարության կողմից մեկ այլ խոշոր հատկացում «ՀՀ երկրապահ կամավորական միության»-ը ռազմահայրենասիրական դաստիարակությանն ուղղված միջոցառումների (129,795.40 հզր դրամ) և հասարակության շրջանում

գիտելիքների մակարդակի բարձրացմանն ուղղված միջոցառումների (17,000.00 հզր դրամ) անցկացման համար:

Ընդ որում, 2016 թ. և 2017 թ. «Աշխատանքային ռեզերվներ» ՀԿ-ին տրամադրվել է նախարարության կողմից թե՛ սուբսիդիա, թե՛ դրամաշնորհ: 2016 թ. և 2017 թ. նվիրատվություն է տրամադրվել «Նավամոդելային սպորտի հայկական ֆեդերացիա» ՀԿ-ին 5500,0 հզր. դրամի չափով: Իսկ նվիրատվություն և նվիրաբերություն ստացած 3 կազմակերպություններից 2-ը ֆեդերացիաներ են:

Ըստ ՀՀ ՖՆ տվյալների՝ 2016-2017թթ.-ին «սուբսիդիաներ ոչ պետական ոչ ֆինանսական կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով նախարարության բյուջետային ծախսերի գերակշիռ մասը հատկացվել է կազմակերպատիրավական ձևով ՄՊԸ-ներին, որոնք հանդիսանում են իմբազրություններ, ամսագրեր, հրատարակչություններ և ճամբարներ:

2016-2017թթ.-ին բոլոր նշված ֆինանսական հատկացումները ՔՀԿ-ներին առանց մրցույթի են եղել, իսկ տրամադրման կարգը կառավարության որոշումներով է ամրագրված<sup>32</sup>: Ըստ նախարարության ներկայացուցչի՝ ծրագրերն իրականացնելիս սովորաբար իրենք են որոշում այն կառույցներին, որոնց հետ հետագայում համագործակցում են և փոքրաթիվ են այնպիսիք, որոնք ծրագրեր են ներկայացնում ինքնուրույն:

Մյուս նախարարությունների պես համագործակցող կառույցները ներկայացնում են ամենամսյա, եռամսյակային և տարեկան կտրվածքով Բովանդակային և ֆինանսական հաշվետվություններ:

*«Բացի այդ, մրցույթների իրականացման փուլում ստուգումներ են արվել, եթե մեր չափանիշներին անհամապատասխան են լինում դրանք, մենք կարող ենք նույնիսկ կասեցնել ծրագրի իրականացումը: Նման դեպքեր նախկինում ունեցել ենք»:* (Նախարարության ներկայացուցիչ):

Ծրագրերի գնահատման չափանիշներն էլ ըստ նախարարության ներկայացուցչի կախված են տվյալ միջոցառման կամ ծառայության բնույթից ու առանձնահատկություններից: Չկան հստակ մշակված չափորոշիչներ, որոնցով իրենք առաջնորդվում են ծրագրերն ու միջոցառումները գնահատելու համար:

#### Առաջարկներ և պարզաբանումներ:

- Օրենսդրական դաշտի կարգավորման անհրաժեշտություն կա, որպեսզի հասկացվի, թե ոլորտային տարբեր միջոցառումների կամ ծառայությունների մատուցման համար ինչպիսի պայմանագրեր պետք է կնքվեն ՔՀԿ ներկայացուցիչների հետ:

*«Էստեղ հստակեցման կարիք կա, թե ինչպես ենք տրամադրում սուբսիդիան ու դրամաշնորհը: Հստակ պետք է սահմանել, թե ինչ ենք հասկանում*

<sup>32</sup> ՀՀ կառավարության [1515-Ն որոշում](#)ը:

դրանցից յուրաքանչյուրի տակ, այլապես մեկը մյուսի հետ նույնացվում է ու ընթացակարգերն էլ խառնվում են»։ (Նախարարության ներկայացուցիչ)։

- «Նախկինում, եթե օրինակ մրցույթ էր լինում, մենք վերաբաշխումով այն փոխում էինք ուղղակի հատկացման, որպեսզի շատ բարդ ու ձևական ընթացակարգերից զերծ մնանք։ Բացի այդ, մրցույթին հատկացված ժամանակահատվածը շատ կարճ է և հնարավոր չէ այդ ընթացքում որոշել, թե որ ՀԿ-ն կարող է ներկայացված ծառայություններն ամբողջությամբ մատուցել։ Մյուս կողմից էլ, մրցույթի հայտարարված գները մրցութային չեն, այդ պատճառով շատ ծառայությունների որակն ընկնում է»։ (Նախարարության ներկայացուցիչ)։
- Նախարարություններին կից պետական հիմնադրամներ կամ իշխանաձին կառույցներ ստեղծելը կարող է անառողջ մրցակցություն առաջացնել ՔՀԿ-ների միջև, հետևաբար դրանք պետք է հարաբերականորեն անկախ լինեն և հնարավորություն ստեղծեն մյուս ՔՀԿ ներկայացուցիչներին հավասար մրցակցության պայմաններում առաջարկել սեփական ծառայությունները։

### **Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն։ Նախարարության կողմից ֆինանսական աջակցության տրամադրման առաջնահերթություն ներկայացնող ոլորտներ են հանդիսանում ներդրումների, արտահանման, փոքր և միջին ձեռնարկատիրության, զբոսաշրջության զարգացման ոլորտները։ 2016-2017թթ. բոլոր դրամաշնորհները նախարարությունը հատկացրել է առանց մրցույթի. դրանք այն բյուջետային միջոցառումներն են, որոնք նախապես ծրագրվում են և իրականացվում են կանխորոշված կազմակերպությունների կողմից։ Այսինքն՝ ծրագրերն ու միջոցառումները որոշվում են բյուջեի ծրագրային նպատակներից էլնելով։ Ըստ այդ նպատակների՝ նախարարությունն արդեն իրականացնում է իր համար առաջնահերթ նշանակություն ունեցող ծրագրերը։ Նախարարությունը հարցմանը պատասխանել է՝ ներկայացնելով ամբողջական տեղեկատվությունը՝ կցելով եռամսյակային, տարեկան հաշվետվությունները բոլոր այն կազմակերպությունների, որոնք 2016-2017թթ. համագործակցել են իրենց հետ։

Շահագրգիռ կողմերն ու շահառուները հիմնականում նախարարության կողմից ստեղծված պետական հիմնադրամներն են, որոնք իրականացնում են ծրագրերը։ 2016-2017թթ.-ին ՀՀ ՏԶՆ-ն սուբսիդիայի պայմանագրով գրադարանային ու արխիվային ծառայությունների մատուցման նպատակով համագործակցել է «Նորամուծության և ձեռներեցության ազգային կենտրոն» ՊՈԱԿ-ի հետ։ Մնացած բոլոր ՀՄԴ-ները, որոնց հետ նախարարությունը

համագործակցել է, հանդիսացել են նախարարության կողմից ստեղծված պետական ՀՄԴ-ներ:

*«Մենք ավելի շատ աշխատել ենք ՊՈԱԿ-ների և պետական հիմնադրամների հետ, քանի որ իրենք հենց տվյալ ծառայությունների կամ ծրագրերի իրականացման համար են ստեղծված և կոնկրետ այդ ոլորտներում որևէ այլ կազմակերպություն չունի այն կարողությունները, որ մենք նախընտրենք ֆինանսական աջակցություն տրամադրել իրենց, այլ ոչ թե նախարարության հիմնադրամներին կամ ՊՈԱԿ-ներին»:*

(Նախարարության ներկայացուցիչ):

Նախարարության ներկայացուցչի կարծիքով մրցութային կարգը, որը գործարկվում է 2019թ.-ից, մեծապես ձևական բնույթ է կրում և կարող է ազդել ծրագրերի արդյունավետության և շարունակականության վրա: Բացի այդ, իրենք հակված են համագործակցելու պետության կողմից ստեղծված և առավել մեծ ներուժ ունեցող կազմակերպությունների հետ, ինչպես օրինակ՝ «Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ» հիմնադրամն է: Վերջինիս առաքելությունն ու ստեղծումը կապված է հենց այն գերակա խնդիրներով, որոնք նախարարությունը փորձում է լուծել երկրի տնտեսական զարգացման առաջնահերթությունները սահմանելիս: Մյուս ՔՀԿ-ներում չտեսնելով բավարար ներուժ և կարողություններ՝ տվյալ փուլում նախարարությունը չի կարող վստահել նրանց, մինևույն ժամանակ ռիսկի տակ դնելով արդեն իսկ իրականացվող ծրագրերի հետագա ընթացքը: Հետևաբար, այստեղ պետք է հասկանալ, թե ո՞ր նախարարությունների հետ կարող են ՔՀԿ-ներն աշխատել, և ո՞ր ոլորտներում են նրանք առավել կենսունակ ծրագրեր առաջարկում:

Ոչ միայն մեր մշտադիտարկման ընթացքում, այլ նաև հարցազրույցի ու հանդիպման ժամանակ նախարարության աշխատակիցները ներկայացրեցին բոլոր հաշվետվությունները: Բացի այդ, նախարարության կողմից ֆինանսավորվող բոլոր կառույցները տրամադրում են ամսեկան, եռամսյակային և տարեկան հաշվետվություններ ֆինանսական և բովանդակային բաղադրիչներով: Վերջինս նաև որակական բնութագրիչների հիման վրա է տրամադրվում, թե կոնկրետ ծրագրերը ինչ որակական չափանիշներով են իրականացվել ու ինչ արդյունքներ են ունեցել:

Նախարարության ներկայացուցչի կարծիքով ոչ միայն ՀՀ ՏԶՆՆ-ի, այլև մյուս նախարարությունների փորձն ունենալով, որոշվել է, որ պետական բյուջեում նշվեն ծրագրերն ու կոնկրետ այդ ծրագրերն իրականացնող կազմակերպությունները, որը կապահովեր նաև ծրագրերի իրականացման շարունակականությունը և չէր ընդհատվի որևէ մրցույթի պատճառով: Տվյալ ոլորտի ծրագրերը երկարաժամկետ են ու ամենամյա մրցույթները խաթարում են դրանց արդյունավետությունը, և նպատակահարմար չէ մրցութային կարգ



սահմանել այն ծրագրերի համար, որոնք նախապես ունեն համապատասխան կատարող կազմակերպություններ: Սակայն եթե ծրագրերը բնույթով կարճաժամկետ ու մեկանգամյա են, մրցույթ անցկացնելն ավելի ճիշտ կարող է լինել:

*«Մենք ունենում էինք գնումներ, որոնց հայտարարությունները տեղադրում էինք «Հայաստանի հանրապետություն» թերթում և վերջնաժամկետը 30 օր էր, բայց ոչ ոք չէր դիմում դրանց»:*

(Նախարարության ներկայացուցիչ):

ՀՀ ՏԶՆԼ-ի կողմից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունները (Հայաստանի զարգացման ՀՄԴ, ՓՄՁ ԶԱԿ ՀՄԴ, Ձեռնարկությունների ինկուբատոր ՀՄԴ) 2016-2017թթ. ստացել են ֆինանսական աջակցություն «այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով: Նախարարությունը այդ ժամանակահատվածում Գնումների մասին օրենքի համաձայն մրցույթներ չի հայտարարել:

Առաջարկներ և պարզաբանումներ:

- Նախարարություններում նոր գործարկվող դրամաշնորհային մրցույթները չեն ստեղծում հավասար հնարավորություններ բոլոր ՔՀԿ ներկայացուցիչների համար, քանի որ նախարարությունները գլխավորապես ընտրում են այն ՔՀԿ-ներին, ում հետ նախկինում աշխատել են կամ ծանոթ են իրենց:

*« ... ասում են, թե մրցույթները խանգարում են գտնել գործունյա գործընկերոջ, այստեղ էլ ճիշտ չեմ համարում, որովհետև նախկին գործընկերը կամ ՀԿ-ի փորձը կարող է լինել այդ մրցույթի գնահատման ընթացքում լուրջ չափորոշիչներից մեկը՝ այսինքն կազմակերպությունը այդ ոլորտում լուրջ փորձառություն ունի, թե չունի: Բայց միայն փորձառությունը կամ նախկինում աշխատած լինելը վերցնել հանգամանք և ավելի լուրջ ներուժ ունեցող, ավելի տեխնոլոգիապես նորացված ու թարմ գիտելիքներով կազմակերպություններին ասել, որ մենք հին ընկեր ունենք, սա էլ կոպիտ սխալ է: Չէ, ընդհակառակը պետք է այդ մրցույթները անցկացնել բաց, և այն կազմակերպությունը, որն ունի փորձառություն, ինքը արդեն շահեկան դիրքերում է այսպես, թե այնպես: Բայց եթե ավելի ուժեղ կազմակերպություն կա, պետք է գա փոխարինելու: Բա էդ մրցակցային դաշտը պետք է ապահովենք: Ես կարծում եմ, որ դա նախարարություններին իրենց տաքուկ տեղը պահելու կամ իրենց խնդիրները իրենց կաբինետներից դուրս չհանելու հոգեբանությունն է առաջնորդում, որն այդքան էլ ճիշտ չի: Դրա կապակցությամբ էլ հասարակության մեջ ձևավորվում է անվստահություն իշխանական մարմինների նկատմամբ»:*

(Փորձագետ):

## Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավիճակի նկարագրություն: Նախարարությունը 2016-2017թթ. դրամաշնորհներն ու սուբսիդիաները տրամադրել է կառավարության 1937-Ն որոշման համաձայն՝ առանց մրցույթի: Մի շարք կառուցվածքային փոփոխությունների արդյունքում ԱՍՀՆ-ն ՔՀԿ-ներին մրցութային կարգով սուբսիդիաների փոխարեն տրամադրում է դրամաշնորհ, որը կարգավորվում է նախարարի 2017 թ. 163-Ա/1 հրամանով, ինչի հիման վրա հաստատվել է նաև մրցույթի անցկացման կարգը: Դրամաշնորհային մրցույթի անցկացման նպատակով պատրաստվում է հրավեր, որն իր մեջ ընդգրկում է մրցույթի անցկացման օրը, ֆինանսական հավելվածներն ու անհրաժեշտ այլ տեղեկատվություն՝ առանձին հայտարարությամբ տեղադրվելով ազդարարի կայքում: Սակայն, ըստ նախարարության աշխատակցի՝ նախարարության կողմից ՔՀԿ-ներին կատարվող ֆինանսական հատկացումների վերաբերյալ դեռևս իրազեկման կարիք կա, քանի որ շատ ՔՀԿ-ներ անտեղյակ են ոչ միայն նախարարությանը դիմելու ընթացակարգերից, այլև հավաստագրման գործընթացից: Խնդիրն առավել արդիական է հատկապես մարզերում, և դրամաշնորհային մրցույթի հայտարարման ժամանակ շատ կազմակերպություններ հնարավորություն չեն ունեցել դիմելու միայն ընթացակարգերին ծանոթ չլինելու պատճառով:

Նախարարության ներկայացուցչի հաղորդմամբ 2019 թ. մրցույթի անցկացման նպատակով ստեղծվել է հատուկ հանձնաժողով և յուրաքանչյուր մրցույթի ավարտից հետո նիստ է հրավիրվում: Հանձնաժողովների անդամներից չորսը նախարարության կազմից են (շահագրգիռ վարչությունների պետեր), ևս չորսը՝ ՀԿ ներկայացուցիչներ են, ովքեր նախկինում մշտապես ԱՍՀՆ-ի հետ համագործակցել են<sup>33</sup>: Բացի այդ, գործում է մեկօրյա ժամկետ բողոքարկման համար: Եթե մեկօրյա ժամկետում բողոքներ չեն լինում, մրցույթի արդյունքում հաղթած կազմակերպությունների հետ կնքվում են պայմանագրեր:

Ծրագրերի իրականացման փուլում մշտադիտարկումն իրականացվում է նախարարության [«Վերլուծության և մոնիթորինգի վարչության»](#), ինչպես նաև ոլորտային վարչությունների կողմից: Նախարարությունը ծրագրերի գնահատման համար ծառայությունները պատվիրակում է [«Վիվատ Բոնասայթինգ»](#) կազմակերպությանը: Բացի այդ, յուրաքանչյուր ամիս ՀԿ-ները ներկայացնում են

<sup>33</sup> \*\*Նախարարության կայքում չկար հանձնաժողովի անդամների վերաբերյալ տեղեկատվություն: Նախարարության աշխատակցի տեղեկացմամբ հանձնաժողովում ընդգրկված են՝ «Սոցիալական արդարություն» ՀԿ նախագահ Արշակ Գասպարյանը, «Կայուն զարգացման հայկական հիմնադրամի» ծրագրերի ղեկավար Արփինե Ստեփանյանը, «Մանկական զարգացման հիմնադրամի» տնօրեն Լուսինե Սիմոնյանը և «Շվեյցարական Կարմիր Խաչի» ներկայացուցիչ Ջինա Սարգիստյան: Վերջիններս առաջադրվել և ընտրվել են նախարարության կողմից ընդհանուր քննարկման արդյունքում:

իրենց շահառուների շարժը, հաշվետվությունները և ուղեկցող այլ փաստաթղթեր: Մրցույթի անցկացման հրավերում նշվում է մրցույթի կազմակերպման նախարարի համապատասխան հրամանը: Ի տարբերություն նախորդ տարիների, ներկայումս մրցույթի արդյունքում հաղթած կազմակերպությունները ստանում են դրամաշնորհ ըստ բյուջետային ծրագրում նշված նպատակների և խնդիրների: 2017 թ. արդեն իսկ գործում էր ծրագրային բյուջեավորման համակարգը: Այսինքն՝ ծագրային բյուջեում նշվում էին միջոցառման կամ ծրագրի անցկացման նպատակը, խնդիրները, կատարողներն ու կատարման արդյունքը:

Նախարարության կողմից առավելապես շեշտը դրվում է հաշմանդամություն ունեցողների համար խնամքի ապահովման կենտրոններում ծառայությունների մատուցման վրա, այդ իսկ պատճառով հիմնականում համագործակցում են նման գործառույթներ ունեցող ՔՀԿ-ների հետ:

Ըստ փորձագետների՝ ներկայումս ոչ միայն սոցիալական աջակցության ոլորտում, այլև մյուս պետական ծրագրերի համար պետական բյուջեն ավելի թափանցիկ է, իսկ մրցութային կարգով դրամաշնորհների տրամադրման ընթացակարգը ներդրվել է հիմնականում «Արմավիրի զարգացման կենտրոնի» ջատագովության արդյունքում: Բացի այդ, ԲԿԳ ախատանքային խմբի առաջարկությունների հիման վրա մշակվել է այն կարգը, որով ՀՀ ԱՍՀՆ-ն անցկացնում է դրամաշնորհային մրցույթները:

ԱՍՀՆ-ն 2017 թ.-ին արդեն իսկ սկսել էր [պետական հավաստագրման](#) գործընթացը, որի հիմքում 2015 թ. կառավարության 1078-Ն որոշումն է<sup>34</sup>, համաձայն որի բոլոր այն կազմակերպությունները, որոնք խնամք են իրականացնում և դիմում ու ստանում են պետական դրամաշնորհ նախարարությունից, պետք է ունենան հավաստագիր՝ սոցիալական ծառայությունները մատուցելու համար: Այսինքն՝ հավաստագրի հիման վրա ՀԿ-ն կամ ՀՄԴ-ն ստանում է թույլտվություն և երաշխիքներ է ստեղծում, որ պահպանում է անվտանգության բոլոր կանոնները, ունի համապատասխան վերապատրաստումներն անցած անձնակազմ, շենքային պայմաններ ու հարմարություններ, ինչպես նաև համապատասխանում է բոլոր չափանիշներին, որպեսզի կարողանա աշխատել սոցիալական որոշակի խմբերի հետ: Միայն պետական հավաստագրում անցած ՔՀԿ ներկայացուցիչները կարող են ստանալ դրամաշնորհ նախարարությունից: Մինչև այժմ 18 ՀԿ-ներ են հավաստագրվել: Կարգով սահմանվում է նաև այն սոցիալական ծառայությունների շրջանակը, որով պետք է խնամք իրականացվի սոցիալական խմբերի համար: Հավաստագրումը ևս մի մեխանիզմ է, որի շնոհիվ հնարավոր է վերահսկել ոլորտում մատուցվող ծառայությունների որակը:

<sup>34</sup> [ՀՀ կառավարության 1078-Ն որոշումը ընդունված 10.09.2015 թ. «Սոցիալական ծառայություններ տրամադրելու գործունեության հավաստագրման դեպքերը և կարգը հաստատելու մասին»:](#)

*«Մա միաժամանակ սահմանափակում է կազմակերպությունների մասնակցության հնարավորությունները, բայց խոստանում է մեզ ավելի որակյալ խնամք, որովհետև հավաստագրված կազմակերպությունները և տեղում ենք ուսումնասիրել, և բոլոր պայմաններին իրենք բավարարում են»:*

(Նախարարության ներկայացուցիչ):

2017 թ. և ավելի վաղ, երբ մրցութային կարգ չէր գործում, միևնույն է կազմակերպությունը կարող էր դիմել նախարարություն, ներկայացնել իր ծրագիրը և եթե այն հավանության էր արժանանում ու համապատասխանում էր տվյալ ժամանակահատվածում վարվող քաղաքականությանը, ապա նախարարությունը համագործակցում էր դրա հետ: Սակայն այդ ընթացքում կազմակերպությունների հետ կնքվում էր ոչ միայն սուբսիդիայի, այլ գործընկերության մասին պայմանագիր: Եվ քանի որ կազմակերպությունների ֆինանսավորումը մրցութային կարգով չէր իրականացվում, դրանց հետ կնքվում էին սուբսիդիայի կամ նվիրատվության պայմանագրեր, իսկ այժմ մրցութային կարգով բոլորի հետ կնքվում են դրամաշնորհի պայմանագրեր: Այդուհանդերձ, մրցութային կարգով դրամաշնորհների տրամադրումը ևս մի շարք խնդիրներ է առաջացնում, քանի որ մրցույթների փաթեթները կազմվում են այնպիսի չափորոշիչներով, որոնց համապատասխանում են միայն նախկինում նախարարության հետ համագործակցած կազմակերպությունները:

*«Երեքի հայտերը մերժվել են: Պատճառն այն էր, որ իրենց ներկայացրած ծրագիրը չէր համապատասխանում մեր պահանջվող միջոցառումներին, հետո էլ միաժամանակ չէր լրացնում այդ տարածքը: Օրինակ, եթե նախատեսված է, որ ընդունենք Կոտայքի կամ Գեղարքունիքի այսքան շահառուի համար է, ինքը ներկայացրել էր միայն Կոտայքի համար: Գուցե մենք որոշ փոփոխություններ անենք և եթե երկու մարզում է արվում, բաժանենք ծրագիրը երկու կազմակերպությունների միջև ու մրցակցության դաշտը ապահովենք: Աշնանը արդեն մրցույթը կհայտարարվի, մենք արդեն աշնանը կունենանք փոփոխություններ: Մրցույթում ունենիք կազմակերպություն, որ լավն էր ու փորձ ունեւր, բայց քանի որ ծրագիրը նախատեսված էր երկու մարզերում, իսկ հայտում ներկայացված էր միայն Շիրակի մարզը, այն մերժվեց»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Թե՛ ՔՀԿ-ների, թե՛ նախարարության ներկայացուցչի կարծիքով անպայմանորեն անհրաժեշտ են նոր իրավական կարգավորումներ և դրամաշնորհային մրցույթների անցկացման առավել ճկուն կարգ , որը հնարավորություն կստեղծի ավելի շատ կազմակերպությունների մասնակցել մրցույթին:

*«Կարգը որոշակի առումով սահմանափակումներ է մտցնում դաշտում: Քանի որ մենք արդեն ունենք ծրագիրը կոնկրետ շահառուների թվով և անցկացման վայրով,*

*մենք չենք կարողանում ավելի ազատ գործել: Ճիշտ կլինի, որ կոնկրետ մարզը միայն նշվի, իսկ մնացածը հենց ՀԿ-ները ներկայացնեն իրենց շահառուների թվերը, անցկացման պայմանները և այլն»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Սոցիալական ծառայությունների մատուցման առումով ՀԿ-ներն ավելի էժան ծառայություններ են մատուցում, քան պետությունը, բացի այդ պետությունն էլ այդքան ռեսուրսներ չունի սոցիալական տարբեր ծառայությունների մատուցման համար:

*«Հիմա օրինակ պետությունը բեռնաթափումներ է անում մանկատներում կամ այլ հաստատություններում, որպեսզի նույն ՀԿ-ներում կամ ցերեկային կենտրոններում ապահովի նրանց խնամքը և տնտեսի ռեսուրսներ: Նախարարությունը տրամադրում է նվազագույն աշխատավարձ ՀԿ-ում աշխատողների համար և իրականացնում ծրագիրը նվազագույն ծախսերով»:*

(Փորձագետ)

ԱՍՀՆ-ի հետ համագործակցող կազմակերպությունները հիմնականում իրականացնում են շարունակական ծրագրեր և կրկնվում են: Սոցիալական ոլորտի ծառայություններ մատուցող ՔՀԿ-ները հաճախակի չեն փոփոխվում, քանի որ դրանք խիստ ոլորտային են: Դիտարկելով վերջին տարիներին բյուջեի կատարման մասին հաշվետվություններն ու հարցազրույցներ անցկացնելով այդ ոլորտի ՔՀԿ ներկայացուցիչների հետ՝ պարզ դարձավ, որ այդ կազմակերպությունները տարիներ շարունակ համագործակցել են ՀՀ ԱՍՀՆ-ի հետ և նույնիսկ ընդլայնել են իրենց շահառուների թիվը: Սրանց թվում են նաև այն կազմակերպությունները, որոնք ստանում են դրամաշնորհ առանց մրցույթի և ծրագրային բյուջեում նախապես որոշված են:

Դրամաշնորհային մրցույթներին մասնակցելիս նաև առանցքային նշանակություն ունի այն, թե ինչպես է կարողանում կազմակերպությունը ներկայացնել իր ծառայություններն ու ընդգծել դրանց կարևորությունը:

*«Հնարավոր է, դու շատ ավելի մեծ ու կարևոր աշխատանք ես անում, բայց այդ կարողությունը չունես դա ներկայացնելու ֆինանսավորողներին: Կամ էլ չես կարողանում տվյալ ծառայության կարիքը պատշաճ կերպով ներկայացնել ու ձևակերպել որոշում կայացնողների համար»:*

(Փորձագետ):

Փորձագետներից մի մասի կարծիքով վերջին տարիներին սոցիալական ծառայությունների պետական ֆինանսավորման տրամադրման հարցում նկատվում են դրական տեղաշարժեր, սակայն հիմնական խնդիրը դեռևս մնում է առկա ռեսուրսների ճիշտ վերաբաշխման մեջ:

Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ ներկայացուցիչների մեծամասնության կարծիքով նախարարությունը բաց է քննարկումների և առաջարկությունների համար և իրենց համատեղ աշխատանքը շատ արդյունավետ է եղել մինչ օրս:

ՀՀ ԱՍՀՆ-ն այն քիչ նախարարությունների թվում է, որ մեր կողմից ուղարկված հարցմանը ներկայացրել է տեղեկատվություն՝ 2016-2017թթ. ֆինանսական աջակցություն ստացած կազմակերպությունների ծրագրերի մասին և բյուջետային ծախսերի հաշվետվությունները: Ընդ որում, հաշվետվությունները բոլորը ներկայացվել են ըստ տարեկան ընթացիկ ծրագրերի արդյունքների:

Ըստ բյուջեի կատարման մասին օրենքի՝ 2017 թ.-ին նախարարությունը անցկացրել է 2 մրցույթ, որոնց արդյունքում միայն մեկ ՀԿ-ի հետ է համագործակցել «Մանկական խնամակալական կազմակերպություններում խնամվող երեխաների կենսաբանական ընտանիք վերադարձնելու հետ կապված իրազեկման աշխատանքներ և ծրագրերի կազմակերպման համար» ծառայությունների մատուցման պայմանագրով, որին վճարել է 22,132.80 հազ. դրամ:

Միննույն ժամանակ, «Գնումների մասին» ՀՀ օրենքի համաձայն, 7 ծրագրերի շրջանակներում ընտրված կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում վճարել է ընդհանուր առմամբ 1002464.32 հզր դրամ:

Ուշագրավ է, որ, ՖՆ տվյալների համաձայն, կազմակերպությունների հետ կնքվել են սուբսիդիայի պայմանագրեր, այդ թվում Երևանի N 92 մանկապարտեզ ՀՈԱԿ-ի հետ:

*«Սուբսիդիա, նվիրատվություն կամ այլ հատկացումների տրամադրումը կապված է ծառայության տնտեսագիտական բնույթից: Այսինքն պետք է պարզել, թե խնդիրն ինչ է. ՀԿ-ն ծառայություն է մատուցում, որը հանրային կարևորություն ունի ու թանկ է ստացվում, որի պատճառով դու ուզում ես սուբսիդավորել, որ շահառուների համար դա էժան ստացվի, թե այլ բան է քո նպատակը: Եթե պետությունը դրամաշնորհ է տալիս, ապա որևէ խնդիր ներկայացնում է ՀԿ-ներին, որ նրանք լուծեն: Այդ տնտեսագիտական հողվածները մեր գնումների օրենսդրությունը շրջանցելու տարբերակ էր մի ժամանակ: Մեր դպրոցները սուբսիդիա են ստանում, բայց դա հանրային ծառայություն է և խնդիր չկա սուբսիդավորելու, իրենց ծախսերի գրեթե 100 տոկոսը պետությունն է անում: Առանձին բացառություններ են լինում, մի 2 դպրոցներ»:*

(Փորձագետ)

Առաջարկներ և պարզաբանումներ:

- Պետությունը պետք է հետևողական լինի սոցիալական ծառայություններ մատուցող ՀԿ-ների աշխատանքը պատշաճ մակարդակի և հստակ չափանիշների համապատասխանեցնելու համար:

*«Այսօր մենք այնպիսի խնդիր ունենք, որ ցանկացած ՀԿ հնարավորություն ունի սոցիալական ծառայություններ մատուցել, բայց եղպես չի կարելի, քանի որ պետք է հստակեցնել որոշակի չափորոշիչներ, որոնց նրանք կհամապատասխանեն: ՀԿ-ները հավատարմագրվում են միայն այն ժամանակ, երբ պետությունից պետք է գումար ստանան: Բայց եթե դու մրցույթին չես մասնակցում և այդ ծառայությունն ես մատուցում, դու հավատարմագրման կարիք չունես»:*

(Փորձագետ)

- ԱՍՀՆ-ն ՀԿ-ներին սուբսիդավորում էր միայն այն ժամանակ, երբ կազմակերպությունը որևէ ծառայություն է մատուցել, ստանալով միջազգային կազմակերպությունների ֆինանսավորումը, որից մի մասը անհրաժեշտ է լրացնել, որպեսզի միջազգային ֆինանսավորումը չկորի:

*«Բայց հիմա նախարարությունն ուզում է սուբսիդիան ու դրամաշնորհը միացնի ու դարձնի մեկ բան ու դա ավելի ճիշտ կլինի, որովհետև եթե մենք հիմա գնում են դրամաշնորհների բաց մրցութային կարգով տրամադրման, իրենք կարող են ասել՝ այս սուբսիդիան չենք կարող տալ»:*

(Փորձագետ)

- Սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում կան կազակերպություններ, որոնք տվյալ ոլորտում չունեն մրցակիցներ: Նման դեպքերում դրամաշնորհային մրցույթները դառնում են շատ ձևական և մրցութային փաթեթներն էլ հենց տվյալ կազմակերպության առաջարկած չափանիշներով ու մատուցած ծառայությունների համար են կազմվում:

- Պետք է մարզերում սոցիալական ծառայությունների ոլորտում համաչափ բաշխում ապահովել, որպեսզի դրանք որոշակի մարզերում կենտրոնացված չլինեն, իսկ մյուս մարզերը հայտնվեն բարձիթողի վիճակում: Նաև տարածաշրջանային բաշխումն այնպես իրականացնել, որ բոլոր ծառայությունները մարզկենտրոններում չկենտրոնանան:

- Սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում անհրաժեշտ է փոխել մոտեցումները՝ շարժվելով դրանց ապակենտրոնացման ուղղությամբ, քանի որ ներկայիս որդեգրած քաղաքականությունը զիջում է իր արդյունավետությամբ այլ երկրներում կիրառվող մոդելներից:

*«Իմ ամենալավ պատկերացրած մոդելն այն է, որ պետք է սերտիֆիկատի մոդելով այն իրականացվի: Մենք երկու մոդել ենք ուսումնասիրել: Մեկը Վրաստանն էր, որ սերտիֆիկատ էր տալիս, այսինքն՝ շահառուն ինքն էր ընտրում, թե որտեղից ծառայություն ստանա, մյուսն էլ*

ապակենտրոնացման մոդելն է: Այսինքն միջոցները իջեցվում են համայնքի մակարդակ, որտեղից բաշխվում են մյուսներին: Այսօր, ցավոք սրտի, մեր համայնքները պատրաստ չեն նման ծառայություններին աջակցություն ցուցաբերելու, քանի որ ասում են, որ բյուջե չունեն ու չեն կարող անել: Այսինքն՝ իրենք պատրաստ են մանկապարտեզների քանակը շատացնել և այլն, բայց, ասենք, սա էլ նմանատիպ կարևոր ծառայություն է, որը համայնքը չի վերցնում իր վրա, ասում է, որ հազիվ իր մանկապարտեզներն է պահում»:

(Փորձագետ)

- Համայնքներում առկա սոցիալական աջակցության բյուջեն պետք է ուղղել ոչ թե սոցիալապես անապահով ընտանիքներին մեկանգամյա դրամական օգնություն ցուցաբերելով, այլ սոցիալական ծառայություններին, որոնք առավել արդյունավետ կլինեն ազդեցության տեսանկյունից:
- Սուբսիդիայի պայմանագրով նախարարության հետ աշխատող ՀԿ-ների համար փոխհատուցվում են հիմնականում աշխատողների աշխատավարձերը նվազագույն աշխատավարձի չափով, որը շատ ցածր է հաշմանդամություն ունեցող երեխաների կամ անձանց հետ աշխատելու համար:

«... հետևաբար մենք նաև անընդհատ աշխատում ենք, որ այլ ֆոնդեր ու միջոցներ ներգրավենք այս ոլորտում, որ կենտրոնը կարողանանք պահել»:

(ՖԽՔ մասնակից)

- Նախարարությունը պետք է մշտադիտարկման համակարգ ձևավորի, որպեսզի պատահական այցերի միջոցով կարողանա գնահատել ծրագրի իրականացման ընթացքը, պարզելու համար շահառուներին ծառայությունների մատուցման որակը:

«... փաստաթղթեր նայեն, խոսեն երեխաների և ծնողների հետ, պարզեն մատուցվող ծառայություններից գոհ են, թե ոչ: Հնարավոր է որևէ կազմակերպություն ծառայությունը լավ է իրականացնում, բայց ներսում որևէ բան է փոխվում ու այն սկսում է որակապես տուժել: Օրինակ, եթե նախորդ տարում կազմակերպությունը թերություններ է ունեցել, հաջորդ տարի այդ կազմակերպությանը չգնահատեն ու խախտումներին ուշադիր լինեն, որ չտան դրամաշնորհ այդպիսի կազմակերպությունների: Մանավանդ հիմա մենք գնում ենք համընդհանուր բեռնաթափման և երեխաների համար ցերեկային կենտրոններ ունենք: Շատ կարևոր է անել սա»:

(Փորձագետ)

- «Պետք է այնպիսի համակարգ ներդնել, որ երեխան կամ շահառուն ինքը որոշի, թե ինչ կազմակերպության ծառայություններից է ցանկանում



*օգտվել: Այսինքն, ինքն ընտրում է կազմակերպությանը որևէ գումարի չափով: Եթե նմանատիպ կերպով օրենսդրական փոփոխություններ լինեն, հնարավոր է նաև մեր կարգում առկա խնդիրներն ավելի հեշտ լինի լուծել:»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

- *«Կարիք կա, որպեսզի մրցույթների անցկացման համար լինեն կամ դրսից փորձագետներ կամ առանձին աշխատողներ, քանի որ ֆիզիկապես հնարավոր չէ աշխատանքի հետ համատեղել այդ ծանրաբեռնվածությունը: Մա մեծ պատասխանատվություն է, որ պետք է որևէ աշխատակցի վրա դրվի: Մրցույթները շատ փաստաթղթերի մշակման փաթեթներ ունեն ու շատ ժամանակատար աշխատանք է: Գուցե անհրաժեշտ է նաև առանձին բաժին ունենալ:»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

- *«Սոցիալական աջակցության բոլոր ծրագրերը ուղղված են միայն երեխաներին և տարեցների խնամքի ապահովման համար, մինչդեռ միջին տարիքի խոցելի խմբերի ներկայացուցիչները շատ դեպքերում անուշադրության են մատնվում:»:*

(Փորձագետ)

- Պետությունը վերահսկի սոցիալական աջակցություն և ծառայություններ մատուցող կազմակերպությունների աշխատանքն անկախ նրանից, վերջիններս ստանում են պետական աջակցություն, թե ոչ:

Ըստ ՔՀԿ ներկայացուցիչների, այս ոլորտում տիրում է բարձիթողի վիճակ և որևէ կերպ չի կանոնակարգվում օրենքով: *«Իմ ունեցած տվյալներով Հայաստանում կան 301 գրանցված ՀԿ-ներ, որոնց կանոնադրության մեջ կա հաշմանդամ բառը: Բայց իրականում ողջ Հայաստանում 10-15 տոկոսն է աշխատում և մատուցում ծառայություններ, որոնցից օգտվում են հաշմանդամները: Մարդիկ իրենց տանը նստած կարող են հասարակական կազմակերպություն բացել, դիմել տարբեր կառույցների ու գումարներ ստանալ, բայց ոչ ոք չի վերահսկում, թե դա իրոք ինչպես է ծախսվում:»:*

(Փորձագետ)

- Սոցիալական ոլորտում խոցելի խմբերի հետ աշխատող ՔՀԿ ներկայացուցիչների կարծիքով նվազագույն աշխատավարձի չափով աշխատավարձը խիստ ցածր է իրենց կատարած աշխատանքի դիմաց, և աշխատավարձերը պետք է գոնե կրկնակի անգամ բարձրացվեն, բացի այդ օգտվեն նաև պետական աշխատողների համար նախատեսված այլ արտոնություններից, քանի որ պետությունն է իրենց աշխատավարձը փոխհատուցում:

*«Պետությունը մեզ տախս է աշխատավարձ, ուրեմն թող տա նաև սոցիալական փաթեթ: Մարդիկ ունեն տարբեր առողջապահական խնդիրներ, որոնք չեն կարողանում վճարել և դա կարող է էականորեն օգնել իրենց: Մեր աշխատավարձը 57000 դրամ է և վիրահատությունների գումարները շատ բարձր են ու հնարավոր չէ այդ աշխատավարձով բուժվել: Բացի այդ, մեր մասնագետները աշխատում են ծանր պայմաններում և նրանց գործունեությունը վտանգված է»:*

(Փորձագետ)

- Մրցույթային կարգը պետք է կիրառել նպատակային և հաշվի առնել, որ կան սոցիալական ծառայություններ, որոնք իրենց բնույթով եզակի են և նման ծառայություններ մատուցող այլ կազմակերպություններ չկան Հայաստանում:

*«...նման դեպքերում պետք է մեկ անգամ անցկացնել մրցույթը ու հետո պարբերաբար հաշվետվություններ ուղել, հարցնել փոփոխություններ կան, թե ոչ, ու հավաստագիր ստացած կառույցները ստանան աջակցություն առանց մրցույթի մասնակցելու այնքան ժամանակ, քանի դեռ չունեն մրցակիցներ: Եվ եթե որևէ ծառայություն հավաստագրվեր, այդ ժամանակ մեզ տեղեկացնեին, որ իմանայինք մրցակից կա մեր ոլորտում ու մենք պետք է մասնակցենք մրցույթի»:*

(Փորձագետ)

- Սոցիալական ծառայություններ մատուցող կազմակերպությունների ֆինանսավորումն անհրաժեշտ է ավելացնել, քանի որ այս ոլորտի ՔՀԿ-ներն էականորեն թեթևացնում են պետության բեռն ու ավելի որակյալ, մատչելի ծառայություններ են մատուցում, քան պետությունը:
- Սոցիալական ծառայությունների մատուցման ոլորտում մրցույթի արդյունքում հաղթած ՔՀԿ-ների հետ կնքել երկարաժամկետ պայմանագիր, որը չի վտանգի ՔՀԿ-ների կայունությունն ու մատուցվող ծառայությունների որակը:

*«Իմաստ չունի ամեն տարի նույն ծառայությունը ձեռք բերելու համար տենդեր հայտարարվի: Մի քիչ ավելի երկարաժամկետ է պետք, ասենք 3 տարի կամ 5 տարի կարելի է պայմանագիր կնքել, եթե ծառայությունից օգտվողները դժգոհ չեն ծառայությունից և ցանկանում են շարունակել: Այլապես ամեն տարի տենդեր հայտարարելը դժվարացնում է այդ պրոցեսը և մատուցվող ծառայությունների համար ռիսկեր ու անորոշություններ են ստեղծվում, որոնք իրենց գինն ունեն: Ցանկացած ռիսկ և անորոշություն ֆինանսների տեսքով արտացոլվում է»:* (Փորձագետ)

- Անօթևանների մասին ՀՀ օրենքում պետք է փոփոխություն արվի, որպեսզի առանձնահատուկ հիվանդություններով տառապողների համար, ովքեր չեն

կարող գտնվել ժամանակավոր կացարաններում (5 խմբերի պատկանող անձանց՝ հոգեկան հիվանդներին, տուբերկուլյոզ, հեպատիտ C, մաշկային վարակակիր և վեներական հիվանդություններով տառապողներին<sup>35</sup>) և հայտնվել են փողոցում, պետությունը ձեռնարկի հատուկ միջոցառումներ նրանց փողոցից հեռացնելու համար, քանի որ այդ խմբի մարդիկ նաև բարձր վտանագավորություն ունեն հասարակության համար:

- *«Օրենսդրական փոփոխություն է հարկավոր, որ անօթևան մարդկանց՝ ժամանակավոր կացարանում մնալու ժամանակը, որը 2 ամսից դարձել է 3 ամիս, կա՛մ երկարացվի՝ մինչև նրանց խնդրի լուծումը, կա՛մ առհասարակ վերացվի, ինչպես արվում է Եվրոպական երկրներում, որտեղ անժամկետ է»:* (ՖԽՔ մասնակից)
- Դրամաշնորհային մրցույթի անցկացումը պետք է տեղի ունենա ֆինանսավորման ավարտից ավելի շուտ, որպեսզի ֆինանսական ռիսկեր չառաջանան ՔՀԿ-ների համար:  
*«Այսինքն՝ մենք պետք է մի 10 միլիոն դրամի չափով հոգանք ծախսերը մինչև դրամաշնորհը տրվի, կամ մրցույթ հայտարարեն: Հիմա մենք մեր միջոցներով անում ենք, հետո փոխատուցվում է այդ երեք ամիսների համար: Ժամկետը շատ սխալ է հաշվարկված: Դրամաշնորհի պայմանագիրն ու մրցույթը պետք է ավելի շուտ լինի ՀԿ-ների հետ: Միննույն է, դրամաշնորհի ժամանակ, պայմանները նույնն են, ինչ սուբսիդիայի ժամանակ: Մենք ստանում էինք գումարներ ըստ հաշվետվությունների՝ ամեն ամիսների համար, հետո մնում էր ինչ-որ տնտեսում ու գնում էր պետբյուջե մեր տնտեսումը ու մեր հիմնադրամը այդ տնտեսումից գումարներ չէր ունենում»:* (ՖԽՔ մասնակից)
- ՔՀԿ-ները սոցիալական աջակցության և ծառայությունների մատուցման ասպարեզում գործող և մասնագիտացված անձանց շրջանում իրականացնում են վերապատրաստման ծրագրեր, որոնք բարձրացնում են ոլորտում գործունեություն ծավալող ՔՀԿ-ների արհեստավարժությունն ու փորձագիտական ներուժը:
- Սոցիալական ծառայությունների մատուցումը պետք է բխի սոցիալական խմբերի առաջնային կարիքներից և նախապես կարիքների գնահատման հիման վրա պետք է մատուցվեն այդ ծառայությունները: Գնահատման գործիքակազմը պետք է նաև համընդհանուր լինի բոլորի համար, որպեսզի հասկացվի, թե ծառայությունների արդյունքում ինչպիսի դրական տեղաշարժեր և զարգացումներ են եղել:

<sup>35</sup> [«Անօթևանները կգիշերեն փողոցներում, քանի դեռ օրենքում փոփոխություն չի արվել»:](#) Արմլուր 26.07.2017: (Դիտվել է 29.04.2019)

«... եթե որևէ երեխա ինչ-որ կենտրոնում ծառայություններ է ստանում, իր նկատմամբ կիրառվի գնահատման միանման համակարգ և կարիքի գնահատում լինի, որ երևա թե նաև ինչ զարգացում է ունեցել, մի մակարդակից անցել է զարգացման մեկ այլ մակարդակ: Եվ այլ կենտրոն գնալուց իր հետ 0-ից չսկսեն, ուղղակի երեխայի այս փաթեթը մի կենտրոնից տեղափոխվի մյուսը: Արդեն մյուս կենտրոնում մասնագետները գիտեն, թե ինչի վրա պետք է ավելի շատ ուշադրություն դարձեն, ինչն է նրա մոտ լավ ստացվել, ինչն է ավելի դժավարությամբ տրվել, որ ավելի կենտրոնանան դրա վրա»: (Փորձագետ)

- Սոցիալական աջակցության ծրագրերի և ծառայությունների մատուցման ոլորտում ֆինանսավորումը ոչ թե պետք է լինի կառույցներին կամ կազմակերպություններին, այլ պետք է տրվի սոցիալական խմբի անդամներին վաուչերային տարբերակով:

«Օրինակ տվյալ ծնողը բերեց այս կենտրոն, ապա տվյալ ծառայությունների գումարը փոխանցվում է տվյալ կենտրոն: Ոչ թե փաթեթով փոխանցվի, այլ լինի վաուչերային: Վրաստանում ու տարբեր երկրներում սա կիրառելի պրակտիկա է, որովհետև մրցույթներն այստեղ ոչ թե նախարարությունը կամ լիազոր այլ մարմինն է որոշում, թե այս գումարը որևէ ծառայության դիմաց տրամադրում է, այլ որոշում է հենց շահառուն ինքն իր փորձառությունից ելնելով, թե որն է ավելի որակյալ, իրեն հարմար և մոտիկ»: (Փորձագետ)

- Գնումների գործընթացն ու հայտարարված մրցույթները չեն ապահովում որակյալ սոցիալական ծառայությունների և ապրանքների գնում, քանի որ հիմնականում շեշտադրվում է ապրանքի կամ ծառայության գնի մաշելիությունը, որի պատճառով թե՛ ՔՀԿ-ները, թե՛ նախարարությունները աշխատում են շրջանցել «Գնումների մասին ՀՀ օրենքով» գործարքներ կնքելուց:

«Պատկերացրեք դրամաշնորհ է հայտարարվել ու մրցույթի ժամանակ ինչ-որ մեկը կարծեց որ անբարեխիղճ է ու հայցադիմում ներկայացրեց դատարան, մինչև դատարանով չքննվի, ամիսներով այդ գործընթացը ձգձգվում է ու շահառուները անմիջապես իրենք են տուժում»:

(Փորձագետ)

## **Տրանսպորտի, կապի և տեղեկատվական տեխնոլոգիաների նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: ՀՀ ՏԿՏՏՆ-ն մեր հարցմանն ի պատասխան՝ ներկայացրել է ամբողջական և լիարժեք պատասխան՝ ըստ նախարարության հիմնական ծրագրային ուղղությունների: Վերջիններիս շրջանակներում ՀՀ ՏԿՏՏՆ-

ն համագործակցում է «Ձեռնարությունների ինկուբատոր» ՀՄԴ-ի հետ, որը սպասարկում է Գյումրու ու Վանաձորի տեխնոլոգիական կենտրոնները: Մասնավորապես, ՀՄԴ-ին տրամադրվել են դրամաշնորհներ «այլ ընթացիկ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով: Բացի այդ, պետական բյուջեով նախարարությունը չի տրամադրել սուբսիդիաներ և նվիրատվություններ, իսկ փաստացի վճարված գումարները 2017 թ. ընթացքում ներկայացված է հավելվածի աղյուսակ 12-ում:

Նախարարության կողմից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական հատկացումները իրականացվում են առանց մրցութային կարգի: ՀՀ ՏԿՏՏՆ-ն համագործակցում է հիմնականում այն կազմակերպությունների հետ, որոնք արդեն փորձ ու կարողություններ ունեն տվյալ ոլորտում, այսինքն, որոշակի իրավահարաբերություններով այդ ծառայություններն իրենց են պատվիրակվել: Վերջիններս բոլոր հաշվետվությունները հրնթացս տրամադրում են նախարարությանը, որպեսզի ծրագրերի ֆինանսավորումը շարունակվի:

*«2016-2017թթ.-ին նույն կազմակերպություններն են եղել: Կան միջոցառումներ, որ ուղղակի պատվիրակված են ըստ օրենքի: Այսինքն՝ Գյումրու և Վանաձորի տեխնոլոգիական դպրոցների ապահովման համար կառավարության որոշում կա, որտեղ հստակ նշվում է, թե իրենց գործունեության ապահովման համար ինչ միջոցներ են տրամադրվում և որ կառույցն է պատասխանատու, տվյալ դեպքում «Ձեռնարկությունների Ինկուբատոր» հիմնադրամն է: Այս առումով այնպես չէ, որ մենք ենք որոշում, թե ով լինի, այսինքն՝ կա կառավարության կողմից պարտավորություն, որ «հայ-հնդկական ՏՀՏ գերազանցության» կենտրոնը բացվել է Հայաստանի և Հնդկաստանի կառավարությունների համատեղ ծրագրերի շրջանակներում, որի գործունեության ապահովումը պետք է իրականացնենք մենք: Միջազգային պայմանագրերով կամ հաճայնագրերով կամ տեղական օրենսդրությամբ է պայմանավորված այդ ամենը»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Նախարարությունում դրամաշնորհների կամ ՔՀԿ-ներին ֆինանսական աջակցության տրամադրման ընթացակարգը կենտրոնացված չէ որևէ վարչության կամ աշխատանքային խմբի գործառույթներում: Այսինքն՝ նախարարությունում կան աջակցող և հարակից վարչություններ, որոնց համատեղ աշխատանքի արդյունքում է իրականացվում ֆինանսավորման գործընթացը, և յուրաքանչյուր վարչություն իր մասով է պատասխանատվություն կրում:

*«Օրինակ՝ պայմանագրերի բաժին ունենք, որը զբաղվում է միայն պայմանագրերով, ֆինանսական բաժինը՝ ֆինանսների ուղղությամբ և այլն: Բովանդակային ապահովման մասը մենք ենք անում: Նայում ենք, թե ոնց են իրականացնում, ինչ արդյունքներ կան և այլն»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Ծրագրեր իրականացնողները եռամսյակային, կիսամյակային և տարեկան հաշվետվություններ են ներկայացնում նախարարություն, իսկ մշտադիտարկումը իրականացվում է այցելություններով՝ արդյունքների ֆիզիկական չափելիության ու տեսանելիության գնահատմամբ:

Սահմանված մրցութային կարգը բացասաբար է ազդել նախարարության որոշ միջոցառումների իրականացման վրա: Այն միջոցառումները, որոնք ուղղակիորեն պատվիրակված են հստակ կազմակերպությունների, չեն կարող դադարեցվել մրցութի պատճառով, հետևաբար, ըստ նախարարության ներկայացուցչի, դրանք պետք է թողնել պարտավորությունների իրականացման այն շրջանակներում, որոնք սահմանվել են նախկինում, իսկ այն միջոցառումները, որոնք հնարավոր են մրցութային ընթացակարգերով անել՝ առաջնորդվել նոր կարգով:

### **Ֆինանսների նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: ՀՀ ՖՆ-ն մշտադիտարկմանը պատասխանել է՝ կցելով 2016-2017թթ. նախարարությունների կողմից ֆինանսաբյուջետային ծախսերի վերաբերյալ ողջ տեղեկատվությունը՝ կազմակերպությունների անուններով, ծրագրված և փաստացի հատկացված գումարների չափերով: Սակայն տեղեկատվությունը ներկայացվել է միայն «Սուբսիդիաներ ոչ պետական, ոչ կառավարչական կազմակերպություններին» և «նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածներով, մինչդեռ ՔՀԿ ներկայացուցիչները 2017 թ. դրամաշնորհներ էին ստացել «այլ ընթացիկ դրամաշնորհներ» և «այլ ծախսեր» հոդվածներով: Ի սկզբանե նախարարությունը ներկայացրել էր միայն 2016 թ. տվյալները՝ վերոնշյալ 2 հոդվածների համաձայն, իսկ 2017 թ.-ի տվյալները՝ հորդորել գտնել «Ինտերակտիվ բյուջեում»: Վերջինս մեր մշտադիտարկման ողջ ընթացքում աշխատել է որոշակի թերացումներով: Իսկ «Պայմանագրեր» դաշտը որոնման համար առհասարակ անհասանելի է եղել: Մինևույն ժամանակ ՀՀ ՖՆ-ում նշեցին, որ իրենք ՔՀԿ-ների հետ չեն համագործակցում:

Ընդ որում, 2017 թ. բյուջեի կատարման հաշվետվության մեջ ՀՀ ՖՆ-ն 100 միլիոն դրամ տրանսֆերտային գումար է հատկացրել «*Օրենսդրությամբ (օրենքներով և կառավարության որոշումներով) նախատեսված օժանդակություն և փոխհատուցումներ ՏԻՄ-երին, կուսակցություններին և այլն*» ծրագրի իրականացման համար՝ «*աջակցություն քաղաքական կուսակցություններին, հասարակական կազմակերպություններին, արհմիություններին*» նպատակով:

### **Միջուկի նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: Մեր հարցմանը ՀՀ ՄՆ-ն պատասխանել է, որ 2016-2017թթ. ընթացքում նախարարությանը բյուջեով հատկացված միջոցներից նվիրաբերության պայմանագիր է կնքել «Հայ կանանց միջազգային միավորում» ՀԿ-ի հետ՝ յուրաքանչյուր տարի հատկացնելով 14 միլիոն դրամ: Բացի նշված կազմակերպությունից, այլ ՔՀԿ-ների վերաբերյալ տեղեկատվություն չի պարունակվում հարցման պատասխանում, բացի այդ, հարցման պատասխանին չեն կցվել ո՛չ հաշվետվություններ, ոչ էլ պայմանագրերի օրինակները, որոնք հնարավոր եղավ գտնել ՀՀ ՖՆ «Ինտերակտիվ բյուջեից»: Մեր հարցման մեջ նաև խնդրել էինք փոխանցել կոնտակտային անձանց տվյալներ, ովքեր կկարողանան մեզ պարզաբանումներ տալ նախարարությունից ՔՀԿ-ներին տրամադրվող ֆինանսական աջակցության ձևերի մասին: Նշված կոնտակտային անձը հայտնեց, որ ինքն իրավասու չէ այդ հարցերով մեզ պատասխանելու և ուղղորդեց այլ բաժիններ: Մի քանի տարբեր ստորաբաժանումների հեռախոսահամարները ճշտելուց հետո, ինչպես և մյուս նախարարություններում, այնպես էլ ՀՀ ՄՆ-ում, մեզ հուզող հարցերին պատասխանեց ֆինանսատնտեսական բաժնի մասնագետը, ով ողջ հարցազրույցի ընթացքում նշեց միայն, որ այդ հատկացումները գաղտնիք են պարունակում և որևէ երրորդ անձի իրենք չեն կարող հայտնել դրանց մանրամասները:

Այսպիսով, մեր մշտադիտարկման շրջանակներում, ՀՀ ՄՆ-ի հետ ունեցած փորձառության արդյունքում, կարելի է եզրակացնել, որ պետական բյուջեից տրամադրվող գումարները ՔՀԿ-ներին ոչ միայն առանց մրցույթի են հատկացվում և ենթադրում են ոչ թափանցիկ ընթացակարգեր, այլև գումարների տրամադրումը որևէ հաշվետվողականություն չունի, այն առումով, որ դրանց մասին տեղեկատվությունը հույժ գաղտնի է պահվում:

Այդուհանդերձ, ըստ ՖՆ տվյալների երևում է, որ 2017 թ. ՀՀ ՄՆ-ն «նվիրատվություն այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով 2 պայմանագիր է կնքել (մեկը 10 մլն, մյուսը՝ 4 մլն դրամ գումարի չափով) «Հայ կանանց միջազգային միավորում» ՀԿ-ի հետ: Համապատասխանաբար առաջինը՝ «աջակցություն Վրաստանի հայալեզու լրատվամիջոցներին» ծրագրի իրականացման համար, մյուսը՝ «Աջակցություն Թբիլիսիում գտնվող հայ գրողների պանթեոնի պահպանմանը» ծրագրի իրականացման նպատակով: Ընդ որում, նույն գումարի չափով միննույն ծրագրերի իրականացման համար 2016-2017թթ.-ին անընդմեջ տվյալ կազմակերպությանը հատկացում է արվել:

Բացի այդ, 2017 թ. նախարարությունը պահուստային ֆոնդից 20 միլիոն դրամ նվիրատվության պայմանագիր է կնքել «Սիրիահայերի հիմնախնդիրները համակարգող կենտրոն» ՀԿ-ի հետ՝ ՀՀ ԲՈՒՀ-երում սիրիահայ ուսանողներին

ուսման վարձ հատկացնելու նպատակով: Մինևույն ժամանակ, 2017 թ. ընթացքում 3 անգամ գնումների մասին ՀՀ օրենքի համաձայն անցկացվել են մրցույթներ:

### **ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: Մշտադիտարկման ընթացքում ՀՀ ՏԿԶՆ ներկայացուցիչը նշեց, որ իրենք որևէ կերպ չեն առնչվում դրամաշնորհային մրցույթների և պետական բյուջեից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին հատկացվող ֆինանսական աջակցության գործընթացների կազմակերպման ու անցկացման հետ: Բոլոր տեսակի ֆինանսական հատկացումներն իրականացվում են համաձայն ՀՀ կառավարության որոշումների, իսկ իրենց նախարարությունն ընդամենը միջնորդ կազմակերպություն է, ով կնքված պայմանագրերի կազմակերպչական և վարչական պարտավորությունների իրականացման վերահսկողությամբ է զբաղվում:

Մասնավորապես, հարցման պատասխանում նախարարությունը 2016-2017թթ. ընթացքում պետական բյուջեից ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպություններին հատկացված ֆինանսական միջոցների վերաբերյալ որևէ հաշվետվություն չի ներկայացրել (հաշվետվությունները բացակայում են նաև պաշտոնական կայքէջում), սակայն ներկայացրել է, թե հաշվետու ժամանակահատվածում որքան գումարներ է հատկացրել նշված կառույցներին:

Մասնավորապես, 2017 թ. հիմնական բաժիններին չդասվող պահուստային ֆոնդից նախարարությունը 1,190,693.5<sup>36</sup> հզր դրամ է հատկացրել նվիրաբերության պայմանագրով Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամին «այլ կապիտալ դրամաշնորհներ» տնտեսագիտական հոդվածով: 3000.0 հզր դրամ<sup>37</sup> և 10,270.6 հզր դրամ<sup>38</sup> տրամադրվել է նվիրաբերության պայմանագրով «Հայաստանի համայնքների միություն» ԻԱՄ-ին «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով: 59,617.0 հզր դրամ<sup>39</sup> և 20,000.0 հզր դրամ<sup>40</sup> տրամադրվել է նվիրաբերության պայմանագրով «Երևան» հիմնադրամին «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» տնտեսագիտական հոդվածով:

### **Գյուղատնտեսության նախարարություն**

<sup>36</sup> [ՀՀ կառավարության 03.08.2017թ. թիվ 912-ն որոշմամբ:](#)

<sup>37</sup> [ՀՀ կառավարության 18.11.2016թ. թիվ 1182-ն որոշմամբ](#)

<sup>38</sup> [ՀՀ կառավարության 23.03.2017թ. թիվ 292-ն որոշմամբ:](#)

<sup>39</sup> ՀՀ կառավարության 22.09.2016 թ. թիվ 1017-ն որոշմամբ: Տե՛ս նաև [«ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության 2016 թվականի այն ծրագրերի ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունը, որոնց համար նախարարությանը վերապահված է բյուջեի գլխավոր կարգադրիչի պարտականությունները»:](#)

<sup>40</sup> [ՀՀ կառավարության 28.09.2017 թ. թիվ 1222-ն որոշմամբ:](#)



Իրավիճակի նկարագրություն: ՀՀ ԳՆ-ին ուղարկված հարցման պատասխանում 2016-2017թթ.-ին պետական բյուջեից ֆինանսական աջակցություն ստացած ոչ առևտրային, ոչ պետական կազմակերպությունները նախարարության կողմից ստեղծված պետական հիմնադրամներն են, մասնավորապես, «Գյուղատնտեսության զարգացման» ՀՄԴ-ն, «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» ՀՄԴ-ն, «Անտառների զարգացման և վերականգնման» ՀՄԴ-ն և «Հայաստանի խաղողագործության և գինեգործության» ՀՄԴ-ն: 2016 թ. և 2017 թ. ՀՀ ԳՆ-ն Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման հիմնադրամի կանոնադրական նպատակների իրականացման նպատակով համապատասխանաբար տրամադրել է 3 մլրդ դրամ<sup>41</sup> և 2 մլրդ դրամ<sup>42</sup>: 2016 թ. 44,148.03 հզր. դրամ<sup>43</sup> «Նվիրատվություններ այլ շահույթ չհետապնդող կազմակերպություններին» հոդվածով պահուստային ֆոնդից հատկացում է արվել տարբեր բյուջետային ծրագրերի իրականացման նպատակով: «Հայաստանի խաղողագործության և գինեգործության» ՀՄԴ-ի կանոնադրական հիմնախնդիրների իրականացմանն աջակցելու համար 2016 թ. հատկացվել է 103,500.00 հզր դրամ<sup>44</sup>, իսկ «Հայաստանի խաղողագործության և գինեգործության ՀՄԴ-ին աջակցություն» ծրագրով 2016 թ. և 2017 թ.՝ համապատասխանաբար 108,250.00 հզր դրամ<sup>45</sup> և 94,031.10 հզր դրամ<sup>46</sup>: Այնուհետև, 2017 թ. բյուջեի վերաբաշխմամբ ՀՀ անտառների վերականգնման և զարգացման ՀՄԴ-ի գործադիր մարմնի (վարչակառավարչական ապարատի) պահպանման ծախսերի փոխհատուցման նպատակով հատկացվել է 11886.5 հզր դրամ<sup>47</sup>: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԳՆ-ն 2016 թ. և 2017 թ. ընթացքում մեր հարցման համաձայն համապատասխանաբար ծախսել է 3,25,898.03 հզր. դրամ և 2,105,917.60 հզր դրամ: Նախարարությունից ստացված հարցման պատասխանում որևէ հաշվետվություն չի ներկայացվել կատարված ծախսերի վերաբերյալ: Կայքէջում ևս հաշվետվությունները բացակայում են:

Ըստ նախարարության ներկայացուցչի, ներկայիս վերակազմավորումների արդյունքում նախարարության ՀՄԴ-ներից մի մասը գտնվում են լուծարման եզրին: Նախկինում ՀՄԴ-ները ստեղծվել են հատուկ նպատակային ինչ-որ ծրագրեր իրականացնելու համար, որոնք մշակվել են ըստ նախարարության ռազմավարության և վարվող քաղաքականության: Նախարարության կողմից մի շարք միջոցառումների ու ծրագրերի իրականացումը 2016-2017թթ. պատվիրակվել

<sup>41</sup> [ՀՀ կառավարության 24.03.2016 թ N 328-Ն. որոշման համաձայն:](#)

<sup>42</sup> [ՀՀ կառավարության 20.04.2017 թ. N 438-Ն որոշման համաձայն:](#)

<sup>43</sup> [ՀՀ կառավարության 02.06.2016 թ. N 564-Ն որոշման համաձայն:](#)

<sup>44</sup> [ՀՀ կառավարության 22.12.2016 թ N 1307-Ն որոշման համաձայն:](#)

<sup>45</sup> Նույն որոշմամբ:

<sup>46</sup> [ՀՀ կառավարության 16.06.2017 թ. N 671-Ն որոշման համաձայն:](#)

<sup>47</sup> [ՀՀ կառավարության 23.11.2017 թ. N 1493-Ն որոշման համաձայն:](#)

է պետական ՀՄԴ-ներին կամ ԾԻԳ-երին: ԳՆ-ի հիմնական խոշոր ՀՄԴ-ն, որին պատվիրակվել են ծառայություններ, եղել է Գյուղգարգացման ՀՄԴ-ն, որը գտնվում է լուծարման գործընթացում և արդեն այդ նպատակով հանձնաժողով է ձևավորվել: ՀՄԴ-ն հիմնականում խորհրդատվություններ է մատուցել գյուղատնտեսության ոլորտում: Այն իր մեջ ներառել է նաև նախկինում գյուղատնտեսական նախարարության ոլորտում գոյություն ունեցող ԾԻԳ-երը և դրանց կողմից իրականացվող ծրագրերը: Այսինքն՝ Գյուղգարգացման ՀՄԴ-ն միավորել է բոլոր ԳԱՄԿ-երը՝ համակարգելով և զբաղվելով դրանց աշխատանքների իրականացմամբ: Այժմ ՀՄԴ-ի գործառույթները ամբողջությամբ տեղափոխվել են նախարարություն:

*«Նախկինում այդ ամենն արել է հիմնադրամբ, բայց չգիտեմ, թե մենք ինչքանով կկարողանանք իրականացնել այդ գործառույթները, որովհետև այն իսկապես մեծ պատասխանատվության ծավալ ունի՝ որպես քաղաքային ամբողջ այդ մարզային կենտրոնները ներառել մեր կազմում դժվար է պատկերացնել»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

Նախարարության ներկայացուցչի հաղորդմամբ, 2019 թ. ՀՀ ԳՆ հաստիքակազմը աճելով դարձել է երկու հարյուր հիսուն հաստիք: Եվ նախկինում, որպեսզի նախարարությունը չունենար ուռճացված մեծ հաստիքակազմ, ստեղծվել էին վերոնշյալ ՀՄԴ-ները՝ իրականացվող ծրագրերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով:

Նախարարության աշխատակազմի համար առայժմ պարզ չէ, թե որքանով է օպտիմալացման այս գործընթացը արդյունավետ, քանի որ իրենց գործառույթները մի բազմապատկվել են, իսկ նախարարությունն էլ միավորվում է Տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության հետ և դառնում է Ֆինանսների նախարարություն: Նման անորոշության պայմաններում էլ ՀՄԴ-ների գործառույթները գումարվում են նախարարության գործառույթներին ու հավելյալ նաև կարող են ավելանալ այլ չնախատեսվող խնդիրներ՝ կապված նախարարությունների միավորման հետ: Մյուս կողմից էլ, ՀՄԴ-ների լուծարումը կարող է առաջացնել նաև իրավական և ֆինանսական ռիսկեր, քանի որ դրանց պատվիրակված էին միջազգային վարկային ծրագրեր, որոնք նույնպես հիմա նախարարության պատասխանատվության տակ են գտնվում, մինչդեռ նախարարությունը չունի համապատասխան որակավորում անցած մասնագետներ, ովքեր կկարողանան միջազգային պարատվորություններին համապատասխան հետևել պայմանագրերի կատարմանը:

*«Այն մասնագետները, որոնք զբաղվել են հիմնադրամներում միջազգային պայմանագրերի կնքմամբ, այսօր չկան, իսկ նախարարությունը չունի մասնագիտական այնպիսի ներուժ, որը կկարողանա իրականացնի նման ծրագրեր: Արդյո՞ք իրենց մենք կկարողանանք ներառել մեր աշխատանքներում,*

*որովհետև այդ աշխատողների աշխատավարձերը գաղտնիք չէ, որ շատ բարձր են, իսկ նախարարությունում ցածր են աշխատավարձերը»:*

(Նախարարության ներկայացուցիչ)

### **Պաշտպանության նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: Պաշտպանության նախարարությունը մեր ուղարկած հարցումներին առհասարակ չի պատասխանել<sup>48</sup>: Նշենք, որ անպատասխան էր մնացել նաև «Ինֆորմացիայի ազատության կենտրոնի» 2018թ. սեպտեմբերի 11-ին նույնատիպ [հարցումը](#)՝ 2017-2018թթ նախարարության կողմից տրամադրված նվիրատվությունների և նվիրաբերությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու համար: Մինչդեռ, բյուջեի կատարողական հաշվետվությունում երևում է, որ 2017 թ. *նախագորակոչային թվակազմից ՀՀ ՁՈԻ համար վարորդների պատրաստման* ծրագիրը իրականացվել է Պաշտպանամարզատեխնիկական ՀԿ-ի կողմից, որին հատկացվել է 44,8 միլիոն դրամ: Վերջինս մասնագիտացված է ՀՀ ՁՈԻ համար ռազմական մասնագետների պատրաստման և տեխնիկական ձևերի զարգացման ուղղությամբ<sup>49</sup>: ՀԿ-ի վերաբերյալ հնարավոր եղավ Համացանցից պարզել, որ ամբողջական անվանումը [«Պաշտպանամարզատեխնիկական /ՊՄՏ/ օդանավորողների և տիեզերագնացների դպրոց ՀԿ է, որի նախագահը գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանն է:](#)

Հետազոտությանը մասնակցած ՔՀԿ ներկայացուցիչներից մի քանիսը ևս նշեցին, որ տարբեր ծրագրերի շրջանակներում համագործակցել են նախարարության հետ, մասնավորապես, «Պատիվ ունեմ» այլընտրանքային զինձառայության ծրագրերի շրջանակներում մատուցվել էին խորհրդատվական ծառայություններ:

### **Մշակույթի նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: Մշտադիտարկման ընթացքում հեռախոսազանգով կապ է հաստատվել ՀՀ ՄՆ-ի տարբեր վարչությունների հետ, սակայն մասնագետների մեծ մասը հրաժարվում էր պատասխանել կամ հեռախոսահամարները զբաղված էին: Նախարարությունում հնարավոր չէրավ որևէ մեկի հետ դեմ առ դեմ հարցազրույց իրականացնել: Բոլորը ուղղորդում էին մեկ այլ բաժին: Մասնավորապես, փորձել ենք կապ հաստատել հարցման պատասխանում նշված կոնտակտային անձի հետ, ով այնուհետև ուղղորդել է մեկ այլ աշխատակցի: Արդյունքում՝ շրթայական զրույցներով ու փոխանցվող հեռախոսահամարներով որևէ աշխատակից չգտնվեց, ով հստակ կներկայացներ և

<sup>48</sup> Տե՛ս նաև [Ինֆորմացիայի ազատության կենտրոնի հարցման արդյունքը](#):

<sup>49</sup> [Զինկոմիսարիատները՝ բանակ-հասարակություն կապի կարևորագույն օղակ:](#) «Ավանգարդ» թերթի էլեկտրոնային տարբերակ: Դիտվել է 25.03.2019 թ.

կատարողներ, թե դրամաշնորհային մրցույթների անցկացման համար նախարարությունում ինչպիսի ընթացակարգեր են գործում: Սակայն, գրույցների ընթացքում աշխատակիցները հայտնեցին, որ յուրաքանչյուր վարչություն ինքն է որոշում, թե որ կազմակերպությանը ինչ գումար պետք է տրամադրի ու ինչ պայմանագիր կնքի նրանց հետ՝ իրականացվելիք բյուջետային ծրագրերի և նպատակների առանձնահատկություններով պայմանավորված: Ծրագրերի ընթացիկ գնահատումն ու վերահսկողությունը ևս իրականացվում է ըստ վարչությունների: Ըստ աշխատակիցների՝ նախարարությունն ունի նաև հաշվետվության ձևանմուշներ, որոնք հնարավոր չեղավ գտնել պաշտոնական կայքէջում<sup>50</sup>:

Մշակույթի նախարարության կողմից 2016-2017թթ. տրամադրվող դրամաշնորհները չեն եղել մրցութային կարգով: ՔՀԿ-ների հավաստմամբ դրամաշնորհների տրամադրման կարգը շատ խճճված ու բարդ էր, քանի որ կարիք էր առաջանում բազմաթիվ զանգերի միջոցով ճշտելու հայտադիմումների լրացման կարգը: Բացի այդ, շատ հաճախ հնարավոր չի եղել կապ հաստատել նախարարության հետ և ստանալ սպառիչ պատասխաններ: Մյուս կողմից էլ, ըստ ֆինանսական աջակցություն ստացած կառույցների, ոչ միայն ընթացակարգերն են բարդ եղել, այլև հասկանալի չի եղել, թե ինչպես են ձևավորվում հանձնաժողովները, որոնք քննել ու գնահատել են յուրաքանչյուր կազմակերպության հայտը: Այդ առումով շատ ՔՀԿ ներկայացուցիչների կարծիքով իրենց ներկայացրած հայտի մերժումը ոչ միայն հիմնավորված ու պատճառաբանված չի եղել, այլև ներկայացված ծրագրերի գնահատման համար նախարարությունը չի ունեցել որոշակի գերակայություններ և ռազմավարություն, որպեսզի իր ծառայությունների ու միջոցառումների անցկացումը պատվիրակեր ՔՀԿ-ներին:

Մշակութային միությունների և ՀԿ-ների հետ ունեցած հեռախոսային հարցումների համաձայն՝ 2019 թ. մրցութային կարգով դրամաշնորհների տրամադրումը իրենց գործունեության համար բազմաթիվ ռիսկեր է պարունակում: Նախ, խնդիր է առաջանում այն ՔՀԿ-ների աշխատանքներում, որոնք պարբերաբար ֆինանսավորում են ստացել որոշակի մշակութային միջոցառումների, փառատոնների, համերգներ կազմակերպման ու անցկացման համար, քանի որ հիմա իրենցից շատերը մերժվում են, կրկին առանց որևէ հիմնավորման, և պարզ չէ, թե այն միջոցառումը, որը երկար տարիներ իրականացվել է, ինչպես պետք է ֆինանսավորում գտնի այլ աղբյուրներից:

---

<sup>50</sup> \* Կայքում հաշվետվությունները միայն նկարագրական ու ֆինանսական բաղադրիչներով էին ներկայացված: Բացակայում էին առանձին կազմակերպությունների կողմից ծրագրերի իրականացման վերաբերյալ հաշվետվությունները:

Նախարարությունում ցածր է նաև դրամաշնորհային մրցույթների ավտոմատացման մակարդակը (փաստաթղթաշրջանառությունը էլեկտրոնային համակարգով չէ), այսինքն՝ մի կողմից պահանջվող փաստաթղթերն են շատ, մյուս կողմից էլ՝ անորոշ են դրանց ներկայացման ընթացակարգերը: Որևէ մասնագետ կամ ստորաբաժանում չկա, որը զբաղվում է ՔՀԿ-ների հետ հաղորդակցության ապահովմամբ և կարող է կապող օղակ հանդիսանալ նախարարության և ՔՀԿ-ների միջև:

Նախարարությունը ճկուն չէ դրամաշնորհային փաթեթները պատրաստելիս և տարբեր ստորաբաժանումներ միմյանց հետ մասնակցային ու համակցված չեն աշխատում: Ընդհանուր աշխատանքը բաժանված է ըստ տարբեր բաժինների, և յուրաքանչյուրն անկախ մյուսից կատարում է իր աշխատանքը, արդյունքում որևէ անձ այդ ողջ գործընթացում պատասխանատու և հաշվետու չի լինում որևէ խնդրի համար, բացի այդ տեղեկատվությունը միմյանց մեծ դժվարությամբ է փոխանցվում: Հետագոտությանը մասնակցած շատ ՔՀԿ-ների կարծիքով այստեղ դրամաշնորհային մրցույթի անցկացման ընթացքը քառտիկ է և կարգավորման կարիք ունի: Բացի այդ, դրամաշնորհային մրցույթների անցկացման և կառավարման վերաբերյալ նախարարության ներկայացուցիչների հմտություններն ու գիտելիքները ցածր են, ինչի համար պետք է վերապատրաստումներ կամ փորձի փոխանակումներ իրականացնել այդ ոլորտում արհեստավարժ մասնագետների ներգրավմամբ:

ՄՆ-ն նաև 2017 թ. բյուջեում ուշագրավ արդյունքներ ունի Քաղաքացիական հասարակության տեղեկացվածության և հաղորդակցման բարձրացման նպատակով, մասնավորապես այս նպատակը ամրագրված է մի շարք ծրագրերի վերջնարդյունքներում (տե՛ս աղյուսակ 10-ում):

Աղյուսակ 10. ՀՀ ՄՆ 2017 թ. բյուջեում ՔՀՀ-ի իրագեկման համար նախատեսված միջոցառումներ

N	Ծրագրի անվանումը	Վերջնական արդյունքի նկարագրությունը	Փաստացի ծախսերը, հազ. դրամ	Կատարման %-ը
1	Կինեմատոգրաֆիայի ծրագիր	Քաղաքացիական հասարակության տեղեկացվածության և հաղորդակցման բարձրացում կինոարվեստում	660,359.60	100,00
2	Արվեստի պահպանման և զարգացման ծրագիր	Քաղաքացիական հասարակության տեղեկացվածության և հաղորդակցման բարձրացում արվեստի ոլորտում	6,135,826.96	99.88
			2,124.85	42.50
			109,784.00	100.00
			15,000.00	100.00

Նախարարությունը նաև համագործակցում է մի շարք ՄՊԸ-ների և ՓԲԸ-ների հետ, օրինակ հրատարակչական աշխատանքների, տպագրության, տեղեկատվության արխիվացման, միջոցառումների կազմակերպման և այլ նպատակներով:

Առաջարկներ և պարզաբանումներ:

- Նախարարությունում, քանի որ այս տարի նոր են մտցվել դրամաշնորհային մրցույթի ընթացակարգերը, աշխատակիցներից շատերը չեն տիրապետում դրամաշնորհների կառավարման և մրցույթների անցկացման հմտություններին:
- Մրցույթի ընթացքում առաջացել են բազմաթիվ տեխնիկական խնդիրներ, որոնք կապված են եղել փաստաթղթերի հավաքման և լրացման հետ:
- Նախարարությունը պետք է գործընկերային մշակույթ ձևավորի ՔՀԿ-ների հետ արդյունավետ աշխատելու համար:
- ՔՀԿ ներկայացուցիչների հետ պարբերաբար հանդիպում-քննարկումներ պետք է անցկացվեն, որպեսզի փորձի փոխանակման միջոցով դրամաշնորհային մրցույթների կազմակերպման հմտություններ ձևավորվեն:
- Հեշտացնել և հստակեցնել դրամաշնորհային մրցույթների ընթացակարգերը, հայտարարությունները պատրաստել երկար վերջնաժամկետով և տարածել դրանք տեղեկատվական տարբեր հարթակների միջոցով՝ հասանելի դարձնելով այն շահառու կառույցների համար:

**Սպորտի և երիտասարդության հարցերի նախարարություն**

Իրավիճակի նկարագրություն: ՀՀ ՄԵՀՆ-ում 2017 թ. նախարարության կողմից դրամաշնորհներին ՔՀԿ ներկայացուցիչները դիմել են [cragrer.am](http://cragrer.am) առցանց համակարգով: 2018 թ. կեսերից համակարգը փոփոխվել է և անցում է կատարվել դրամաշնորհների տրամադրման հին կարգին, որը փորձագետների և ոլորտի մասնագետների կարծիքով ետնթաց է՝ հաշվի առնելով գործող կարգի անարդյունավետությունն ու արդիականացման հետ կապված խնդիրները: Դրամաշնորհային նախկին համակարգը երկրում միակ տեխնոլոգիական առումով ավտոմատացված համակարգն էր: Համակարգի առավելություններից մեկն այն էր, որ այն անձնավորված չէր, դիմումատուներն ու գնահատող հանձնաժողովի անդամները միմյանց չէին տեսնում, նվազեցված էին անձի գործոնն ու դեմ առ դեմ շփումները:

Շատերի կարծիքով ՄԵՀՆ դրամաշնորհների տրամադրման առցանց համակարգը նվազեցրել էր ոլորտում կոռուպցիոն ռիսկերի հնարավորություններն

ու առավել թափանցիկ դարձրել պետական բյուջեից ֆինանսական միջոցների տրամադրման գործընթացը: Նման թափանցիկ ընթացակարգեր ունենալու անհրաժեշտությունն ըստ փորձագետների կապված էր նախարարությունում որոշում կայացնողների պատրաստակամությամբ: Մինչ առցանց համակարգը, ինչպես և մյուս նախարարություններում, պետական միջոցների տրամադրումը կամայականությունների տեղիք է տվել և առաջացրել կոռուպցիոն սխեմաներ, որոնց բացառման համար էլ մշակվել է նման առցանց համակարգ:

Այն ներդնելու համար մասնագետների կողմից ուսումնասիրվել են Եվրամիության «Երիտասարդները շարժունության մեջ»<sup>51</sup> դրամաշնորհային ծրագրերի ընթացակարգերն ու հայտադիմումի ձևերը: Վերջիններս համարվել են նախատիպ, իսկ առցանց համակարգը հարմարեցվել է մեր իրականությանը և դարձել է յուրահատուկ գործիք, որի միջոցով հնարավոր եղավ մի քանի տարի կանոնակարգել նախարարության կողմից դրամաշնորհների տրամադրման գործընթացը: Առցանց համակարգը՝ որպես յուրահատուկ արդիականացված գործիք, նույնիսկ ներկայացվել է միջազգային հարթակներում, մասնավորապես Եվրոպական խորհրդում: Հիմնական գերիսնդիրը, որը հնարավոր էր լինում լուծել համակարգի միջոցով՝ փաստաթղթաշրջանառությունը կանոնակարգելու և էլեկտրոնային դարձելու հարցն էր: Բացի այդ, թվային առցանց համակարգը հեշտացնում էր մարզային ՔՀԿ-ների մասնակցությունը դրամաշնորհային մրցույթներին, քանի որ հեռավար կարգով նրանց համար ևս հնարավորություն էր ստեղծում ներկայացնելու դիմումն ու անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթը:

Նկարագրված առցանց համակարգով 2016-2017թթ. նախարարության կողմից դրամաշնորհների տրամադրման կարգը ունեցել է հստակ չափորոշիչներ, որով գնահատվել են ներկայացված հայտադիմումները: Բացի այդ, գոյություն է ունեցել անկախ փորձաքննություն և յուրաքանչյուր հայտ գնահատվել է երեք անկախ փորձագետների կողմից: Այսպիսով՝ ստեղծված է եղել նաև փորձագիտական մեծ թիմ, որը հնարավոր չէր ուղղորդել, կառավարել և միջնորդավորված կոռուպցիոն մեխանիզմների դաշտ ստեղծել: Փորձագետների գրանցումը ևս տեղի է ունեցել անկախ, այսինքն՝ փորձագետները, ընտրելով այն ոլորտները, որոնցում իրենք կարող էին կատարել փորձագիտական աշխատանք և գնահատել ծրագրային առաջարկները, համապատասխան հիմնավորումներ են ներկայացրել իրենց ինքնակենսագրականի կամ այլ փաստաթղթերի տեսքով: Այնուհետև, որպեսզի բոլոր փորձագետներն ունենային միևնույն տեսլականն ու ընթացակարգերի վերաբերյալ համանման պատկերացումներ, անցել են մի շարք վերապատրաստումներ: Վերջնական փուլում արդեն քննություն են հանձնել, պարզելու համար տվյալ ոլորտի նրանց գիտելիքները, հմտություններն ու փորձագիտական ներուժը:

<sup>51</sup> [«Երիտասարդները շարժունության մեջ». անգլերեն լեզով:](#)

Փորձագետների հավաստմամբ համակարգը չնայած որոշակի առումով լուծել էր դրամաշնորհների տրամադրման ընթացակարգերի թափանցիկության ու հասանելիության խնդիրը, սակայն հաշվետվողականությունն այդպես էլ բավարար հիմքերի վրա դրված չի եղել: Ըստ փորձագետների, ծրագրի մշակման նախնական փուլում որոշված է եղել ՔՀԿ-ների կողմից իրականացրած ծրագրերի հաշվետվությունները հասանելի դարձնել առցանց տարբերակով, սակայն հընթացս այդ որոշումը չեղարկվել է՝ ծրագրերում առկա ֆինանսական թերությունները բացահայտելու և դրանք պարզորոշ ներկայացնելու մեջ մեծ ռիսկեր տեսնելու պատճառով:

Համակարգը գործել է բավականին երկար և դրա արդյունավետության բարձրացման նպատակով ահռելի աշխատանք է տարվել, հետևաբար հետազոտությանը մասնակցած շատ ՔՀԿ ներկայացուցիչներ գտնում են, որ մյուս նախարարությունները ևս պետք է անցնեն այդ համակարգով դրամաշնորհներ տրամադրելու կարգին՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ հենց մեր իրականությունում է այն փորձարկվել և արդեն հայտնի են դրանում առկա թերություններն ու առավելությունները:

Առցանց դրամաշնորհային համակարգով մրցույթին մասնակցող ՔՀԿ ներկայացուցիչների համար մշակվել են հատուկ ուղեցույցներ, որտեղ ներկայացվել են դրամաշնորհին դիմելու համար անհրաժեշտ տեխնիկական ու բովանդակային քայլերը: Նույնիսկ մերժում ստացած ՔՀԿ-ներն առանձին իրազեկվել են, թե ինչ խնդիրներ են ունեցել, և ինչպես կարող են դրանք շտկել հաջորդ մրցույթին մասնակցելիս:

Սակայն, առցանց համակարգն աշխատել է միայն երիտասարդական ծրագրերի ֆինանսավորման համար, իսկ ՄՀԿ-ները ֆինանսական աջակցություն ստացել են սպորտի քաղաքականության վարչությունից: ՄՀԿ-ների պարագայում պետությունը որոշակի պարտավորություն ունի նրանց գործունեությունը ֆինանսապես ապահովելու համար: ՄՀԿ-ների հետ ունեցած հեռախոսային զրույցների ընթացքում պարզ դարձավ, որ նրանք հիմնականում ուղղակի ֆինանսական հատկացում են ստանում նախարարությունից, որն ամրագրվում է յուրաքանչյուր տարի ՀՀ բյուջեի մասին օրենքում<sup>52</sup>: Ի տարբերություն այլ կառույցների՝ վերջին տարիներին ՄՀԿ-ները նկատել են իրենց տրամադրվող ֆինանսական միջոցների աճ նախորդ տարիների համեմատությամբ:


Այսպիսով ՄԵՀՆ-ն ֆինանսավորում է երկու էականորեն տարբեր ոլորտներ, որոնցից յուրաքանչյուրն իր յուրահատկություններն ու առանձնահատկություններն ունի: Մասնավորապես, ՄՀԿ-ները հարցման ընթացքում նշել են, որ իրենց ֆինանսավորումը հիմնականում վերջին

<sup>52</sup> Տե՛ս օրինակ «2019 թ. բյուջեի մասին օրենք»-ի «Պետական աջակցություն ազգային փոքրամասնությունների հասարակական կազմակերպություններին» 1200 տողը:




տարիներին աճել է, ինչուս իսկապես կարելի է համոզվել, դիտարկելով 2016, 2017, 2018, 2019 թթ. բյուջեի մասին օրենքներն ուսումնասիրելով (Գծապատկեր 9):

**Գծապատկեր 9. 2016-2019թթ. բյուջետային ծրագրերում մարզական հասարակական կազմակերպություններին ծրագրված ֆինանսական հատկացումների չափը (հզր դրամ)**



Ի հեճուկս ՄՀԿ-ների, ԵՀԿ-ների կարծիքով երիտասարդական ծրագրերի անցկացման նպատակով ֆինանսական միջոցները վերջին տարիներին էականորեն նվազել են, որը կրկին կարելի է տեսնել բյուջեի բաշխման տվյալներից (Գծապատկեր 10):

**Գծապատկեր 10. 2016-2019թթ. բյուջետային ծրագրերում երիտասարդական հասարակական կազմակերպություններին ծրագրված ֆինանսական հատկացումների չափը (հզր դրամ)**



Հետազոտության մասնակիցները, առցանց հարցման ընթացքում նաև նշել են, որ ՄԵՀՆ-ի կողմից տրամադրվող դրամաշնորհները պարբերաբար ստացել են

միննույն կազմակերպությունները, որը պարզելու նպատակով համեմատենք 2016-2017թթ. դրամաշնորհներ ստացած կառույցները: 2016 թ. ՄԵՀՆ-ն 39 դրամաշնորհ է տրամադրել տարբեր ՔՀԿ-ների, իսկ 2017 թ.-ին՝ 33-ի, որոնցից շատերը կրկնվում են. աղյուսակ 14-ից կարելի է տեսնել, որ 19 կազմակերպություն երկու տարիների ընթացքում 2 և ավելի անգամ դրամաշնորհ է ստացել ՄԵՀԿ-ից, իսկ որոշ դեպքերում ծրագրերը կրկնվել են: Մասնավորապես, 2016 թ.ին՝ 33895010 դրամ, 2017 թ.-ին՝ 26118370 դրամ հատկացվել է կրկնվող կազմակերպություններին, իսկ դրամաշնորհների ընդհանուր բյուջեն 2016 թ.-ին եղել է 50250802 դրամ, իսկ 2017 թ.-ին՝ 49489465 դրամ (տե՛ս աղյուսակ 14):

Այդուհանդերձ, 2018 թ. փոխնախարարը կասեցրեց դրամաշնորհների տրամադրման առցանց համակարգը, պատճառաբանությամբ, որ այն կարծես թե օրենքի պահանջներով չի իրականացվել: Այսինքն՝ առաջացել են անհամապատասխանություններ կառավարության 1937-Ն որոշման հետ ՀԿ-ներին դրամաշնորհների տրամադրման կարգի վերաբերյալ: Որոշման մեջ հստակ նշված է, թե ինչպես պետք է անցկացվեն դրամաշնորհային մրցույթները, մասնավորապես պետք է կազմվի հանձնաժողով պետական գերատեսչությունների ներկայացուցիչներից, մինչդեռ [cragrer.am](http://cragrer.am) կայքում մրցույթների գնահատման հանձնաժողովը ոչ թե գերատեսչության անդամներից է կազմվել, այլ փորձագետներից:

#### Առաջարկներ և պարզաբանումներ:

- 2018 թ.-ից անցում է կատարվել դրամաշնորհների տրամադրման առավել հին ընթացակարգի, որը չի ապահովում ՔՀԿ-ների համար թափանցիկ և հասանելի միջավայր պետական բյուջեից տրամադրվող դրամաշնորհային մրցույթներին մասնակցելու համար:
- Առցանց դրամաշնորհային համակարգն այդքան էլ դյուրին չէր ըստ ՔՀԿ ներկայացուցիչների: Համակարգի հետ աշխատելիս տեխնիկական խնդիրներ են առաջացել:

*«Նախ տեղեկատվության պահպանելու համար, առցանց համակարգը այդքան էլ ճիշտ չէ, քանի որ կենդանի փաստաթղթերի հետ պետք է գործ ունենաս ու քո թիմը պետք է աշխատի տարբեր տեղերից: Ավելի հարմար է լինում գուզլ դրայվով համատեղ աշխատել: Բացի դրանից էլեկտրոնային համակարգը ունենում էր խափանումներ: Մանավանդ մեր իրականությունը հաշվի առնելով, երբ բոլորը վերջին պահին են փորձում լրացնել հայտը, որ եթե մի 100 հոգի լրացնում է միաժամանակ, սերվերը ծանրաբեռնվում է և խնդիր է առաջանում»:*

(Փորձագետ)

- ՔՀԿ ներկայացուցիչները, չնայած բարձր էին գնահատում համակարգի նորարարությունն ու թափանցիկությունը, բայց նայնպես անընդհատ մատնանշում էին համակարգում տեղ գտած տեխնիկական խնդիրների մասին:

*«Չնայած առցանց դրամաշնորհային համակարգը մրցունակ էր նույնիսկ շատ եվրոպական երկրների համեմատությամբ, բայց համակարգում կային նաև շատ թերություններ ու այնպես չէր, որ իդեալական համակարգ էր: Իր բյուրոկրատական թղթաբանությունը բավականին բարդ էր ու ստեղծվել էր այնպիսի իրավիճակ, թեպետ ամեն ինչ գրված էր ուղեցույցներում, նույն գնահատման չափանիշներն էլ կային, բայց եռամսյակին մրցույթին դիմում էին մի 20 կազմակերպություններ ու 20-ից առնվազն 10-ը մերժվում էին տեխնիկական չափանիշներից ելնելով: Մնում էր մի տաս հայտ ու դրանից մի 8-9-ը ֆինանսավորվում էր: Համարյա ստացվում էր, որ դու եթե առաջին պատնեշը հաղթահարում ես, հաջորդիվ դու ֆինանսավորվում ես»:*

(ՖԽՔ մասնակից)

*«Առցանց դիմելուց բացի էնտեղ պայման կար, որ դիմումը պետք է տպվեր թղթային տարբերակով երկու օրինակից ու ողջ փաթեթով հանձնվեր նախարարություն, ինչն, ըստ իս, ոչ միայն բնապահպանական առումով էր սխալ, որ առցանց դիմում ես ու թղթային տարբերակով ես նաև հանձնում դիմումը, այլև դժվար էր նախարարություն հասցնելու առումով, քանի որ կար հստակ վերջնաժամկետ»:*

(ՖԽՔ մասնակից)

- Գնումների մասին ՀՀ օրենքը երիտասարդական միջոցառումների և ծրագրերի անցկացման համար բազմաթիվ դժվարություններ և խնդիրներ է առաջացնում ըստ ՔՀԿ ներկայացուցիչների: Ոչ միայն այն պատճառով, որ գնառաջարկի համար փաստաթղթեր են ներկայացնում, այլև այն, որ ժամկետների առումով եղել են դեպքեր, որ ֆինանսական աջակցությունը տրամադրվել է ավելի ուշ, սակայն հաշվետվությունները ներկայացնելու համար ժամկետները ուշացնելիս առաջանում են տույժեր ու տուգանքներ:
- Գնումների գործընթացը պետք է պարզեցվի երիտասարդական ոլորտի ծրագրերի իրականացման համար, քանի որ նախապես հնարավոր չէ կանխատեսել, թե ծրագրի իրականացման ընթացքում ինչ խոչընդոտներ կարող են առաջանալ, որոնց ֆինանսական բաղադրիչը նախապես գնահատված չի եղել:
- ՄԵՀՆ-ի կողմից դրամաշնորհների տրամադրման առցանց համակարգը, մի քանի տարի փորձարկվելով, կենսունակ մեխանիզմներ է մշակել, որով հնարավոր է որոշակի չափով նվազեցնել կոռուպցիոն հնարավոր

սխեմաների առաջացումը, հետևաբար այս կարգով կարող են անցկացվել նաև մյուս նախարարությունների դրամաշնորհային մրցույթները: Համակարգն արդեն բավարար չափի մշակված է, ունի հայտադիմումի ձև, առանձնացված են հստակ չափորոշիչներ և արտաքին ձևավորում, ինչպես նաև գնահատման ու փորձաքննության համար անհրաժեշտ գործիքակազմ:

*«Օրինակ՝ Եվրախորհրդի երիտասարդական բաժինն ունի իդեալական կառուցվածք, երբ երիտասարդների հետ առնչվող ցանկացած որոշում կայացվում է համատեղ, այսինքն՝ երիտասարդները և հենց պաշտոնյաները երկխոսում են միմյանց հետ ու երիտասարդական հատվածը ընտրովի է, մի մասն էլ նշանակովի է: Ու այդ հատվածին ընտրում է ամբողջ Եվրոպայից երիտասարդական խորհուրդները ու միջազգային երիտասարդական կազմակերպությունները: Կոնկրետ ես նույնպես կցանկանամ, որ խորհուրդները լինեն ընտրովի, քվեարկեն ու գուցե դա մրցակցություն առաջացնի ոլորտում»:*


(ՖԽՔ մասնակից)

- Անհրաժեշտ է մշակել երիտասարդական քաղաքականություն, որտեղ կամրագրվեն երիտասարդական խորհուրդների գործունեության, երիտասարդական աշխատողների և երիտասարդական աշխատանքի հնարավոր բոլոր առանձնահատկություններն ու զարգացման ռազմավարական ուղղությունները:
- Կոռուպցիոն ռիսկերի առկայության պատճառով բոլոր նախարարությունները չեն ներդնում առցանց դրամաշնորհային համակարգ և չեն կանոնակարգում ոլորտն այնպիսի ընթացակարգերով, որոնք կդարձնեն պետական բյուջեից դրամաշնորհների հատկացումը ավելի թափանցիկ և հասանելի բոլոր ՔՀԿ-ների համար:


## Առցանց հարցման տվյալների վերլուծություն


Առցանց հարցում նախարարություններից 2016-2017թթ. ֆինանսական աջակցություն ստացած կառույցների շրջանում (n=76)

Գծապատկեր 11. Հարցված ՔՀԿ-ների բաշխումն ըստ վերջին երեք տարիներին (2016 թ., 2017 թ., 2018 թ.) նախարարություններից ստացած դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվության կամ ֆինանսական այլ տիպի աջակցության քանակի (մեկ ՔՀԿ հաշվով)




Գծապատկեր 12. 2017թ. և/կամ 2016թ. նախարարություններից դրամաշնորհ, սուբսիդիա, նվիրատվություն կամ ֆինանսական այլ հատկացում ստացած ՔՀԿ-ների բաշխումն ըստ նախարարությունների և ֆինանսական հատկացման տեսակի (ՔՀԿ-ների թիվ)







Գծապատկեր 14. Նախարարությունների կողմից ֆինանսական աջակցություն ստացած ՔՀԿ-ների կարծիքը վերջին երեք տարիների ընթացքում տրամադրվող աջակցության ծավալների փոփոխության մասին (n=76, տոկոս ամբողջի մեջ)



Գծապատկեր 15. Նախարարությունների կողմից 2016-2017թթ.-ին ՔՀԿ-ներին տրամադրված դրամաշնորհների, սուբսիդիաների, նվիրատվությունների ու պատվիրակված ծառայությունների մատուցման համար առկա օրենսդրական հիմքերի գնահատականը (n=76, տոկոս ամբողջի մեջ)




Գծապատկեր 16. Նախարարություններն ունեն հատուկ կրթված մասնագետներ ոչ պետական, ոչ առևտրային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ աշխատելու համար (n=76, տոկոս ամբողջի մեջ)



**Առցանց հարցում այլ ՔՀԿ ներկայացուցիչների (n=84) շրջանում**


Գծապատկեր 17. ՀՀ տարբեր նախարարությունների կողմից դրամաշնորհային մրցույթների անցկացման մասին իրազեկվածությունը (n=84, տոկոս ամբողջի մեջ)

Գծապատկեր 18. Նախարարությունների կողմից տրամադրվող դրամաշնորհային մրցույթներին ՔՀԿ-ների չմասնակցելու պատճառները (n=84, տոկոս ամբողջի մեջ)







Գծապատկեր 19. Ձեր գործունեության ընթացքում ո՞ր նախարարությունների հետ եք առնչվել կամ առնչվում (n=81)



Գծապատկեր 20. Նախարարությունների և քաղհասարակության կազմակերպությունների միջև հաղորդակցության արդյունավետության գնահատականը (n=84, տոկոս ամբողջի մեջ)



Գծապատկեր 21. Նախարարությունների կողմից ՔՀԿ-ներին ֆինանսական հատկացումներ տրամադրելու մրցույթային գործընթացի տարբեր տարրերի գնահատականը (n=84, 0-5 բալլ)



Աղյուսակ 11. Առցանց հարցումների արդյունքում ստացված առաջարկությունների հաճախությունը (անգամ)

ԱՌԱՋԱՐԿՆԵՐ	ԿՐԿՆՎՈՂ (անգամ)
Պարզեցնել դրամաշնորհային մրցույթների ընթացակարգերը, նվազեցնել թղթաբանությունը	15
Պարզեցնել գնումների վերաբերյալ փաստաթղթահավաքությունը, գնառաջարկները ներկայացնել դրամաշնորհ ստանալու դեպքում	11
Պետական մարմինների աշխատանքն ու տրամադրվող ֆինանսական միջոցների ընթացակարգերը դարձնել ամբողջությամբ թափանցիկ, մատչելի և հաշվետու	11
Արագ արձագանքել, բարելավել հետադարձ կապի ապահովման և հաղորդակցության միջոցները	10
Ստեղծել առողջ մրցակցություն մրցույթներ իրականացնելիս՝ արդար և մատչելի ընթացակարգերով, քանի որ նախարարություններն աշխատում են միայն իրենց ծանոթ ՔՀԿ-ների հետ և ՔՀԿ-ների վստահությունը նվազել է	10
Թվայնացնել և ավտոմատացնել դրամաշնորհային մրցույթների անցկացումը՝ մարդու սուբյեկտիվ միջամտության առավելագույն նվազեցմամբ	9
Մեծացնել ՔՀԿ-ների ֆինանսական աջակցության ծավալները, որը կվերացնի ՔՀԿ-ների կախվածությունը արտաքին ֆինանսական աղբյուրներից	8
Քննարկումների և երկխոսության հնարավորություններ ստեղծել ՔՀԿ-ների և պետական մարմինների միջև դրամաշնորհային մրցույթների անցկացման ընթացակարգերի և առնչվող այլ հարցերի վերաբերյալ	7
Աջակցել դիմումատուներին դրամաշնորհային մրցույթների փաթեթները լրացնելու և մրցույթին դիմելու համար նախարարության պատասխանատու անձանց միջոցով, ովքեր կմասնագիտանան այդ ոլորտում	6
Հանրային լայն իրազեկում կատարել մարզերում և այլ բնակավայրերում՝ պետական դրամաշնորհային մրցույթների վերաբերյալ	6
Երկարատև և բարձր կարևորության ծրագրերի համար նախատեսել երկարաժամկետ ֆինանսավորում, հաշվի առնել ՔՀԿ-ի փորձառությունը, ստեղծած արժեքն ու գործունեության կարևորությունը	5
Հստակեցնել ՔՀԿ-ների և պետական մարմինների համագործակցության օրենսդրական դաշտն ու կարգավորումները	5
Դրամաշնորհային ծրագրերը գնահատել և ֆինանսավորել ըստ ծրագրի կարևորության և հեռանկարների՝ որոշ ծրագրերի համար իրականացնելով նպատակային ֆինանսավորում առանց մրցույթի	5
Սակագների և գնացուցակների սահմանափակումների վերանայում և համապատասխանեցում երկրում գործող իրական գներին՝ հաշվի առնելով նաև մարզերում առկա իրավիճակը (խանութների, կրպակների են)	5
Ամրապնդել և ընդլայնել պետական ծրագրերում ՔՀԿ-ների մասնակցությունն ու դերը	4
Վերապատրաստել նախարարությունների աշխատակիցներին և համարել որակյալ կադրերով	4
Առցանց հաշվետվությունների համակարգի ստեղծում և դրանց թվայնացում՝ տեսանելի դարձնելով դրանք բոլորի համար	3
Վերանայել ՔՀԿ-ների հարկային պարտավորությունները ԱԱՀ-ի և դրույքաչափերի սահմանման մասով	3
Նախարարություններում ՀԿ-ների տվյալների բազաների ստեղծում և իրազեկում էլ. փոստերով (եթե կան, ապա դրանք չեն կիրառվում մրցույթներ հայտարարելիս)	3
Կառավարությունում կենտրոնացնել և ստեղծել ՔՀԿ-երի հետ աշխատող մեկ ընդհանուր կառույց	3
Համապատասխանեցնել ծրագրերի, ծառայությունների մատուցման կամ միջոցառումների անցկացման և ֆինանսավորման ժամանակացույցերը	3
Հայտերի մերժումները հիմնավորել	3
Մարզերի ՔՀԿ-ներին իրազեկել դրամաշնորհային մրցույթների մասին և տեղեկատվությունը հասանելի դարձնել նրանց համար	3
Ֆինանսական նախահաշիվների հաստատման/մերժման համար հրավիրել մասնագիտական հանձնաժողով	2
Փոքր դրամաշնորհներն ազատել գնումների օրենքի պարտավորություններից	2
Ուղղակի ֆինանսավորվող և մրցութային եղանակով ֆինանսավորվող ծրագրերի հստակ	2

տարանջատում	
Պատվիրակվող ծառայությունների շրջանակներում ՔՀԿ-ների հետ համագործակցության ընդլայնում՝ սահմանված առաջնահերթությունների շրջանակներում	2
Վերականգնել ՍԵՀՆ-ի առաջանց դրամաշնորհային համակարգը	2
Համակարգային փոփոխություններ իրականացնել ոլորտի արդիականացման նպատակով	2
